

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՄԱՐԳԱՐԻՏԱ ԱՐԱՄԻ

ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝ ի.գ.դ.,
պրոֆեսոր Ա.Հ. Երիցյան

ԵՐԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ 1. ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԷՎՈԼՈՒՑԻԱՆ.....	14
1.1. Անձի արժանապատվության տեսական-իրավական բովանդակությունն ու կառուցվածքը.....	14
1.2. Արժանապատվության և պատվի հարաբերակցությունը իրավունքի ու բարոյականության համատեքստում	24
1.3. Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների ու ազատությունների հիմք և մարդկային հատկանիշ	33
ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....	68
2.1. Անձի արժանապատվության ամրագրման սահմանադրական մոդելները արտասահմանյան երկրներում	68
2.2. Մարդու արժանապատվության պաշտպանության միջազգային իրավական երաշխիքները	89
2.3. Մարդու արժանապատվության վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի հայեցակարգային մոտեցումները	100
ԳԼՈՒԽ 3. ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....	108
3.1. Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական առանձնահատկությունները և զարգացումները սահմանադրական բարեփոխումների համատեքստում	108
3.2. Մարդու արժանապատվության ապահովման սահմանադրական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում.....	119
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....	138
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....	150

Հետազոտության արդիականությունը. Մարդու արժանապատվությունը ներկայումս համարվում է հասարակության զարգացման գլխավոր արժեքային կողմնորոշիչներից մեկը: Քաղաքացիական հասարակության ձևավորումը և իրավական պետության կառուցումն անհնարին կլինի, եթե հասարակական գիտակցությունում և պրակտիկայում չարմատավորվի մարդու արժանապատվության էությունը, իմաստավորումն ու նշանակությունը ցանկացած պետության և հասարակության բնական գործունեության համար:

Անձի արժանապատվությունը մարդկային քաքաքակրթության հիմնարար հայեցակարգերից մեկն է, չափանիշ՝ հասարակության զարգացման համար: Անձի արժանապատվության պաշտպանությունը ժողովրդավարական և իրավական պետությունում կրում է համընդհանուր և առաջնային բնույթ, այն կազմում է փիլիսոփայական և իրավաբանական բազան, որի վրա կառուցվում է տվյալ պետությունում մարդու իրավունքների ողջ իրավական համակարգը:

Մարդու արժանապատվությունն արժեքների չափանիշ է, որը հնարավորություն է տալիս գնահատել, արժևորել ոչ միայն պետությունը, իրավունքը, իրավակարգը, օրինականությունը, այլ նաև քաղաքացիական հասարակությունում մարդու արժանապատվության զարգացման և դրա իրականացման հնարավորության աստիճանը:

Ժամանակակից աշխարհը չի կարելի պատկերացնել առանց մարդու արժանապատվության՝ որպես բարձրագույն արժեքի: Մարդու արժանապատվությունը ներկայումս համարվում է հասարակության զարգացման գլխավոր կողմնորոշիչներից մեկը: Քաղաքացիական հասարակության ձևավորումը և իրավական պետության կառուցումն անհնարին կլինի, եթե հասարակական գիտակցությունում և պրակտիկայում չարմատավորվի մարդու արժանապատվության էությունը:

Անհատի արժանապատվությունն է հանդես գալիս պետության, պետական մարմինների և նրանց պաշտոնատար անձանց՝ մարդու, անհատի նկատմամբ

վերաբերմունքի կառուցման նկատմամբ պահանջները սահմանող կարևորագույն արժեքավոր հիմքը և չափանիշը:

Անհատի արժանապատվությունն առանցքային նշանակություն ունի սահմանադրական իրավակարգավորումների արժեքանության և մեթոդաբանության տեսանկյունից:

Անհատի արժանապատվությունը՝ սահմանադրության արժեհամակարգում այն բարձրագույն արժեք է, որով պայմանավորվում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև իրավակիրառման բովանդակության կանխորոշիչ լինելու դրա հատկությունը:

Անհատի արժանապատվությունը հանդես է գալիս որպես մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների համակարգի և այդ իրավունքների ու ազատությունների պահպանության և պաշտպանության համակարգի համակարգաստեղծ տարր, այն առաջնային և անհրաժեշտ է մարդու այլ հիմնական իրավունքների պահպանման և պաշտպանության համար, հանդիսանում է սահմանադրաիրավական կարգավորման գլխավոր նպատակը:

Իրավաբանական գիտության մեջ անհատի արժանապատվության ճանաչման, պահպանության և պաշտպանության սահմանադրաիրավական հարցերը դիտարկվել են բազմաթիվ աշխատանքներում, սակայն դրանց որոշ չափով մակերեսային ուշադրություն է դարձվել առավել ընդհանուր ենթատեքստով, կամ դրանք շոշափվել են իրավական հետազոտությունների այլ՝ հարակից թեմատիկ ուղղություններով, դրա համար էլ նշված հարցերը անհրաժեշտ է գնահատել որպես բավարար չափով չհետազոտված:

«Անձի արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանման, դրա վերաբերյալ տարբեր հայացքների ու մոտեցումների համեմատական և պատմաիրավական վերլուծությունը վկայում է, որ այդ հասկացության իրավական մեկնաբանությունը տարաբնույթ է ընկալվել՝ պայմանավորված պատմական տարբեր ժամանակաշրջաններում հասարակության զարգացման այս կամ այն մակարդակով:

Յուրաքանչյուր դարաշրջան յուրովի է լուծել մարդու արժանապատվության հավերժ խնդիրները, նորովի վերաիմաստավորելով ճշմարտությունները, որոնք նախորդների կողմից բացարձակ էին համարվում:

«Արժանապատվություն» ընդլայնված ըմբռնումը պայմանավորված է եղել տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցող էթիկափիլիսոփայական հայեցակարերով, որոնցում հենց արժանապատվությունը կամ դրա պատմական հոմանիշները (օրինակ՝ պատիվը) մեկնաբանվում էին տարբեր իմաստներով:

Իրենց ակունքներով կանոնական իրավունքի քրիստոնեական ավանդույթներ ունեցող և ռոմանագերմանական և անգլոսաքսոնական իրավական համակարգերում արժանապատվությունը հանդես է գալիս որպես կենսաբանական, բարոյական, կրոնական և սոցիալական բնույթի որակների համախմբություն, որոնք անահատականացնում են մարդուն որպես անհատ, առանձնացնում են նրան բնության այլ արարածներից և նպաստում են վարքի որոշակի չափանիշների նրա կողմնորոշմանը:

Մարդկային արժանապատվության հայեցակարգը ծառայում է որպես ինքնատիպ համակարգ, որտեղ իրենց տեղն են գտնում, փոխգործակցում մարդու կարևորագույն իրավունքները, սկսած անձնական անձեռնմխելիությունից և վերջացրած ազատ տնտեսական գործունեությամբ:

Աշխարհի բոլոր իրավական համակարգերը իրենց մեջ ներառում են ոչ միայն օրենսդրի պատկերացումներն արժանապատվության վերաբերյալ իրավաբանական առումով, այլ նաև կրոնական, բարոյական և այլ տեսանկյուններից:

Մարդու իրավունքների մասին ժամանակակից հարցադրումները, համաշխարհային քաղաքակրթության բնույթով ու արդի մակարդակով պայմանավորված, ողջ նորությամբ ու առանձնահատկություններով հանդերձ, հենվում է մարդկության նախորդ հարուստ փորձի վրա:

Մարդու իրավունքները սոցիալ-պատմական երևույթ են: Չբացառելով մարդու իրավունքների մասին ժամանակակից զարգացած պատկերացումների նորահայտ բնույթը, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել նախորդ իրավական հայացքների հետ արդի պատկերացումների պատմական հաջորդականությունը: Այս իմաստով

իրավունքի և իրավական ուսմունքի պատմությունը միաժամանակ նաև մարդու իրավունքների մասին պատկերացումների ձևավորման և էվոլյուցիայի պատմությունն է՝ սկսած ամենապարզունակ, սահմանափակ հայացքներից մինչև ժամանակակից զարգացած հայեցակարգերը

«Արժանապատվության» եզրույթի իրավական բովանդակությունը և նորմատիվ գործառույթային դերակատարությունը պատմական զարգացման ընթացքում ենթարկվել է փոփոխությունների, և չնայած Սահմանադրությունը, ինչպես նաև ընթացիկ օրենսդրությունն ամրագրում են դրույթներ արժանապատվության առնչությամբ, այնուամենայնիվ, իրավական համակարգում ոչ միանշանակ կերպով է ընկալվում արժանապատվության կարգավիճակը, ինչն էլ պայմանավորում է արժանապատվության հստակ իրավական հայեցակարգի բացակայությունը:

Թեմայի շրջանակներում բարձրացված խնդիրների ուսումնասիրությունը և այդ խնդիրներին արդյունավետ լուծումներ, մեխանիզմներ մշակելու նպատակով կատարված վերլուծությունները նույնպես պայմանավորում են ատենախոսական թեմայի արդիականությունը:

Ոլորտի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս կատարել մի շարք եզրահանգումներ, որի արդյունքում առաջ են գալիս հիմնախնդիրներ, որոնք իրենց հերթին պահանջում են մշակված սահմանումներ և օրենսդրական կարգավորումներ:

Ատենախոսական թեմայի գիտական հետազոտման աստիճանը:

Ատենախոսության մեջ քննարկվել են մեծաթիվ հարցեր, որոնք այս կամ այն չափով արտացոլում են ստացել իրավաբան գիտնականների աշխատություններում: Սակայն, այդ հետազոտություններում նույնպես մարդու արժանապատվության հարգման բովանդակության և երաշխիքների հարցերը շոշափվել են առանց այդ հասկացության իրավական էության վերլուծության:

Հայրենական ու արտասահմանյան հեղինակների հետազոտությունները միայն մասամբ են շոշափում սույն ատենախոսության հետազոտության առարկան և չեն պարունակում մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական ինստիտուտի անհրաժեշտ աստիճանի համալիր

նկարագրություն, ինչը թույլ չի տալիս համարել, որ այդ հասկացությունը հետազոտվել է անհրաժեշտ և բավարար չափով:

Ատենախոսական հետազոտության տեսական հիմք են հանդիսացել ինչպես հայ իրավաբանների աշխատությունները, մասնավորապես՝ Գ.Հարությունյանի, Ա.Երիցյանի, Վ.Այվազյանի, Վ.Ներսիսյանցի, Լ.Խ. Քալաշյանի, Գ.Մուրադյանի, Ա.Վաղարշյանի և այլոց, այնպես էլ օտարազգի գիտնականների աշխատությունները, որոնց շարքում կարելի է առանձնացնել Ի.Ն.Շտանկոյի, Ա.Խ. Աբաշիձեյի, Ս.Ա.Ավագյանի, Ա.Ս. Ավտոնոմովի, Մ.Վ. Բագլայի, Վ.Վ.Բեզբախի, Վ.Գ.Բեսսարաբովի, Վ.Վ.Բլաժենայի, Վ.Վ.Բոյցովայի, Վ.Վ.Գրեբեննիկովայի, Յու.Ա. Դմիտրիևայի, Ա.Ս. Դուգենցի, Ա.Գ. Զալուժնի, Ա.Բ.Զելենցովի, Վ.Դ.Զորկինի, Ի.Ա.Իսակի, Ա.Յա.Կապուստինի, Դ.Ա. Քերիմովի, Ե.Ի.Կոզլովայի, Մ.Ն. Կուզնեցովի, Օ.Ե.Կուտաֆինի, Ա.Ա.Լևի, Գ.Վ.Մալցևի, Ա.Ա.Մամեդովի, Ի.Մ.Մացկևիչի, Վ.Ն.Մախովի, Ն.Վ.Մելնիկովի, Տ.Ֆ.Մինյազևայի, Ն.Ա.Միխալևայի, Մ.Վ. Նեմիտինայի, Ս.Գ.Նովիկովայի, Ա.Ֆ.Նոզդրաշևի, Ի.Վ.Պոնկինի, Յու.Վ.Ստեպանենկոյի, Բ.Ա.Ստրաշունի, Վ.Մ.Սիրիխի, Յու.Ա.Տիխոմիրովի, Ա.Յա.Սուխարևի, Տ.Յա. Խաբրիևայի, Վ.Ե.Չիրկինի, Վ.Բ.Յաստրեբովի, գիտական աշխատությունները: Ատենախոսությունում ուսումնասիրվել են անտիկ և միջնադարյան համաշխարհային հոչակ ունեցող մտածողների աշխատությունները: Դրանցից կարելի է առանձնացնել Պլատոնի, Արիստոտելի, Թոմա Աքվինացու, Սպինոզայի, Կանտի, Ցիցերոնի, Հեգելի և այլոց աշխատությունները:

Ատենախոսի կողմից հետազոտվել է գիտամենագրական ընդարձակ հայրենական և արտասահմանյան նյութեր, անհատի արժանապատվության պաշտպանության հարցերով հրապարակումներ:

Ատենախոսական հետազոտության նորմատիվային հիմքերը:

Ատենախոսության համար նորմատիվային հիմք են հանդիսացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումները, ՀՀ օրենքները, ինչպես նաև միջազգային իրավական փաստաթղթերը, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումները, օտարերկրյա պետությունների հիմնական օրենքները:

Ատենախոսական հետազոտության օրյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օրյեկտ են հանդիսանում՝ մարդու արժանապատվության սահմանադրաիրավական պաշտպանության իրականացման ընթացքում ձևավորվող հասարակական հարաբերությունները:

Ատենախոսական հետազոտության առարկա են հանդիսանում՝ մարդու արժանապատվության պաշտպանության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը, մարդու արժանապատվության պաշտպանության գծով պետական իշխանության մարմինների գործունեությունը, ինչպես նաև դրա հետ կապված արդիական տեսական և գործնական խնդիրները:

Ատենախոսական հետազոտության նպատակը և խնդիրներն են՝ ուսումնասիրել, վերլուծել և բացահայտել .

- իրավաբանական գիտության մեջ «անձի արժանապատվության» հասկացության մեկնաբանությունների հարաբերակցությունը,

- անձի «արժանապատվություն» եզրույթի ընկալումները որպես մարդու իրավունքների հիմքի, մարդկային հատկանիշի, որպես բարոյագիտական կատեգորիաի առանձնահատկությունները,

- արժանապատվության և պատվի հարաբերակցությունը իրավունքի ու բարոյականության համատեքստում,

- անձի արժանապատվության իրավական բովանդակությունն ու կառուցվածքը,

- անձի արժանապատվության ամրագրման սահմանադրական մոդելները,

- անձի արժանապատվության սահմանադրաիրավական բովանդակության զարգացումը,

- մարդու արժանապատվությունը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների համակարգում,

- մարդու արժանապատվության վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի դոկտրինալ մոտեցումները,

- մարդու արժանապատվության պաշտպանության միջազգային իրավական երաշխիքները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Հետազոտության ընթացքում օգտագործվել են ինչպես ընդհանուր գիտական (դիալեկտիկական, տրամաբանական, վերլուծական, պատմական, ընդհանրացման, ինդուկտիվ և դեդուկտիվ մեթոդները), այնպես էլ մի շարք մասնավոր մեթոդներ՝ պատմական-իրավական վերլուծության, ՀՀ սահմանադրական դատարանի մոտեցումների, դատական պրակտիկայի ամփոփման, իրավահամեմատական, ձևական-իրավական և այլ մեթոդներ: Հիշյալ մեթոդների համակցված կիրառությունը հնարավորություն է տվել բացահայտելու հետազոտության շրջանակներում կիրառվող հիմնական հասկացությունների բովանդակությունն ու առանձնահատկությունները:

Ատենախոսական հետազոտության արդյունքները և գիտական նորույթը. Կատարված հետազոտության արդյունքները հանդիսանում են գիտական նորույթի հատկանիշներով օժտված և պաշտպանության համար առաջադրվող հետևյալ դրույթները.

1. Հայեցակարգային մոտեցումների և իրավական աղբյուրների համակարգային վերլուծության հիման վրա հեղինակի կողմից տրվել է անձի արժանապատվության սահմանադրաիրավական հետևյալ ձևակերպումը, ըստ որի՝ այն իրենից ներկայացնում է անձի իրավական կարգավիճակի տարր կազմող հանրաճանաչ և բացառապես սահմանադրորեն պայմանավորված ու որոշակիացված սկզբունք, որի պաշտպանությունը օրենսդրական և ինստիտուցիոնալ գործիքների միջոցով երաշխավորվում է պետության կողմից՝ չբացառելով նաև դրա ինքնապաշտպանության ձևական իրականացման հնարավորությունը ցանկացած որևէ ոտնձգություններից:

Այնուհետև, որպես անձի սոցիալ-իրավական բնութագրիչ և սուբյեկտիվ (անձնական) իրավունքների ու ազատությունների կարևոր բաղադրիչ՝ անձի արժանապատվությունը հեղինակի կողմից դիտարկվում է որպես մարդ-հասարակություն-պետություն փոխհարաբերությունների կարգավորիչ և յուրաքանչյուր մարդու սոցիալական արժեքորման հիմք ժամանակակից հասարակության հիմնարար օրինաչափությունների ու սոցիալ-բարոյագիտական հատկանիշների համատեքստում:

Միաժամանակ, հեղինակը բնութագրելով անձի արժանապատվությունը որպես մարդկային հատկանիշ, նա այն դիտարկում է նաև որպես իրավագիտակցության և

մարդկային մշակույթի բնականոն ու սոցիալական արժեքային համակարգ, որն արտահայտվում է արժանապատվություն կրողի աշխարհայացքային գնահատականներով, հոգեբանական զգացումներով, և պայմանավորված է անձի ինքնաընկալմամբ, ինքնարտահայտմամբ և սեփական անձի նկատմամբ այլոց վերաբերմունքի բարոյահոգեբանական մոտեցմամբ:

2. Արժանապատվության ու պատվի հարաբերակցության և դրանց իրավական ու բարոյական արժևորման վերաբերյալ արված դատողությունների ու առկա իրավական կարգավորումների համադրված վերլուծությունների արդյունքում հեղինակը կողմից արվել է հետևյալ եզրահանգումը, որ իրավունքի ու բարոյականության սերտ կապն ու փոխգործակցությունը մեծապես նպաստում են արժանապատվության ու պատվի՝ որպես սոցիալական կարգավորիչների դերի կարևորմանը, դրանց իրացման արդյունավետության բարձրացմանը և հասարակական հարաբերությունների կայունացմանն ու ամրապնդմանը:

3. Մարդու արժանապատվության կառուցվածքում կարևոր նշանակություն ունեն դրա դրսևորման օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմեր: Ընդ որում, եթե անձի արժանապատվության օբյեկտիվ կողմն արտացոլում է անձի այն հատկանիշների ամբողջությունը, որոնցով նախանշվում են հասարակությունում նրա հեղինակության և իր նկատմամբ այլ անձանց վերաբերմունքի արտաքին կողմերը, ապա սուբյեկտիվ կողմն արտացոլում է անձի ինքնաընկալման, ինքնագիտակցման և ինքնագնահատման ներքին սահմանները: Այս տեսանկյունից աշխատանքում հեղինակն առանձնացնում է անձի արժանապատվության կառուցվածքային այնպիսի տարրեր, ինչպիսին են՝ ընդհանուր արժանապատվություն, անհատական-անձնային արժանապատվություն, սոցիալական արժանապատվություն (որոշակի սոցիալական խմբին կամ ժամանակավոր (իրավիճակային) սոցիումին պատկանելը), գենդերային՝ կնոջ ու տղամարդու արժանապատվություն, մասնագիտական արժանապատվություն, կրթամշակութային արժանապատվություն, ազգային արժանապատվություն, կրոնական արժանապատվություն, տարիքային արժանապատվություն և այլն:

4. Հեղինակը գտնում է, որ մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես անձի գոյության և զարգացման անբաժանելի մաս՝ կրելով դինամիկ բնույթ:

Պետության և հասարակության խնդիրն է ապահովել մարդու արժանապատվության իրավունքի իրականացումն ու երաշխավորել այդ իրավունքի պահպանումն ու պաշտպանությունը: Ընդ որում, այդ իրավունքի միայն օրենքով ամրագրելը դեռ բավարար չէ դրա լիարժեք իրականացման համար, ուստի, հեղինակը հիմնավորում է այն, որ անհրաժեշտ է նախանշել նաև համապատասխան պայմաններ, ինչպիսին են, օրինակ, պետության կողմից դրանց պաշտպանության իրականացման մեխանիզմների սահմանումը կամ հասարակության մեջ իրավագիտակցության բարձրացման ապահովումը և այլն: Ինչ վերաբերում է անձի արժանապատվության իրավունքի իրացման ապահովման խնդրին, ապա հեղինակը գտնում է, որ այդ գործընթացը դինամիկ և կայուն զարգացում ապահովվող այն տարրերի համակարգն է, որտեղ պետք է երաշխավորվի մարդու արժանապատվության իրավունքի պահպանումը, իրականացումը, և կիրառումը:

5. Հիմնավորվել է այն, որ անհատի արժանապատվությունը մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և ազատությունների ու դրանց պահպանության ու պաշտպանության սահմանադրական համակարգաստեղծ այն տարրն է, որի ապահովումն ու պաշտպանությունը պետության պոզիտիվ պարտականությունն է՝ անկախ այդ իրավունք կրողի պահանջներից: Այսպես, օրինակ, մի կողմից, պետությունը պարտավոր է պաշտպանել անձի արժանապատվությունն այլոց ոտնձգություններից և անհրաժեշտության դեպքում կիրառել համարժեք ներգործության միջոցներ, իսկ, մյուս կողմից, պետության պոզիտիվ պարտականությունն է ապահովել մարդուն արժանավայել նվազագույն նյութական կենսապայմաններ իր սոցիալական միջավայրում,

6. Աշխատանքում սահմանվում է, որ մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները կազմում են Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված այն ընդհանուր պայմաններն ու հատուկ իրավաբանական միջոցները, որոնք փաստացի հնարավորություն են ընձեռում իրականացնել մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև երաշխավորել դրանց պաշտպանությունն ու օրինական շահերի բավարարումը: Դրա հիմնավորմամբ պայմանավորված և մարդու

արժանապատվության հայեցակարգային հիմնախնդիրները հաղթահարելու ու իրավական պատշաճ պաշտպանություն ապահովելու նպատակով, հեղինակն՝ ընդհանրացնելով սահմանադրական նորմերի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների համակարգային վերլուծության արդյունքները, կատարում է իրավական մոդելավորում, որ. ա) մարդու արժանապատվությունը հանդես է գալիս պետության և հասարակության կողմից պահպանվող ու պաշտպանվող բարձրագույն սոցիալական արժեք միայն այն դեպքում, երբ մարդն ունի իրական հնարավորություն գործելու իր արժանապատվությանը համապատասխան և պաշտպանելու իր իրավունքները որպես հարգման ու պաշտպանության ենթակա տարր, բ) մարդու արժանապատվության ապահովումն այն անհրաժեշտ պայմանն է, որի պարագայում երաշխավորվում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրացումը, գ) Հայաստանի Հանրապետությունում անձի արժանապատվության պաշտպանության իրավունքի գիտակցումը սահմանադրական բարեփոխումների կարևորագույն հարցադրումներից է, և քանի դեռ մարդու արժանապատվության ապահովման հիմնահարցերը սահմանադրական կարգավորումներում կրում են հռչակագրային բնույթ, չի կարող երաշխավորվել Սահմանադրության գերակայությունը և մարդու իրավունքների պաշտպանության գործունե կառուցակարգերի առկայությունը:

7. Սահմանադրաիրավական նոր կարգավորումների համատեքստում, մարդու արժանապատվության ճանաչման և պաշտպանության միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների, երաշխիքների և կառուցակարգերի համալիրը մշակելիս, աշխատանքում առաջարկվում է ազգային օրենսդրությունը ներդաշնակեցնել մարդու արժանապատվության պաշտպանության երաշխավորման համար էական նշանակություն ունեցող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով սահմանված միասնական իրավական հետևյալ անպիսի չափորոշիչների հաշվառմամբ, ինչպիսիք են՝ ա) պետության կողմից մարդու արժանապատվության որպես միջազգային իրավական պահպանության օբյեկտի սահմանադրորեն ամրագրումը, բ) մարդու արժանապատվության պաշտպանության ուղղակի երաշխիքներ ամրագրող և մանրամասնող դրույթների ամրագրում, գ) մարդու

արժանապատվության պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ սահմանող կամ միջնորդավորված ձևով մարդու արժանապատվության պաշտպանությանն ուղղված իրավական սկզբունքների ու նորմերի համալիր դրույթների սահմանում:

Ատենախոսության հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության նյութերը կարող են օգտագործվել սահմանադրական իրավունք, մարդու իրավունքներ, պետության և իրավունքի տեսություն դասընթացներում և հետագա գիտական հետազոտություններում, ինչպես նաև այն բոլոր դասընթացներում որոնց հետազոտության առարկան որևէ կերպ առնչվում է անձի արժանապատվության հիմնահարցերին: Ատենախոսության մեջ կատարված սահմանադրաիրավական վերլուծությունները կարող են նպաստել հայրենական իրավական համակարգում արժանապատվության նոր ամբողջական հայեցակարգի մշակման, ինչպես նաև մարդու արժանապատվության պաշտպանության արդյունավետության բարձացման աշխատանքներին:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսական աշխատանքը կատարվել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնում, որտեղ իրականացվել են աշխատանքի քննարկումը և գրախոսումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հրապարակված գիտական հոդվածներում, խորհրդաժողովներին ներկայացված զեկույցներում, որոնցում ներկայացվել են ատենախոսության մի շարք կարևոր հիմնադրույթներ:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված ութ ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1. ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-
ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԷՎՈԼՈՒՑԻԱՆ

1.1. Անձի արժանապատվության տեսական-իրավական բովանդակությունն ու
կառուցվածքը

«Անձի արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանման, դրա վերաբերյալ տարբեր հայացքների ու մոտեցումների համեմատական և պատմաիրավական վերլուծությունը վկայում է, որ այդ հասկացության իրավական մեկնաբանությունը տարաբնույթ է ընկալվել՝ պայմանավորված պատմական տարբեր ժամանակաշրջաններում հասարակության զարգացման այս կամ այն մակարդակով:

Այսպես օրինակ, պրոֆեսոր Մ.Ա. Պալդևը պատվի և արժանապատվության իրավունքը դիտարկում է որպես մարդու և քաղաքացու առանձնահատուկ սուբյեկտիվ իրավունք, որի կառուցվածքում ներառելով՝ պատվի և հավասար արժանապատվության կանխավարկածը, պատիվ և արժանապատվություն ունենալը, պատիվը տնօրինելը, պատվի և արժանապատվության պաշտպանությունը¹:

Ճիշտ հակառակն է պնդում Ա.Ֆ. Սուրժիկը, որի կարծիքով պատիվն ու արժանապատվությունն ունեն անփոփոխ ծավալ իրենց գոյության ողջ ժամանակահատվածում, և այդ ծավալը ընդհանուր է բոլոր անձանց համար, իսկ տարբեր անձանց վերաբերմունքն իրենց պատիվն ու արժանապատվությունը ունահարող նույնանման գործողությունների վերաբերյալ որոշվում է ոչ թե այդ հասկացությունների ծավալով, այլ համապատասխանաբար ոչ նյութական իրավունքի խախտման ընկալման անհատական սահմանների ձևավորմամբ, ինչպես նաև խախտված ոչ նյութական իրավունքը պաշտպանելու անհատական պատրաստակամությամբ, որը անհատական իրավագիտակցության մակարդակի հետ ուղիղ կապի մեջ է²:

¹ Տես՝ Паладьев М.А. Конституционное право человека на честь и достоинство (основания, содержание, защита): Автореф. дис. ... канд. юрид. наук / МГЮА. – М., 2006. <http://www.dissercat.com/>

² Տես՝ Суржик А.Ф. Честь, достоинство и деловая репутация в гражданском праве Российской Федерации: Дис. ... канд. юрид. наук / Академия народного хозяйства при Правительстве Российской Федерации. – М., 2007.

«Անձի արժանապատվություն» հասկացության իրավական բովանդակության և կառուցվածքի վերլուծությունը բացահայտում է երկու էական տարրերի առկայություն, դրանք են՝ անփոխարինելին կամ հաստատունը և փոխարինելին կամ փոփոխվողը:

Ընդ որում, անփոխարինելի կամ հաստատուն է, օրինակ, անձի արժանապատվությունը որպես մարդու (անձի և կենսաբանական տեսակի ներկայացուցչի, մարդկային քաղաքակրթության հիմքի) կամ կոնկրետ անձի արժանապատվությունն այն հատվածում, որը պայմանավորված է անձի ինքնաընկալման առանձնահատկություններով և հասարակությունում հաստատված արժեհամակարգով ու յուրաքանչյուր կոնկրետ անձի բացարձակ արժեքի վերաբերյալ պատկերացումներով:

Իսկ փոխարինելի տարրերի դեպքում այն փոփոխվում է ելնելով՝ կոնկրետ մարդու գենդերային (սեռային), մասնագիտական, կրթական, մշակութային, ազգային-կրոնական, ռասային և այլ հատկանիշներից, ինչպես նաև հասարակության զարգացման և քաղաքակրթության մակարդակից, քաղաքական համակարգից և այլ հանգամանքներից:

Անհրաժեշտ է նկատել, որ փոփոխելի կամ փոխարինելի տարրերը նաև բնորոշվում են մարդու կյանքի սոցիալական համատեքստում, դրա հանդեպ իր շրջապատի և այլ մարդկանց վերաբերմունքով, այդ թվում՝ իր իսկ գործողություններից բխող:

Քանի որ հասարակության վերաբերմունքը կոնկրետ անձի նկատմամբ կարող է ժամանակի ընթացքում փոփոխվել (ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով), և այդ վերաբերմունքի վրա ազդում են երրորդ անձանց սուբյեկտիվ գնահատականները, ուստի անձի արժանապատվության կառուցվածքի այդ մասը ևս մշտական կամ անփոփոխ չէ և կախված է կոնկրետ անհատի վարքագծից, շրջապատի հանդեպ նրա վերաբերմունքից (և նրա հանդեպ շրջապատի վերաբերմունքից), որոշակի հատկանիշների, բարոյական բաղադրիչների առկայությունից:

Բացի այդ, մարդու արժանապատվության կառուցվածքում կարևոր նշանակություն ունեցող տարրերից կարելի է առանձնացնել այդ հասկացության դրսևորման *օբյեկտիվ* և *սուբյեկտիվ* *կողմերը*: Այսպես, եթե անձի

արժանապատվության օբյեկտիվ կողմն արտացոլում է անձի հատկանիշների ամբողջությունը, որով պայմանավորված է նրա հեղինակությունը հասարակությունում և այլ անձանց վերաբերմունքը նրա հանդեպ (սոցիալապես ընդունվող և ակնկալվող բարոյական և այլ հատկանիշներ, գիտելիքների մակարդակ, սոցիալապես օգտակար հմտություններ, արժանավայել կենսակերպ և այլն), ապա անձի արժանապատվության սուբյեկտիվ կողմն արտացոլում է անձի ինքնաընկալումը, ինքնագիտակցությունը և ինքնագնահատականը, որոնք արտահայտվում են սեփական անձի արժանապատվություն հասկացության մեջ:

Նշված երկու կողմերն էլ միատարր չեն և իրենց հերթին ներառում են տարբեր բաղադրիչներ: Այսպես՝ օրինակ, մարդու արժանապատվության օբյեկտիվ կողմը բովանդակում է ի ծնե մարդուն բնորոշ, համեմատաբար կայուն (անփոխարինելի) հատվածը, ինչը ժամանակակից ժողովրդավարական հասարակությունն ու իրավական ժողովրդավարական պետությունն անհրաժեշտ են համարում մարդկային անձի արժևորման համար: Այն արտահայտվում է նրանում, որ անձի արժանապատվության հիմնական տարրը վերաբերում է յուրաքանչյուր մարդու, անկախ այլ անձանց կողմից նրա հանդեպ ունեցած վերաբերմունքից: Այդ մասը կամ հատվածը կարող է փոփոխվել՝ կախված պետության և նրա մարմինների կողմից իրավունքի գերակայության սկզբունքի իրացման որակից:

Ինչ վերաբերում է անձի արժանապատվության *սուբյեկտիվ կողմի տարրերին*, ապա անհրաժեշտ է նկատի ունենալ այդ հասկացության հետևյալ մի շարք ասպեկտները.

1) համեմատաբար կայուն (անփոփոխելի) տարր, կապված է որպես մարդկային անձ ինքնագիտակցման և ինքնաընկալման հետ, ինչպես նաև մարդու ազգային-մշակութային, կրոնական, ռասսայական, սեռային նույնականացման հետ, և, իհարկե, նման ինքնագիտակցության և իրավաընկալման առանձին տարրերը փոփոխվում են մարդու տարիքի և զարգացման մակարդակի հետ զուգընթաց,

2) իսկ փոփոխելի տարրը կապված է մարդու կողմից սեփական հատկությունների և բնութագրերի ընկալման հետ, որոնց նա տիրապետում է կյանքի ընթացքում՝ կրթական և մշակութային մակարդակի բարձրացման, գիտելիքի և փորձի ավելացման,

սոցիալական դիրքի բարձրացման, սեփական ծրագրերի և կյանքի նպատակների ինքնուրույն ձևակերպման հետ:

Այսպիսով, անձի արժանապատվության սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերն ունեն տարբերություններ, և դրանցից յուրաքանչյուրն իր կառուցվածքով համապատասխանում է անձի արժանապատվության իրավական բովանդակության վերոնշյալ անփոփոխելի և փոփոխելի տարրերի համակցությանը:

Այսպիսով, անձի արժանապատվությունը բարդ և միաժամանակ բազմակողմ հասկացություն է, որի բովանդակությունը և կառուցվածքը հնարավոր է բացահայտել և ներկայացնել նաև նրա տարբեր կողմերի ուսումնասիրության միջոցով:

Դրանցից են.

ա) ընդհանուր և մասնավոր կենսաբանականը,

բ) անհատական անձնականը (անձի արժանապատվություն),

գ) սոցիալականը (որոշակի սոցիալական խմբին կամ ժամանակավոր (իրավիճակային) սոցիումին պատկանելը),

դ) գենդերայինը (սեռային՝ կնոջ արժանապատվություն, տղամարդու արժանապատվություն),

ե) մասնագիտականը (մասնագիտական արժանապատվություն),

զ) կրթամշակութայինը,

է) ազգայինը, կրոնականը, ռասսայականը (անձի արժանապատվություն՝ ըստ ազգի, կրոնի և ռասսայական պատկանելության)

ը) տարիքայինը:

Անձի արժանապատվության կենսաբանական ասպեկտը կայանում է նրանում, որ յուրաքանչյուր մարդ որպես կենդանի էակ ի ծնե ունի որոշակի արժեք (որը ժողովրդավարական հասարակությունում բացարձակ է) և որպես արժեք ունեցող ընկալվում է ոչ միայն շրջապատի, այլև հենց իր կողմից (ելնելով հենց միայն այն հանգամանքից, որ նա մարդ է): Նման բարձրագույն արժեք ունի յուրաքանչյուր մարդ:

Մարդու արժանապատվության անհատական անձնական կողմն արտահայտվում է այդ արժանապատվության ամբողջական ինքնաընկալման, ինքնագիտակցման և ինքնագնահատման մեջ: Դրանք իրենցից ներկայացնում են կոնկրետ անձի «ես»-ի

ինքնաճանաչումը, որը բնորոշվում է ինչպես օբյեկտիվ բնական և պոզիտիվ հատկանիշներից ու անհատական առանձնահատկություններից, գիտակցված և ենթագիտակցական շեշտադրումներից ու դրույթներից բխող, այնպես էլ նույն անձի կողմից ինքնուրույն կառուցվող և սեփական անձնային կերպարներով պայմանավորված: Ընդ որում, յուրաքանչյուր մարդ կարող է ունենալ բազմաթիվ նման կերպարներ և դրույթներ, նպատակներ, որոնք ձևավորում են կայուն համակարգ, որը մտնում է սեփական «ես»-ի և շրջապատող աշխարհի սուբյեկտիվ կերպարի մեջ:

Նշված մոտեցումը, ի տարբերություն մյուս կողմերի, առավել կապված է կոնկրետ անձի հետ, արտահայտում է նրա անհատականությունը և եզակիությունը, և առավել քիչ է կապված հասարակության մեջ այդ անձի դիրքի հետ: Այստեղ մարդը դիտարկվում է որպես շրջապատող աշխարհից առանձին կոնկրետ անհատականություն՝ սեփական ներաշխարհով: Ի տարբերություն մարդուն սոցիալական պլանում (որպես հասարակական էակ) դիտարկող դիրքորոշումից, անձնային մակարդակում մարդու արժանապատվությունը դիտարկվում է՝ վերացարկվելով հասարակության և այլ մարդկանց ազդեցությունից: Մարդը դիտարկվում է հասարակության հետ կապերից դուրս որպես անհատական, անկախ էակ:

Անձի արժանապատվության անհատական անձնային կողմը բարդ համակարգ է: Ունենալով սեփական խառնվածք, կամք, ցանկություններ ու մտադրություններ, զգացմունքներ ու միտք, սովորություններ և այլ հատկանիշներ՝ մարդը իրեն շրջապատող իրադարձությունները, հարաբերությունները և շրջապատող աշխարհից մնացած ամեն ինչ ընկալում է իր մոտ ձևավորված բարոյական և աշխարհայացքային չափանիշների, ինչպես նաև սեփական համոզմունքների լույսի ներքո:

Ելնելով հոգևոր և բարոյական զարգացման առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր անհատ տարբեր կերպ է ընկալում իր կյանքի հանգամանքները: Այն, ինչ ընկալում է անձը, հետագայում դառնում է նրա անքակտելի մասնիկը, դառնում է անհատական անձնական (արժեքներ, փորձ, գիտելիք, ապրումներ և այլն): Այն, ինչ ժամանակի ընթացքում մերժվում է մարդու կողմից, դուրս է մղվում անձի արժանապատվության բովանդակության շրջանակից: Հենց դրանում է

արտահայտվում մարդու արժանապատվության անհատական անձնական կողմի համեմատաբար փոփոխելի մասը:

Մարդու արժանապատվության սոցիալական կողմը արտահայտվում է նրանում, որ անձի արժանապատվությունը զգալի չափով պայմանավորված է հասարակության մեջ նրա դիրքով և այդ դիրքի ընկալումով, հասարակության հետ նրա հարաբերություններով ու սոցիալական դերով: Մարդու արժանապատվության այդ կողմը մատնանշում է նրա (այդ կողմի) պատմամշակութային և սոցիալական պայմանավորվածությունը և հարաբերական կախվածությունը:

Հարկ է նշել, որ մարդու արժանապատվության սոցիալական կողմն ընդհանուր աղերսներ ունի անհատական անձնականի, ազգային և այլ կողմերի հետ: Ինչպես արդարացիորեն ասել է գրող Ֆ. Իսքանդերը «Մարդու կանգառ» աշխատության մեջ. «Երբ հասարակությունը խլում է մարդու սոցիալական արժանապատվությունը, ազգային արժանապատվությունը սկսում է անսպասելիորեն ուռչել, ինչպես քաղցկեղ»:

Միաժամանակ, անձի արժանապատվության սոցիալական կողմը կարելի է դիտարկել նաև լայն իմաստով, որպես մարդու արժանապատվության բոլոր մյուս կողմերն ընդգրկող երևույթ՝ բացի անհատական անձնականից և մասամբ գենդերայինից: Այդ տարրն արտահայտվում է նաև մեկ ընտանիքի անդամների արժանապատվության փոխկապակցվածության մեջ՝ վերածվելով մեկ միասնության, որը կարելի է սահմանել որպես ընտանիքի արժանապատվություն:

Ուշադրության է արժանի մարդու արժանապատվության սոցիալական կողմի փոխկապակցվածությունը անհատական անձնական կողմի հետ: Այսպես, մարդու անձնական կյանքը, որը անձի գոյության անհրաժեշտ բաղադրիչն է, ենթադրում է անձնականի, անհատականի և հասարակականի միջև հստակ սահմանի առկայություն: Յուրաքանչյուր անձ ունի «սեփական տարածություն» ունենալու իրավունք, որտեղ՝ բացի նրանից ոչ ոք իրավունք չունի մուտք գործել, եթե անձը թույլ

չի տվել դա որևէ մեկին: Որոշ հեղինակներ այդ կողմն անվանում են «անձնական ինքնիշխանություն»³, որն արտահայտում է անձի անկախություն ընտրելու իրավունքը:

Որոշակի դեպքերում անձի արժանապատվություն հասկացության բովանդակության այն տարրերը, որոնք կապված են մարդու անձնական կյանքի հետ, անմիջական կապի մեջ են գտնվում այն տարրերի հետ, որոնք առնչվում են հասարակական հարաբերությունների հետ⁴:

Այդ տեսանկյունից, անհրաժեշտ է նկատել, որ, մի կողմից, մարդու արժանապատվությունը կապված է այնպիսի հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ «պատիվը», «հեղինակությունը», «բարի համբավը», «վստահելի մարդը», «արժանապատիվ կյանքը», «կյանքի որակը» և այլն, իսկ, մյուս կողմից, «անձի արժանապատվություն», «մարդու արժանապատվություն» հասկացությունն իր սոցիալական կողմով սերտորեն կապված է տարբեր չափանիշներով այնպիսի հակասական և հակադիր նշանակության հասկացությունների հետ, ինչպիսիք են «անպատվությունը», «վարկաբեկումը», «խայտառակումը», «նսեմացումը», «անարգանքը» և այլն:

Ինչ վերաբերում է մարդու արժանապատվության գենդերային կողմին, ապա հարկ է նշել, որ այն արտահայտում է անձի սեռը և պայմանավորված են տղամարդու և կնոջ հոգեբանական առանձնահատկություններով, նրանց մտածելակերպով, շրջապատող աշխարհի ու հասարակական հարաբերությունների ընկալումով և նույնականացումով, ինչպես նաև տղամարդու և կնոջ վրա արտաքին աշխարհի ազդեցության ընկալումով ու ըմբռնումով:

Այսպես, նույն գործողությունը, որը կապված է ֆիզիկական շփման հետ, տղամարդու կողմից կարող է ընկալվել որպես ուշադրության անարժան դատարկ բան, սակայն կնոջ պարագայում այդ գործողությունը վերջինիս կողմից կընկալվի որպես լուրջ վիրավորանք:

Անձի արժանապատվության գենդերային կողմը կարող է արտահայտվել «ամոթխածություն», «կանացի արժանապատվություն» և այլ հասկացություններում:

³ Sbu' Бляхман Б.Я. Понятие суверенитета личности // Актуальные проблемы юридической науки и правоприменительной практики. Сборник научных трудов (по материалам 4 международной научно-практической конференции, состоявшейся 15 октября 2005 г.). - М., 2005. - Ч. 1. - С. 38—49.

⁴ Sbu' Օրինակ, անձնական կամ ընտանեկան գախտնիքի գախտնագեծումը:

Անձի արժանապատվության հաջորդ կարևոր տարրերից է տարիքային կողմը, որը որոշվում է մարդու տարիքային առանձնահատկությամբ: Այն, ինչը մանկահասակին ներվում է (չնայած սոցիալապես չի խրախուսվում, ինչպես օրինակ կռիվը) կամ անտեսվում է (վիրավորական խոսքերը), չափահաս տարիքում կարող է քրեական գործի հարուցման պատճառ դառնալ:

Աձի արժանապատվության ազգային, կրոնական կամ ռասսայական կողմերը (անձի արժանապատվությունը կախված ազգային, կրոնական կամ ռասսայական պատկանելությունից) կապված են մարդու ինքնաընկալման և դրսևորման հետ՝ ըստ նշված հատկանիշների, և արտահայտվում են ազգի (էթնիկ խմբի, ժողովրդի) համար համակեցության կանոններով (հպարտություն, ցավ, վիրավորանք՝ ապօրինի ոտնձգությունների դեպքում):

Մասնավորապես, մարդու արժանապատվության ազգային կողմը ևս որոշակի կերպ կարող է արտահայտվել «ազգային հպարտություն», «ազգային միասնություն» հասկացություններում:

Այսպիսով, անձի արժանապատվությունը կարելի է բնորոշել՝ որպես մարդկային հատկանիշ, իրավագիտակցության և մարդկային մշակույթի բնականոն և սոցիալապես պայմանավորված արժեքային համակարգ և միաժամանակ, մարդու իրավունքների և ազատությունների հենք, որն արտահայտվում է արժեքային-աշխարհայացքային գնահատականներով, հոգեբանական զգացումներով, և պայմանավորված են անձի ինքնաընկալումով, ինքնարտահայտմամբ և սեփական անձի հանդեպ այլ անձանց վերաբերմունքի բարոյահոգեբանական ընկալմամբ:

Նշված հասկացության բովանդակության առավել հստակ բացահայտման համար նպատակահարմար ենք համարում ուշադրություն հրավիրել նաև «մարդու արժանապատվության կիրարկում» հասկացությանը⁵:

Այդ առումով անհրաժեշտ է մեջբերել պրոֆեսոր Օ. Պիրցակի այն խոսքը, ըստ որի՝ մարդու արժանապատվության հաստատումն ու պահպանումը ենթադրում են էթիկական, բարոյական, իրավական և սոցիալական այլ նորմերի ու համապատասխան բարոյական ու իրավական հարաբերությունների ամբողջության

⁵ Տես՝ Սովորաբար <<կիրարկում>> հասկացությունը օգտագործվում է իրականացնել, կյանքի կոչել իմաստով:

ստեղծում, որտեղ կարտահայտվի անձի հանդեպ որոշակի հարգանք: Անձի արժանապատվության երաշխիքների իրագործումը օրենսդրության տարբեր ոլորտների իրավական նորմերում, դատական և պետական այլ որոշումներում պայմանավորված է անձի բարոյաիրավական արժեքով և հասարակական նշանակությամբ⁶:

Մարդու արժանապատվությունը վերացական չէ, այն պոտենցիալ կայուն իրավունք չէ, այլ, ինչպես արդեն ներկայացվել է, բարդ դինամիկ համակարգ է՝ կայուն և փոփոխական տարրերով: Մարդու արժանապատվությունը իր մի շարք բաղադրիչներով մշտապես գործում և մշտապես իրացվում է, այն հանդես է գալիս որպես անձի գոյության և զարգացման անբաժանելի մաս և կրում է դինամիկ բնույթ:

Պետության և հասարակության խնդիրն է ապահովել այդ իրավունքի իրականացման երաշխիքները: Անձի արժանապատվության իրավունքի իրացման ապահովումն ու պաշտպանությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հատուկ պարտականությունն է:

Իրավունքի տեսության համաձայն՝ ինչպես իրավունքի իրականացումը, այնպես էլ մարդու արժանապատվությունն ունի իր իրականացման ձևերն ու մեթոդները:

Մարդու արժանապատվության իրավունքի իրականացման հիմնական երաշխիքն է այդ իրավունքի ապահովումը, պահպանությունն ու պաշտպանությունն ապահովող համապատասխան իրավական նորմերի ամրագրումը: Ընդ որում, այդ իրավունքը միայն օրենքով ամրագրելը բավարար չէ այն լիարժեք իրականացնելու համար. անհրաժեշտ են համապատասխան պայմանների նախանշում, այդ թվում պետական համապատասխան ապարատի միջոցով դրանց պաշտպանության իրականացում, հասարակության մեջ իրավագիտակցության ձևավորման ապահովում և այլն:

Անձի արժանապատվության իրավունքի իրականացման երկրորդ ձևը պետության կողմից այդ իրավունքի իրացման ապահովումն է: Այդ գործընթացը դինամիկ և կայուն տարրերի այն համակարգն է, որտեղ պետք է երաշխավորվի մարդու արժանապատվության իրավունքի պահպանումը, իրականացումը, կիրառումը և կիրարկումը:

⁶ Stiu՝ Пырцак О. Защита чести и достоинства в Республике Молдова: действующие регламентации и перспективы // Законодательство и практика масс-медиа (Молдавия). - 2002. — № 3.

Մարդու արժանապատվության արտահայտման, դրսևորման և պաշտպանության տարբեր ասպեկտների, ինչպես նաև մարդու արժանապատվության իրավունքի իրականացման ընկալման և մեկնաբանման խնդրի, այդ իրավունքի պաշտպանության, այդ թվում պատվի և արժանապատվության գործերի վերաբերյալ գիտական հետազոտությունների արդյունքների կառուցվածքային-համակարգային, տրամաբանական և իրավալեզվաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս անձի արժանապատվության (մարդու արժանապատվության) պահպանումը, իրականացումը, կիրառումը և կիրարկումը բնորոշել որպես կոնկրետ անձի (որպես կրողի և դրսևորողի) սեփական արժանապատվության պաշտպանության (պետության և հասարակության կողմից որպես սոցիալական նշանակություն ունեցող, պահպանվող և պաշտպանվող արժեք) և դրսևորման, արտահայտման, պաշտպանության և կյանքի կոչելու այլ մեխանիզմի իրական հնարավորությունների տիրապետում, այդ թվում նաև այլ անձանց հետ հարաբերություններում, դրա հետ կապված իրավունքների ամբողջություն, ինչպես նաև առօրյա ընթացիկ անմիջական և իրավիճակային մարմնավորում:

1.2. Արժանապատվության և պատվի հարաբերակցությունը իրավունքի ու բարոյականության համատեքստում

Բարոյականության և իրավունքի ազդեցության ոլորտները նույնատիպ են: Դրանք կոչված են կարգավորելու, մասնավորապես՝ ինչպես միջանձնային անհատական հարաբերությունները, այնպես էլ հասարակական հարաբերություններն ընդհանրապես: Այդ իմաստով բարոյականության և իրավունքի միջև գոյություն ունեն ընդհանրական բնութագրիչներ, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ, ի վերջո, իրավունքը պետք է լինի բարոյական: Սակայն, այդպիսի հարաբերակցությունը չի բացառում նաև բարոյականության և իրավունքի միջև առանձնահատուկ բնութագրիչների առկայություն:

Իրավունքի և բարոյականության ընդհանրությունները զգալի են, դրանք, ամենից առաջ առնչվում են գործունեության ոլորտի միասնականության, հետևաբար նաև սոցիալական միասնական արժեքի ապահովման, կառուցվածքային միևնույն բնութագրիչների սահմանման հետ, իսկ մյուս կողմից, այդպիսի ընդհանրությունները փոխկապակցված են մարդկանց գիտակցության ու կամքի, հասարակության սոցիալական կազմակերպության, քաղաքակրթության մակարդակի և այլ գործոնների հետ: Հենց այդ չափանիշներով էլ պայմանավորված տարբերվում են իրավունքն ու բարոյականությունը⁷:

«Բարոյականություն» և «իրավունք» եզրույթներն առանձին վերցրած, անշուշտ ունեցել են իրենց պատմական զարգացման էվոյուցիան՝ ապահովելով միաժամանակ հարաբերական ինքնուրույնություն: Այսպես, եթե իրավունքը հանդես է եկել որպես տնտեսապես իշխող դասակարգի շահերի պաշտպան, ապա բարոյականությունն՝ ունենալով ավելի վաղ ծագում՝ դեռևս նախնադարյան համայնական հասարակարգի ժամանակաշրջանում սպասարկել է ողջ հանրությանը: Եվ միայն դասակարգային սուր հակասությունների ու պայքարի պայմաններում բարոյականությունը ևս դասակարգային շերտավորման երանգներ ստացավ՝ չկորցնելով իր ընդհանուր սոցիալական բնույթն ու ուղղվածությունը:

⁷ Տես՝ Ա.Խաչատրյան, Իրավունք, քաղաքականություն, բարոյականություն, Երևան 2003թ.:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատել, որ բարոյական նորմերը խարսխվում են բարու և չարի, պատվի և արժանապատվության, պարտքի ու պատասխանատվության վերաբերյալ առկա առաջավոր պատկերացումների վրա: Դրանք դարերի ընթացքում և աշխարհի ճանաչողության ու աշխարհընկալման գործընթացներում մշակվել ու գիտական ճանաչում են ստացել մեծ մտածողների, փիլիսոփայության, կրոնի, գրականության, արվեստի ոլորտների գործիչների կողմից:

Բարոյական նորմերը կարող են ընկալվել որպես սկզբունքներ, հասկացություններ, գաղափարներ, գնահատականներ, առաքինություններ: Բարոյական նորմերով կարգավորվող ոլորտն առաջին հայացքից գտնվում է «մաքուր» վիճակում և դրա սահմանները համեմատաբար «նեղ» են (օրինակ, ընկերական, փոխօգնության, ընտանեկան և այլ հարաբերություններ), բայց դա թվում է միայն՝ առաջին հայացքից: Այդ նորմերն իրավունքի նորմերի նման և, նույնիսկ ավելին, համապարփակ են ու թափանցում են հասարակական կյանքի գրեթե բոլոր, այդ թվում՝ տնտեսական, քաղաքական, սոցիալական, աշխատանքային և այլ ոլորտներ:

Ըստ պատմական զարգացման օրինաչափությունների՝ բարոյականության և իրավունքի դինամիկան ընթանում է մարդկային փոխհարաբերությունների մեջ բարոյականության նշանակության բարձրացման ուղիներով: Բարոյականության ազդեցությունը տարածվում է մարդկային փոխհարաբերությունների շատ ասպարեզների վրա:

Իր էությամբ բարոյականությունը փաստորեն կարող է ազդեցության ավելի լայն ոլորտ ձեռք բերել, քան իրավունքը: Մեր կյանքում կան շատ երևույթներ, որոնք լիովին կարգավորվում են բարոյականության նորմերով, սակայն առանձին փոխհարաբերություններում իրավունքը պահպանում է իր ազդեցիկ ու գերակա դերն ու նշանակությունը:

Այդ իմաստով կարծում ենք, որ հիմնավոր է այն տեսակետը, ըստ որի՝ բարոյականությունն ի վիճակի է թափանցելու մարդկային ամենանուրբ ու բազմապիսի փոխհարաբերությունների մեջ ու կարգավորել դրանք, մինչդեռ իրավունքի ուժը տարածվում է որոշակի շրջանակներում⁸:

⁸ Տես՝ Լ.Խ. Քալաշյան, Բարոյականությունը և իրավունքը մարդկային փոխհարաբերություններում, Երևան 1968թ. էջ 35::

Մյուս կողմից, եթե իրավունքն օժտված է հասարակական հարաբերությունների կարգավորման հատուկ մեխանիզմով, մարդկանց իրավունքներն ու պարտականությունները հատուկ սահմանված են որպես հնարավոր և պատշաճ գործողություններ, ընդամին իրավական փաստերի միջոցով վերացական օբյեկտիվ իրավունքը վերածվում է կոնկրետ սուբյեկտիվ իրավունքի, ապա բարոյական նորմերը ներգործում են անձի ներքին կարգավորիչների (կամքի, բանականության, խղճի, արժեքների, շարժառիթների դրույթների) միջոցով: Այսինքն, բարոյականությունը գործունի մարդու ներքին համոզմունքի հետ, որով էլ պայմանավորված է նրա ուժը: Թերևս, բարոյականությունը ունի իրավական իմաստ ու բովանդակություն՝ չունենալով իրավունքին հատուկ բոլոր բնութագրիչները:

Իրավական նորմը պատշաճ վարքագծի կանոնն է, միանգամայն կոնկրետ ու հստակ ուրվագծված՝ ազատության չափի ու մասշտաբի համադրությամբ, սակայն առանց պետության միջամտության ու պետական հարկադրանքի կիրառման հնարավորության, այն չի կարող գործել ու իրացվել:

Բարոյական նորմերն՝ առանց պետական հարկադրանքով ու մեխանիզմների իրացման, այնուամենայնիվ, գործում են ոչ պակաս արդյունավետությամբ, իսկ բազում դեպքերում դրանք ունեն բացառիկ կարևորություն: Այսպես, բարոյականությունը դրսևորվում է ոչ թե որպես սկզբունքների կամ տրամաբանության միասնության ապահովման միջոցով, այլև՝ դիտարկվում է՝ որպես հասարակական կյանքից բխող սովորույթ, բարքեր, կանոն, և ի վերջո, որպես կենսական անհրաժեշտության և մարդկության գոյի հիմք:

Իսկ իրավունքն էլ պետք է ծնվի օբյեկտիվորեն հասարակության մեջ ոսկրացած այդ բարոյական նորմերից և արտահայտի մարդկանց կենսական պահանջմունքները: Ահա իրավունքի և բարոյականության հարաբերակցման սահմանագծերը:

Իրավունքն ու բարոյականությունը՝ որպես սոցիալական նորմեր, ոչ միայն հաստատագրում են գոյություն ունեցող իրականությունը, գոյը, այլև՝ պատշաճը (գալիքը), հասարակության համար անհրաժեշտը, ընդ որում, պատշաճի բարոյական գնահատականն ավելի ընդգորկուն է, քան իրավականը: Իսկ դա բերում է այն

պնդմանը, որ անգամ պետության և իրավունքի առաջացումից հետո էլ բարոյականությունը պահպանում է իր առաջնայնությունը:

Իրավունքը բովանդակում է հասարակության մեջ գոյություն ունեցող բարոյական արժեքներ, եթե խոսքը բարոյականության, հետևաբար և կամայականությունից զուրկ իրավունքի մասին է: Արդարացի է այն պնդումը, որ այն ինչ բարոյական չէ, չի կարող իրավական լինել կամ ծնել իրավունք: Այս տեսանկյունից էլ պատիվը և արժանապատվությունը, որպես բարոյական անքակտելի արժեքներ և մարդկության հատկանիշներ, պետք է գտնվեն իրավունքի արժեքի հիմքում և պաշտպանվեն հենց իրավունքի կողմից:

Առանձին հետազոտողների կողմից արդարացիորեն նշվում են, որ քաղաքականության, պետության և իրավունքի ոլորտներում գործնականորեն չկան հարաբերություններ, որոնք բարոյականության (չարի և բարու) գնահատման դիրքերից դուրս լինեն: «Բոլոր իրավական երևույթները ենթակա են բարոյական գնահատականի՝ ամենից առաջ բարու և չարի հայեցակարգերի դիրքերից: Այդպիսի գնահատող հարաբերությունը ևս իրավական ու բարոյական համակարգերի կապի ձևերից մեկն է»:

Իրավունքն ու բարոյականությունը՝ որպես սոցիալական կարգավորիչներ և մարդու կարևորագույն արժեքային կողմնորոշիչներ, չէին կարող գոյություն ունենալ, եթե անգամ ուղղված չլինեին մարդու բանականությանն ու կամքին: Այդ արժեքների շնորհիվ է մարդը հնարավորություն ունենում համակերպվելու հասարակական բարդ ու մշտապես փոփոխվող հարաբերությունների հետ: Իրավունքն իր բնույթով ուրվագծում է մարդու արտաքին գործողությունների ազատությունը և պահպանում չեզոքություն իր ներքին ազատության նկատմամբ, մինչդեռ բարոյականությունը ոչ միայն մատնանշում է նրա արտաքին ազատության սահմանները, այլև պահանջում սահմանելու անձի ներքին ինքնորոշման և ներքին ազատության սահմանները:

Հիշատակվածից հետևում է, որ՝ և իրավունքը, և բարոյականությունը ծառայում են մարդու դաստիարակման գործին, այսինքն, դրանց բարոյական-իրավական իմաստը դաստիարակչական գործառույթի սահմանումն է: Ընդ որում, բարոյական ցանկացած

գործողություն պետք է լինի ոչ թե արտաքին ազդակների (վախ, շահ, բռնություն) արդյունք, այլ նպատակների ճշմարտացիության ներքին համոզմունք:

Ի վերջո, բարձր բարոյականության տեր մարդը ոչ թե պետք է իր արարքները հարմարեցնի ժամանակավորապես ստեղծված պայմաններին, կեղծի ինքն իրեն, այլ ցանկացած իրադրությունում գործի իր ներքին համոզմունքներին համաձայն: Դրանով է միայն մարդը ձեռք բերում բարոյական կերպար, դառնում անհատականություն: Այդպիսի մարդը, որը նաև ուժեղ է, կարիք չունի անգամ գրված օրենքի աջակցության: Նա միայն որպես 'քաղաքացի' իր վարքը կարգավորելիս է անրադառնում իր պետության օրենքների պահանջներին, իսկ որպես մարդ - անհատականություն - անձ, նա հասարակության մեջ պետք է առաջնորդվի այսպես կոչված «չգրված» օրենքներով համակեցության համապարտադիր կանոններով, այդ բարոյական սկզբունքներով ստեղծի իր կյանքի օրենքը, որպես իր և հասարակության յուրաքանչյուր անդամի կենցաղի ճիշտ ապրելակերպի հիմք: Այս պարագայում, արդարացի է հին փիլիսոփայության այն մտքի մեջբերումը, ըստ որի՝ օրենքը սնվում է բարոյականությամբ և ծնում բարոյականություն:

Կարևոր է մատնանշել, որ բարոյականությունը ոչ միայն «ապահովում» է իր կարգավորման ոլորտը, այլև միաժամանակ սահմանում այն արարքները, որոնք գտնվում են իրավունքի հսկողության շրջանակներում: Այդ իմաստով, բարոյականությունը կարելի է դիտարկել որպես իրավական հենարան, քանի որ, եթե իրավունքն արդարացված է բարոյականությամբ, ապա բարոյականությունը պաշտպանվում է հենց իրավունքով:

Այսպիսով՝ մարդկային բոլոր արարքները, սկսած իրենց մտահղացման աստիճանից մինչև բուն արարքի ավարտը, գտնվում են բարոյականության ոլորտում, մինչդեռ իրավունքն այդ արարքների նկատմամբ իր ուժը դրսևորում է միայն ճանապարհին կամ արարքի ավարտից հետո: Եվ այդ իմաստով նաև, բարոյականությունը և իրավունքը ունեն նույն նպատակը՝ արգելել չարին, թույլ տալ բարուն, սակայն այն տարբերությամբ, որ իրավունքը դա անում է հրամայականի ոգով, իսկ բարոյականությունը ձգտում է նույն նպատակին հասնել ավելի մեղմ միջոցներով:

Այս իմաստով, բարոյական ներգործության ուժն ու միջոցն են հասարակական կարծիքը, ավանդույթներն ու սովորույթները: Սակայն հասարակական կարծիքը, ըստ Հեգելի բնութագրման՝ արժանի է ինչպես հարգանքի, այնպես էլ անհարգանքի: Եվ այդ իմաստով՝ հասարակական կարծիքն ու առողջ բանականությունը կան ու կմնան որպես բարոյական նորմերի իրացման հզոր լծակներ:

Դարեր շարունակ փիլիսոփաներին թվում էր, թե պատվի ու արժանապատվության զգացմունքները մարդկության ներքին աշխարհին հատուկ որակների արդյունք են և բնորոշ են անհատին: Ըստ «ինքնաիրացման» տեսության (Ֆ.Բրեդլի, Ռոյսի, Կրոշե) բարոյական բոլոր որակները պայմանավորված են մարդկանց անհատականությամբ՝ «ինդիվիդուալ «ես»-ով»: Միայն այդ «ես»-ով է բացատրվում պատվի ըմբռնման աստիճանը:

Հիշատակված տեսություններում լիովին անդրադարձ չի կատարվում այլ 'ես'-ի կամ հասարակական գոյության նշանակությանը: Այսպես, եթե մարդն իր գործունեության համար պետք է պատասխանատու լինի ոչ միայն հասարակության առաջ, որը գլխավորն է, այլ ինքն իր առաջ, ապա անհրաժեշտ է հաշվի առնել այն իրողությունը, որ մարդիկ պետք է պատվի զգացումով վերաբերվեն յուրաքանչյուր անձի նկատմամբ, այսինքն եթե դու գնահատում ես դիմացինիդ արժեքը, ապա դրանով իսկ հաստատում ես քո արժեքը: Հենց այս համատեքստում էլ կարելի է պնդել, որ պատվի և արժանապատվության սոցիալական ըմբռնումը ունի նաև օրենքի իմաստ:

Այստեղ արդեն երևան է գալիս հարցի իրավական կողմը, այն է. իրավունքը իրեն հայտնի միջոցներով պաշտպանության տակ է վերցնում քաղաքացու պատիվը և արժանապատվությունը:

Այնուամենայնիվ, պատիվը՝ որպես անձի բարոյական, քաղաքական, աշխատանքային, գործնական և այլ հատկանիշներին հանրության կողմից տրվող օբյեկտիվ սոցիալական գնահատական, միաժամանակ, դիտարկվում է՝ որպես հասարակության անդամի, սոցիալական և հոգևոր հատկությունները բնութագրող հիմնական չափանիշ, որը մեծ մասամբ կախված է հենց իրենից, իր դրսևորած վարքագծից, այլ մարդկանց, հասարակության և պետության հանդեպ ցուցաբերած վերաբերմունքից:

Իսկ, արժանապատվությունն անձի կողմից իրեն տրվող սոցիալական գնահատականի գիտակցումն է, այսինքն՝ սեփական հատկությունների, կարողությունների ունակությունների, աշխարհայացքի, հասարակական արժեքավորության ինքնագիտակցումը և ներքին ինքնագնահատականը:

Բարոյական կատեգորիաների շարքում դասվող հիշատակված արժանիքներն ապահովում են սուբյեկտի սոցիալական գնահատականը և նրա դերը հասարակության մեջ: Այդ գնահատականը կախված չէ գնահատվող անձի ցանկությունից և կամքից, քանի որ անձի ողջ կենսագրությունն անցնում է հանրության հսկողության ներքո և հանրությունն էլ ձևավորում է յուրաքանչյուր կոնկրետ անձի բարոյական գնահատականը⁹: Սեփական արժանապատվության գիտակցումը պետք է հենվի անձի կողմից իր առավելությունների և թերությունների լիակատար ըմբռնման վրա¹⁰:

Բացի դրանից, արժանապատվությունը մարդկային հատկանիշ է, որը հավասարազոր է հարգվելու իրավունքին և ուրիշներին հարգելու պարտականության: Այն ձեռք է բերվում անձի զարգացման որոշակի շրջանում, երբ վերջինս գիտակցում է իր ազատությունը և հավասարությունը մյուսների նկատմամբ, իր պաշտպանվածությունը, երբ մարդը սկսում է արժևորել իրեն, գնահատել իր տեղը հասարակության մեջ: Արժանապատվության տակ նաև կարելի է հասկանալ մարդու և նրան շրջապատողների կողմից նրա որոշակի բարոյական և մտավոր կարողությունների ընդունումն ու ճանաչումը: Միաժամանակ, մարդու արժանապատվությունը որոշվում է ոչ միայն սուբյեկտի ինքնագնահատականով, այլ մարդու օբյեկտիվ հատկությունների համակցությամբ, որոնցով բնութագրվում է նրա վարկանիշը հասարակության մեջ (բանականություն, բարոյական տվյալներ, գիտելիքների մակարդակ, սոցիալապես օգտակար հատկություններ, արժանավայել կենսաձև և այլն): Մարդն իր բնույթով, լինելով հասարակական էակ, նրա արժանապատվության զգացումը առաջ է գալիս հասարակական հարաբերությունների ոլորտում:

Իսկ մարդու արժանապատվության համար ամենակարևոր նախադրյալը նրա հնարավորությունների (մարդու իրավունքների) ազատ և անարգել իրագործումն է:

⁹ Տես՝ Анисимов А.Л. Чеать, достоинство, деловая репутация, гражданско-провавая защита. М. 1994, ст.13.

¹⁰ Տես՝ Վ.Այվազյան, Մարդու իրավունքներ, Տիգրան Մեծ, Երևան 2007թ. էջ 91:

Բնականաբար, մարդու իրավունքների և ազատությունների ցանկացած ոտնահարում հանգեցնում է մարդու արժանապատվության նսեմացման: Այդ է պատճառը, որ արժանապատվության իրավունքը հանդիսանում է մարդու իրավունքի և ազատությունների հիմնական աղբյուրը, և որի պաշտպանությունը համարվում է պետության գոյության հիմնական պայմանը:

Պատվի և արժանապատվության կարևորագույն առանձնահատկություններից է նաև դրանց անօտարելիությունն ու անփոխանցելիությունն, ինչպես նաև սուբյեկտին անհատականացնելը: Այս հատկանիշներից բխում է, որ այդ բարիքները որևէ գործարքի առարկա հանդիսանալ չեն կարող. դրանք վաճառել, նվիրել, գրավ դնել, փոխանակել կամ այլ եղանակով օտարել հնարավոր չէ: Անձնական այդ բարիքներն այդպիսիք կրողների համար գոյություն ունեն և ինքնուրույն արժեք են ներկայացնում՝ անկախ դրանց իրավական կարգավորման աստիճանից և բնույթից, անկախ դրանց կապակցությամբ առաջացող սուբյեկտիվ իրավունքներից: Այդպիսիք քաղաքացիական իրավունքի սուբյեկտները ձեռք են բերում և իրականացնում են իրենց կամքով:

Այսպիսով, արժանապատվության՝ որպես իրավական արժեքի պաշտպանություն, համարվում է իրավական պետության գոյության հիմնական պայմանը:

Հայաստանի Հանրապետությունում ճանաչված է մարդու արժանապատվության սկզբունքն, որն իր արտահայտությունն է գտել (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Միաժամանակ, արժանապատվության սկզբունքն իր ամրագրումն է ստացել (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածում, համաձայն որի՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է: (2015

թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածում, համաձայն որի՝ ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մարմնական պատիժներն արգելվում են: Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

Այսպիսով, արժանապատվության ու պատվի՝ որպես իրավական ու բարոյական արժեքների վերաբերյալ բերված դատողությունների ու դրանց իրավական կարգավորումների համադրված վերլուծությունների համատեքստում անհրաժեշտ է վեր հանել հետևյալը.

1. եթե իրավական նորմերը սահմանվում են պետության կողմից, ապա բարոյական նորմերը ծագում են տարերայնորեն,

2. եթե իրավական նորմերն իրենց ամրագրումն են ստանում գրավոր աղբյուրներում, ապա բարոյական նորմերը գոյություն ունեն մարդկանց գիտակցության մեջ,

3. եթե իրավական նորմերի իրացումն ապահովված է պետական հարկադրանքի հնարավորությամբ, ապա բարոյական նորմերը կյանքի են կոչվում մարդկանց կամարտահայտության ու հասարակական կարծիքի ուժով,

4. վերջապես՝ եթե իրավական կարգավորման ոլորտն այն հարաբերություններն են, որոնք գտնվում են պետական վերահսկողության ներքո, ապա բարոյական կարգավորման ոլորտները պետությանն ենթակա չեն:

Այնուամենայնիվ, իրավունքի ու բարոյականության սերտ կապերն ու փոխգործողությունները մեծապես նպաստում են սոցիալական այդ երկու կարգավորիչների՝ արժանապատվության ու պատվի դերի կարևորմանը, դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, հասարակական հարաբերությունների կայունացմանն ու ամրապնդմանը:

1.3. Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների ու ազատությունների հիմք և մարդկային հատկանիշ

«Անձի արժանապատվություն» եզրույթն ի սկզբանե ընկալվել է որպես բարոյագիտական կատեգորիա: Սակայն, այդ հասկացության որպես մարդու իրավունքների հիմքի և մարդկային հատկանիշի էության ուսումնասիրության համար անհրաժեշտ է նախ, վերհանել այդ հասկացության բովանդակությունը, ուսումնասիրել պատմական էվոլուցիան այնուհետև, պարզաբանել դրա իմաստը և վերջում, հստակեցնել խնդրո առարկայի վերաբերյալ առկա գիտամեթոդաբանական պատկերացումները¹¹:

Մեր կողմից վերլուծության ենթարկված գիտական գրականությունում հանդիպում են բավականին աշխատություններ, որոնք նվիրված են անձի արժանապատվության ու պատվի ինչպես նաև դրանց պաշտպանության, որը ծնունդ է առել մարդկային հասարակության առաջացման սկզբնական շրջանում և իրենից ներկայացնում է բոլոր մարդկանց պատկանող արժեք¹²:

Արժանապատվության վերաբերյալ պատմականորեն վաղ պատկերացումները գոյություն են ունեցել դեռևս նախնադարյան հասարակությունում:

¹¹ Այս հասկացությունն իր արտացոլումն է գտել փիլիսոփաներ՝ Արիստոտելի և Պլատոնի, Ի. Կանտի և Ժան-ժակ Ռուսոյի, Շ. Ֆուրիեի, ռուս մտավորականների՝ Ն.Ա. Բերդյակի, Ս.Ն. Բուլգակովի, Ա.Ի. Գերցենի, Դ.Ա. Մերեժկովսկու, Վ.Վ. Ռոզանովի, Ն.Օ. Լոսսկու, Պ.Ա. Ֆլորենսկու, Ս.Լ. Ֆրանկի, հայ մտածողների՝ Մովսես Խորենացու, Մխիթար գոշի, Շահամիր Շահամիրյանի, Մովսես Բաղրամյանի, Ժամանակակից հայ իրավագետներ Ա.Երիցյանի, Վ.Այվազյանի, Գ.Մուրադյանի և այլոց աշխատություններում:

¹² Տես՝ Кулиуш О.А. Честь, достоинство и деловая репутация - фундамент правового государства. - М., 2008; Цыбулевская О.И., Власова О.В. Достоинство личности и гражданское общество. - Саратов, 2008; Паладьев М.А. Конституционное право человека на честь и достоинство (основания, содержание, защита): Автореф. дис. ... канд. юрид. наук. - М., 2006; Власов А.А. Проблемы судебной защиты чести, достоинства и деловой репутации: Автореф. дис. ... докт. юридич. наук. - М., 2000; Потапенко С.В. Проблемы судебной защиты от диффамации в СМИ: Автореф. дис. ... докт. юридич. наук: 12.00.03. - Краснодар, 2002. - 44 е.; Дулясова М.В. Социальная защита работника: жизнь, здоровье, деловая репутация: учебное пособие для студентов высших учебных заведений. - М., 2008; Никуличева Н.Ю. Право юридических лиц на деловую репутацию и его гражданско-правовая защита. - Новосибирск, 2005; Резник Г.М., Скловский К.И. Честь. Достоинство. Деловая репутация: споры с участием СМИ. - М., 2006; Эрделевский А.М. Компенсация морального вреда: анализ и комментарий законодательства и судебной практики. - 3-е изд., исправл. и дополн. - М., 2007; Кузнецов Н.М. Содержание отношений по защите чести, достоинства и деловой репутации: Автореф.дис. ... канд. юрид. наук / РУДН. - М., 2009, Ա.Երիցյան, Մարդու իրավունքների և դրանց պաշտպանության հիմնախնդիրները գլոբալիզացիայի դարաշրջանում, Եր., 2007, Մարդու իրավունքները (տեսության և պրակտիկայի հիմնահարցերը) Եր., 1999, Վ.Այվազյան, Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք // Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Եր., 2012, էջ 237, Մարդու իրավունքներ, Եր., 2002, Գ.Մուրադյան ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի) Եր 2010, էջ 163-170) և ուրիշները:

Նախնադարյան հասարակությունը իրենից ներկայացրել է մարդկանց վարքի և փոխգործակցության ինքնակազմակերպվող համակարգ և ունակ է եղել մշակել արժեքային կողմնորոշումներ (մոնոնորմեր)՝ ապահովելով մարդկանց շահերի իրացումը որոշակի կանոններով:

Նախնադարյան հասարակությունում, որը հիմնված չլինելով նորմերի վրա՝ սոցիալական արդարությունն արտահայտել է մոնոնորմերով, անձը միշտ ասոցացվել է ցեղի կամ տոհմի հետ: Անձին վիրավորելը համարվում էր վիրավորանք ցեղին կամ տոհմին: Դրանով իսկ անձը փաստացի կլանվում էր այն խմբի կողմից, որին նա պատկանում էր: Այդ սովորույթները պահպանվում էին կարծրացած և համընդհանուր կարգի ուժով: Մարդիկ հավասար էին «յուրովի» սակայն պարտավոր էին հարգել յուրաքանչյուրի իրավունքները և արժանապատվությունը:

Եթե իրավունքում կանոնները ձևակերպվում և իրացվում են որպես համընդհանուր, պարտադիր օրենսդրական նորմեր, ապա սովորույթն առաջանում և զարգանում է հենց հասարակության վարքագծում՝ մարդկանց մշտական և երկարատև փոխգործակցության գործընթացում՝ հանդիսանալով ընդհանուր և անհատական պատկերացումներում որպես կամքի զգացում, պատմական կենսափորձ:

Յուրաքանչյուր դարաշրջան յուրովի է լուծել մարդու արժանապատվության հավերժ խնդիրները, նորովի վերաիմաստավորելով ճշմարտությունները, որոնք նախորդների կողմից բացարձակ էին համարվում:

Պլատոնի էլիտոլոգիական գիտությունում արժանապատվությունը հիմնականում որոշվում է սոցիալական շերտավորմամբ, սակայն, հաշվի առնելով մարդկանց հոգեբանությունը, որոնց նա բաժանում է ընտրյալների և բազմություն կամ զանգված կոչվող ծառաների: Պլատոնն, իր «Պետություն» հիմնարար աշխատությունում ցույց է տալիս, որ բազմությունը չի կարող օժտված լինել արժանապատվությամբ, դրա համար էլ ոչ մի արժեք չի ներկայացնում ընտրյալների համար¹³:

Գերմանացի հետազոտողների աշխատություններում նշվում է, որ Պլատոնը տարբերել է արժանապատվության հետևյալ տարատեսակները՝ ի ծնե բնական

¹³Stu՝ Платон. Собрание сочинений. Т.4, М.,1994. էջ 744:

արժանապատվությունը, դաստիարակության արդյունքում ձևավորվող արժանապատվությունը, կրթության միջոցով ձեռք բերվող արժանապատվությունը¹⁴:

«Արժանապատվություն» ընդլայնված ըմբռնումը պայմանավորված է եղել տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցող էթիկափիլիսոփայական հայեցակազմերով, որոնցում հենց արժանապատվությունը կամ դրա պատմական հոմանիշները (օրինակ՝ պատիվը) մեկնաբանվում էին տարբեր իմաստներով:

Վաղ հին հունական փիլիսոփայությունում արժանապատվությունը մտնում էր բարոյականության, իմաստության, ողջամտության, առաքինության մեջ, որն իր հերթին ներառում էր մարդու բոլոր դրական որակները:

Արիստոտելը հայտնի «Նիկոմախի բարոյագիտություն»¹⁵, «Եվդեմոսի բարոյագիտություն» և «Մեծ բարոյագիտություն» աշխատություններում ներկայցված իր առաքինությունների մասին ուսմունքում, պնդում էր, որ առաքինությունը հանդիսանում է հոգու գովելի ձեռք բերվող հատկություն և յուրաքանչյուր մարդ պետք է իր աշխատանքով, ուսումով և դաստիարակությամբ ձգտի այն ձեռք բերելու: Նրա մեկնաբանությամբ այն ամենն, ինչ մենք ունենք բնությունից, սկզբնապես տրամադրվում է մեզ միայն հետագայում իրականության մեջ իրագործվող հնարավորությունների տեսքով¹⁶:

Առաջին անգամ Արիստոտելի աշխատություններում մենք կարող ենք տեսնել արժանապատվության տարբերակված/առանձնացված հասկացությունը բնակչության առանձին սոցիալական շերտերի համար: Դիտարկելով արժանապատվությունը և պատիվը որպես մեծագույն արտաքին բարիք, նա նշում էր, որ «մեծ մարդիկ ամենից շատ են իրենց համար պահանջում պատիվ և փառք, որոնք համապատասխանում են

¹⁴ Stü' Ricken F. Platonismus und Pragmatismus. Eine interpretation von Platon, <<Politeia>> //Theologie und Philosophie. Freiburg etc., 1995. Jg. 70, H.4. էջ 481-493:

¹⁵ Stü' «НИКОМАХОВА ЭТИКА» – одно из трех (наряду с «Евдемовой этикой» и «Большой этикой») этических сочинений Аристотеля. От него до нас дошло три произведения по этике – единственный в своем роде случай, который до настоящего времени остается для исследователей загадкой. Возможно, они являются тремя прочитанными в разное время курсами лекций. Особой, также не имеющей объяснения проблемой является полное совпадение V–VII книг «Никомаховой этики» с IV–VI книгами «Евдемовой этики». Впервые название всех трех «Этик» Аристотеля встречается у стоика Аттика. Считается, что свое название она получила оттого, что впервые (ок. 300 до н.э.) была издана Никомахом – сыном Аристотеля; есть предположение, что сам Аристотель посвятил ее сыну или отцу, которого также звали Никомахом. Первое несомненное свидетельство о «Никомаховой этике» встречается у Цицерона (De fin., v. 12).

¹⁶ Stü' Аристотель. Этика. Политика. Риторика. Поэтика. Категории. Мн.: Литература, 1998. էջ 167:

նրանց արժանապատվությանը», արձանագրելով որոշ կախվածություն արժանապատվության և գույքային կարգավիճակի միջև:

Պաշտպանելով նշված դիրքորոշումը՝ Արիստոտելը ներկայացնում է փաստարկներ, որի համաձայն պատիվը ճանաչվում է որպես բարձր ցեղի մարդկանց, կառավարիչներին և աստվածներին պատկանող, քանի որ նրանք բարձր են մյուսներից ցանկացած բարիքի ուժով, ուստի դրանց շնորհիվ են նրանց հարգում, չնայած, արդարացիորեն միայն լավ մարդն է արժանի հարգանքի, իսկ նա, ով միավորում է գույքային կարգավիճակը և լավ մարդկային որակները, նրան առավել շատ են հարգում¹⁷:

Բնութագրելով արդարության սկզբունքը, որպես պետական բարիք¹⁸, Արիստոտելը օգտագործում է արժանապատվության սոցիալական շերտերի դասակարգման մեթոդը, ընդգծելով, որ «... ոչ բոլորն են տեսնում արժանապատվության չափանիշը միևնույնի մեջ. ժողովրդավարական քաղաքացիները այն տեսնում են ազատության մեջ, օլիգարխիկ քաղաքացիները՝ հարստության մեջ, իսկ ազնվական քաղաքացիները՝ առաքինության մեջ»¹⁹:

Այսպիսով, Արիստոտելի ըմբռնմամբ, արժանապատվությունը հանդիսանում է այնպիսի տարրերից ձևավորվող համալիր հասկացություն, ինչպիսիք են խելացի դատողությունները, բարեխիղճ վարքը, ներքին դրական որակները, ներառյալ օրինապահությունը, առաքինությունը և չափավորությունը: Արիստոտելը ապացուցել է, որ առաքինությունը՝ հոգուն սոցիալապես վերագրելի և հավանության արժանացած որակներն են, որոնք մարդուն չեն տրվում բնությունից, այլ դաստիարակվում են նպատակամղված գործողության արդյունքում:

Հին Հունաստանի բնակիչների գիտակցության մեջ պետությունը ներկայացնում էր հասարակական հարաբերությունների այնպիսի կազմակերպություն, որտեղ օրենսդիր պատիժներից ավելի քիչ էին վախենում, քան շրջապատողների կշտամբանքից: Հսկայական, եթե ոչ որոշիչ, ազդեցություն է ունեցել հասարակական կարծիքը, որը ոչ միայն արտահայտում էր իր անդամների շահերը, այլ նաև կատարում

¹⁷ Sbu՝ Аристотель. Этика. Политика. Риторика. Поэтика. Категории. Мн.: Литература, 1998. Ёջ 230-231:

¹⁸ Sbu՝ նույն տեղում Ёջ 521:

¹⁹ Sbu՝ նույն տեղում Ёջ 252:

էր իրավաստեղծ գործառույթ՝ մշակելով հետագայում որպէս օրենքներ փոխակերպված հասարակական հարաբերությունների սեփական նորմատիվային կարգավորիչները:

Հանդես գալով որպէս վարքի կարգավորիչ, արժանապատվությունը թույլ չի տալիս մարդուն կատարել իր արժանապատվությունից ցածր արարքներ: Ունենալով որպէս վարքի շարժառիթ՝ անձը կողմնորոշվում է դեպի որոշակի էտալոնի, որին պետք է համապատասխանի իր կողմից զբաղեցրած մակարդակի մարդու վարքը:

Պլատոնի, Արիստոտելի աշխատություններում, ինչպէս նաև այլ մտածողների աշխատություններում, ըստ Ի.Ն.Շտանկոյի դիտարկվող կատեգորիայի իրավական կողմերը և դրանով պայմանավորված անձի կեցության հատկությունները գործնականում չեն շոշափվել²⁰: Ամենից շատ արժանապատվությունը վերլուծվել է հետազոտվող ֆենոմենի սուբյեկտիվ բովանդակության տեսանկյունից՝ որպէս մարդու՝ սեփական որակների ինքնագնահատման հանդեպ ռեֆլեքսային վերաբերմունք:

Աստիճանաբար սոցիալական անհավասարությունը, մասնավոր սեփականության շահերը, անհատների մրցակցությունը և հասարակությունում մարդկանց անհավասար կարգավիճակը ավելի շատ է նպաստել օբյեկտիվ իմաստով արժանապատվության, հասարակությունում մարդու դիրքից կախվածության հասկացության զարգացմանը:

Հռոմեական իրավունքում հստակ երևում է իրավական նորմերի առանձնացումը նախնադարյան հասարակության սովորաբար ավանդական կարգավորումների սկզբնական համախառն սինկրետիկությունից, ինչի կապակցությամբ արժանապատվությունը (dignitas) հիմնականում որոշվում էր կաստայական դասական արտոնություններով և ասոցացվում էր որոշակի կարգավիճակի խմբերի հետ:

Որքան պատվելի կամ ազդեցիկ պաշտոն է զբաղեցրել քաղաքացին, այնքան ավելի բարձր արժանապատվության նա կարող էր հավակնել: Հռոմի քաղաքացին, ինչպէս կարծում էին, օժտված է այս կամ այն իրավունքներով ոչ թե ծնվելուց, այլ կախված նրանից, թե ինչ իրավունքներ է տալիս նրան պետությունը (կամ մերժում):

Այսպիսով, արժանապատվության իրավունքը հռոմեական իրավաբանության մեջ դիտարկվում էր որպէս արտոնություն, որը կարող էին կորցնել պետության հայեցողությամբ: Դա ենթադրում էր տարբեր մարդկանց տարբեր

²⁰ Стан' Штанько И.Н. Достоинство личности как правовое явление: Автореф. дис. ...канд. юрид. наук. Владимир, 2006. էջ 4:

պատասխանատվություն միևնույն գործողությունների համար, այսինքն փաստացի օրինականացրել է ընտրովի արդարադատությունը: Ստրուկտուրալ հոռմեական իրավունքում դիտարկվում էին որպես իրեր (*servus est res*), ինչի կապակցությամբ չէին կարող հավակնել արժանապատվության իրավունքին, չնայած, բարոյականության տեսանկյունից, անպայման օժտված էին դրանով:

Նշենք նաև, որ «արժանապատվությունը» առաջացել է լատիներեն *dignitas* բառից, որը հոռմեական դասական մտածողների կողմից մեկնաբանվում էր որպես կարգավիճակ, այն բնութագրվում էր որպես պետությանը և հանրային պաշտոններին վերաբերելի հատկանիշ:

Միջնադարի ժամանակաշրջանում եվրոպական երկրներում աշխարհայացքի կարևորագույն տարբերվող գիծ էր հանդիսանում կողմնորոշումը դեպի Աստված և դրա հետ կապված փրկության գաղափարը: Մարդու արժանապատվության մասին պատկերացումները հիմնվում էին Աստծո առջև բոլորի հավասարության և աստվածային կերպարանքով մարդու արարման կրոնամիստիֆիկացված պատկերացումների վրա: Քրիստոնեական եկեղեցին շեշտում է մարմնի և հպարտության հնազանդեցումը, զսպումը ի հակադրություն անտիկ ժամանակներում մարդու գիտակցության և կամքի պաշտանմունքի:

Հռչակավոր աստվածաբան և փիլիսոփա Թոմա Աքվինացին ենթադրում էր, որ մարդու, հասարակության և տիեզերքի բարօրությունը որոշվում է աստվածային մտքով, և մարդու կողմից աստվածային օրենքների խախտումը հանդիսանում է իր իսկ սեփական բարօրության դեմ ուղղված գործողություն: Ընդ որում, օրենքն, իր կողմից սահմանվում էր որպես գիտակցության ցանկացած դրսևորում, որը հոչակվում է նրանց ընդհանուր բարօրության համար, ով հոգ է տանում հասարակության մասին: Աքվինացին արժանապատվությունը սահմանափակում էր անարդար օրենքին հակադրվող խղճով²¹:

Թ.Աքվինացու աշխարհահայացքը ձևավորվել է բնական իրավունքի անտիկ գաղափարների վրա, դրա համար էլ նա պնդում էր, որ պետության նպատակն է հանդիսանում բնակչության համար կյանքի արժանապատիվ պայմանների ստեղծումը:

²¹ Sten' Бандуровский К.В. Проблемы этики в <<Сумме теологии>> Фомы Аквинского // Вопросы философии. 1997. N 9. էջ 156:

Բնական օրենքը, իր կարծիքով, նախանշել է հարգել մարդկանց արժանապատվությունը, քանի որ նրանցից յուրաքանչյուրը ունի աստվածային ծագում և արժանապատվության բնական իրավունքներ:

Ճիգվիտների ուխտին (կաթոլիկության մտավոր կորիզին)²² պատկանող իսպանացի հետազոտող Կ.Վալվերդեն, բնութագրելով նշված ժամանակաշրջանի հայացքները, նշում է որ՝ «... աստվածամանությունը պայմանավորում է մարդու արժեքը և արժանապատվությունը: Աստված խոսում է նրա հետ, ուղղորդում է նրան, բացատրում է, որ կա բարի և չար, օգնում է նրան, հարգում է նրա ազատությունը, պարգևատրում կամ պատժում է: Այդ ամենով Աստված հաստատում է մարդու արժանապատվությունը:»²³:

Նա քննադատում է մարդու արժանապատվության իրավունքը գույքային դիրքից կախվածության մեջ գնահատելու փորձերը, կոչելով այն «չար մոլորություն» և ընդգծում է, որ մարդու հոգու արժեքները պետք է բարձր լինեն մարմնական արժեքներից:

Արտացոլելով միջնադարի պատմական պայմանների ճգնաժամը և հակասականությունը, արժանապատվության հասկացությունը, ինքն է հայտնվում որպես զուգակցված ներքին հակասություններից: Այնուամենայնիվ, հենց միջին դարերում է իրավունքը հավակնում սոցիալական շերտավորման սկզբունքով որոշվող արժանապատվության այս կամ այն «ծավալին», աստիճանաբար ձևական է դառնում, ձեռք բերելով իրավաբանական չափանիշները: Տվյալ դարաշրջանի իրավական տեսանկյունից ելնելով, մարդկային արժանապատվությունն արտացոլում էր այն կրողի դասային պատկանելիությունը: Դասային բաժանումը համարվում էր Աստծո կողմից տրված և ներկայացվում էր հասարակության կառավարման բավականին գործառույթային եղանակ:

²² Иезуиты, или Орден Иезуитов — мужской монашеский орден Римско-католической церкви, основанный в 1534 году Игнатием Лойолой и утверждённый Павлом III в 1540 году. Официальное название — Общество Иисуса (лат. Societas Jesu), также Орден св. Игнатия (по имени основателя)./hram-troicy.prihod.ru/

²³ Стн՝ Вальверде К. Философская антропология. Пер. с исп. М., 2001. Ёջ 249:

Մ.Յու.Բրաժնիկովի կարծիքով, ֆեոդալական դասային համակարգը բնակչության մեծամասնության կողմից ընկալվում էր *ոչ միայն որպես բավական արդար, այլ նաև միակ հնարավոր*²⁴:

Այնուամենայնիվ, միջնադարյան օրենսդրությանը բնորոշ օրինակ հանդիսացող «սալիկյան ճշմարտությունը»²⁵, ամրագրել է պատիժներ մարդկային արժանապատվության ոտնհարման համար՝ կախված ոչ միայն դասից, այլ նաև վիրավորանքի ծանրությունից: Տվյալ փաստաթղթի XXX բաժինը պարունակում է մեղավոր անձի նկատմամբ կիրառվող կոնկրետ տուգանքներ. «Եթե որևէ մեկը մյուսին անվանի այլանդակ, պետք է վճարի 3 սոլ: Եթե տղամարդը կամ կինը ազատ կնոջը անվանի անառակ և չապացուցի այն, պետք է վճարի 45 սոլ»²⁶:

XV դարում վերածննդի դարաշրջանում եկեղեցական սահմանափակումների հաղթահարումը մարդու արժանապատվության թեման դարձնում է կենտրոնական, արմատապես փոխվում է վերաբերմունքը մարդու նկատմամբ, որը մղվում է առաջին պլան, ազդարարելով աշխարհականացման գործընթացը: Վերածննդի առաջադեմ մտածողները մեծ ներդրում ունեցան մարդու իրավունքների տեսության զարգացման մեջ: Դրանց մեջ են Հ.Հրոցին, Թ.Հոբսը, Զ.Լոքը, Բ.Սպինոզան և ուրիշներ, որոնց կարծիքով հասարակությունում հարաբերությունների հիմնական կարգավորիչը հանդիսանում է իրավունքը, հռչակվում է մարդու իրավունքների առաջնայնությունը:

Ինչպես նշել է հայտնի հումանիստ Զ.Մանետտին եթե ընդունենք, որ այլ կենդանի էակները ստեղծվել են բացառապես մարդու համար, ապա կարելի է եզրակացնել որ միայն մարդու համար է ստեղծվել և կառուցվել Աստծո կողմից աշխարհը²⁷:

Փիլիսոփա ռացիոնալիստ Բ.Սպինոզայի աստվածաբանական-քաղաքական աշխատությունն ուղղված է Սուրբ գրի գիտական իմաստավորմանը, աստվածաբանության նախապաշարմունքների հայտնաբերմանը և վերացմանը:

²⁴ Տես՝ Бражников М. Ю. К вопросу об отражении средневекового менталитета в нормах обычного средневекового права // Государство и право. Н 10. 2000. էջ 64:

²⁵ Салическая правда (Lex Salica) является записью древних судебных обычаев салических франков, обосновавшихся на территории Римской Галлии и создавших в V—VI вв. самое крупное варварское королевство в Западной Европе.

²⁶ Տես՝ Салическая правда // Хрестоматия по всеобщей истории государства и права в 2 т. Т. 1.М.: Юрист, 2002. էջ 246:

²⁷ Տես՝ Манетти Дж. О достоинстве и превосходстве человека //Итальянский гуманизм эпохи Возрождения: сб. текстов/ под ред. С. М. Стама. Саратов, 1988.Ч. 2. էջ 8-68:

Հեղինակը կասկածի տակ է դնում կույր հավատքը կրոնի հանդեպ, պնդելով, որ կարծիքների, հավատքի ազատությունը պետության մեջ պետության գոյության պարտադիր չափանիշ է, իսկ այդ ազատությունների բացակայությունն առաջացնում է հենց պետության հանգստության և բարեպաշտության ոչնչացում²⁸: Օրենքները այդպիսի պետությունում նա անվանում էր բարիք ամբողջ ժողովրդի, այլ ոչ թե տիրակալի համար, և հետևաբար, մարդը, ով գործում է օրենքի շրջանակներում, արդեն իսկ չի լինի անազատ ստրուկ, այլ կլինի բանականության ցուցումով ապրող հնազանդ ծառա²⁹:

Հոլանդացի իրավաբան և պետական գործիչ Հ.Հրոցին «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» հայտնի աշխատությունում պնդում էր, որ պետությունը՝ իրավունքի և ընդհանուր օգուտի պահպանման համար կնքված ազատ մարդկանց միություն է³⁰:

Մշակելով աշխարհիկ իրավական տեսությունը՝ նա տարբերում էր բնական իրավունք և կամավոր սահմանված իրավունք, որը փոփոխվում է ժամանակի մեջ և տարբեր է տարբեր վայրերում կախված աղբյուրից, կամավոր սահմանված իրավունքը նրա կողմից դասակարգվել է աստվածային իրավունքի և իր հերթին ներպետական իրավունքի և ժողովուրդների իրավունքի բաժանվող մարդկային իրավունքի:

Ազատականության բրիտանացի տեսաբան Ջ.Լոքը համարում էր, որ պետության հիմքում ընկած են տարատեսակ անձնային (մասնավոր) շահեր, իսկ օրենքի նպատակն է ոչ թե ազատության ոչնչացումը և սահմանափակումը, այլ ազատության պահպանումը և ընդլայնումը: Նա պայմանավորել է արժանապատվությունը մարդու չօտարվող իրավունքներով՝ կյանքի, ազատության և սեփականության իրավունքներով: Ազատությունը, նրա խոսքերով գոյություն ունի այնտեղ, որտեղ յուրաքանչյուրը ճանաչվում է իր անձի տիրապետող³¹: Ջ.Լոքի հայտնի տրիադան (կյանքի, ազատության և սեփականության իրավունքը), հետագայում անկյունաքար հանդիսացավ բազմաթիվ պետությունների սահմանադրությունների համար³²:

²⁸ Տես՝ Спиноза Б. Богословско-политический трактат //Электронная библиотека <<Гражданское общество>>: URL: http://www.civisbook.ru/files/File/Spinoza_B-P_tr.pdf.

²⁹ Տես՝ Гроций Г. О праве войны и мира. М.: Ладомир, 1994. Էջ 74:

³⁰ Տես՝ Гроций Г. О праве войны и мира. М.: Ладомир, 1994. Էջ 74:

³¹ Տես՝ Локк Дж. Сочинения, М.: Мысль, 2008. Т. Էջ 357:

³² Տես՝ Локк Дж. Избранные философские произведения. В 2-х т. Т. 2. Էջ 28:

Լուսավորության դարաշրջանի ֆրանսիացի փիլիսոփա Ժ.-Ժ.Ռուսոն անձի արժանապատվության սկզբնաղբյուրը գտնում էր ազատության մեջ, որը մարդկանց մեծամասնությունը կորցրել է անհավասարության և սեփականության առաջացման հետ: Այնուամենայնիվ, նա վստահ էր, որ ոչ մի ազատություն առանց օրենքների գոյություն ունենալ չի կարող. «Անգամ իր բնական վիճակում մարդն ազատ է միայն շնորհիվ բնական օրենքի, որը կառավարում է բոլորին: Արժանապատվությամբ օժտված մարդը ենթարկվում, սակայն չի ծառայում, նրան կառավարում են, սակայն նա տեր չունի, նա ենթարկվում է միայն օրենքներին և հենց դրա ուժով մարդկանց չի ենթարկվում»³³:

Իրավակարգի գոյության ապահովումը պետության մեջ ձեռք է բերվում ոչ թե մասնավոր շահերի համախմբությամբ, այլ անհատի կողմից գիտակցված ընդհանուր շահի միջոցով, որը միջնորդավորված է ինչպես սոցիալական խմբի, այնպես էլ ընդհանուր առմամբ հասարակության շահերով:

Նույն ժամանակաշրջանում Ի.Կանտի ուսմունքում մարդկային ցեղին պատկանելիությունն արդեն իսկ դիտարկվում էր որպես արժանապատվություն, իսկ արժանապատվության իրավունքը, նրա կարծիքով կրում է բացարձակ բնույթ, քանի որ անհատը իրավունք ունի հավակնել իր հարազատների կողմից հարգանքի, և իր կողմից նա նաև պարտավոր է հարգել ուրիշներին³⁴:

Գերմանական դասական փիլիսոփայության հիմնադրի դատողությունների համաձայն՝ մարդը ոչ մի անգամ չպետք է հանդիսանա նպատակին հասնելու միջոց, այլ միշտ պետք է լինի նպատակ: Մարդու արժանապատվությունը սահմանելով որպես նրա ներքին ազատության չափանիշ, Կանտը ենթադրում է, որ ինքը (ազատությունը) գործնականորեն իրացվում է անձի կողմից գիտակցության երկու տարբեր կարգային գործողություններում՝ ողջամիտ հիմքի համաձայն արարքի ընտրության և սուբյեկտի կողմից հենց այդ հիմքի, գործողության ընդհանուր սկզբունքի ընտրության մեջ: Այդպես մարդը միջոցից (նպատակահարմար գործողության գործակալից) դառնում է սոցիալական շարժման վերջնական նպատակ, իսկ իրավունքի հիմնական սկզբունքը

³³ Տես՝ Руссо Ж.-Ж. Трактаты. М., 1969. Էջ 451:

³⁴ Տես՝ Кант И. Метафизика нравов. Т. 4. Ч. 2. М., 2000. Էջ 404:

հանդիսանում է անձի ազատությունը: Որպես անձի վարքի որոշող է ծառայում մարդուն այս կամ ընտրությունը կատարելու թույլ տվող ազատ կամքը:

Հետագայում Կ.Մարքսն այդ առիթով նկատել է, որ ազատության արքայությունը սկսվում է իրականում միայն այնտեղ, որտեղ դադարում է կարիքով և արտաքին նպատակահարմարությամբ թելադրվող աշխատանքը, հետևաբար, իրերի բնույթով այն ընկած է սեփական նյութական արտադրության ոլորտից այն կողմ³⁵:

«Իրավունքի փիլիսոփայությունում» Հեգելի կողմից լուծվում էր արժանապատվության դիտարկման երկու հակադիր մոտեցումների՝ մետաֆիզիկականի (Կանտ) և պատմական համեմատականի (ֆրանսիացի լուսավորիչներ), համատեղման խնդիրը: Այստեղ հստակորեն արտահայտվեց Հեգելի կողմից դիալեկտիկական հակասության վերլուծական ընկալման նշանակությունը, որը նրա համոզմամբ չի կարելի համարել ինչ-որ աննորմալություն, որը հանդիպում է միայն որևէ տեղ. այն բացասական է իր գոյական սահմանման մեջ, ոչ ավել քան հակասության պատկերի մեջ կայացած ցանկացած ինքնաշարժման սկզբունք³⁶:

Արդյունքում այն հանգում է անձի արժանապատվության իրավաբանական իմաստով պատմական առանձնացմանը հնադարյան սովորույթներից և ավանդույթներից: Սուկրատի փիլիսոփայության օրինակով Հեգելը դիտարկում է բարոյականությունից իրավունքին աստիճանական անցումը: Հասարակական հեղինակությամբ օժտված է տարերայնորեն հաստատված տիրապետող զանգվածային սովորությունը, վարքի պրակտիկան, որը ձեռք է բերում գործող, գոյություն ունեցող օրենքի ուժ³⁷:

Անձի արժանապատվությունը Հեգելի մոտ ձևավորվում է ինչպես կոնկրետ մարդու, այնպես էլ պետության կողմից հարգալից վերաբերմունքից: Նա պնդում էր, որ մարդու արժանապատվությունը կայանում է ազատության մեջ, որը թույլ է տալիս արստրակցիայի ենթարկվել արտաքին և ներքին նախապաշարմունքներից և գիտակցել սեփական իրական կոչումը:

³⁵ Стен' Маркс К. И Энгельс Ф. Сочинения. Т. 25. Ч. 2. Стр 386:

³⁶ Стен' Гегель Г.В.Ф. Наука логики. СПб., 2002. Стр 398:

³⁷ Стен' Гегель Г.В.Ф. Сочинения. М., Т. X, Стр 53:

Հատուկ ուշադրություն դարձնելով պետության մեջ մարդու դերակատարությանը՝ որպես շրջապատողների կողմից անձի սոցիալական գնահատականի չափանիշներից մեկի, Հեգելն ընդգծում էր, որ պետության մեջ քաղաքացին ստանում է իրեն արժանի հարգանք, իր զբաղեցրած պաշտոնի, իր մասնագիտության, ցանկացած այլ աշխատանքային գործունեության շնորհիվ: Դրա արդյունքում նրա հեղինակությունը ունենում է օբյեկտիվ բնույթ՝ անկախ սուբյեկտիվությունից³⁸:

Մարդու միաձուլումը հասարակության հետ, որը նկատի ուներ Հեգելը արժանապատվության էության նկատմամբ իր հայացքներում, ներկայացված է եղել իր տեսության մեջ քաղաքակրթության առաջ գալու հետ վերացվող անցյալի, սոցիալական կյանքի համայնավարական ձևերի ռոմանտիզացիայի և իդեալիզացիայի միջոցով: Բարոյականությունը նույնականացվում էր նրա կողմից պետության կյանքի հետ ընդհանրապես, դասերի, կորպորացիաների և այլ սոցիալական ինստիտուտների գործառույթների հետ: Այդ իմաստով, որպեսզի ունենալ արժանապատվություն, Հեգելի համար նշանակում էր լինել պետության քաղաքացի, որտեղ տիրապետում են լավ օրենքները³⁹:

XIX-XX դդ. ռուս մտածողների աշխատություններում հատուկ ուշադրություն է դարձվել բարոյական հիմքերին: Նրանց կարծիքով, իրավունքը որպես բացարձակ մարդկային արժեքների երաշխավոր, պետք է հարգալից վերաբերմունք դաստիարակի ոչ միայն օրենքում ամրագրված նորմերի, այլ նաև գոյություն ունեցող հոգևոր արժեքների հանդեպ, որոնք իրենց բնութագրերի ուժով, մեծամասամբ չեն կարող ունենալ իրավական պաշտպանություն: Ռուսական փիլիսոփայության կանխադրույթ է հանդիսանում մարդու բարոյական արժանապատվությունը: Միաժամանակ հենվելով մտածողների աշխատությունների վրա մարդը հայտնվում է հակասությունների գերության մեջ: Գիտակցությամբ նա հասկանում է հասարակությունում իրավական կարգի հաստատման անհրաժեշտությունը, սակայն հոգով հանդես է գալիս խղճի օրենքներով մարդկանց միջև հարաբերությունների օգտին և չի ընդունում պոզիտիվ իրավունքը, որը հակասում է նրա բարոյական աշխարհընկալմանը:

³⁸ Сету' Гегель Г.В.Ф. Указ. Соч. Т. III. Стр 222-223:

³⁹ Сету' Гегель Г.В.Ф. Указ. соч.Т. VII. Стр 188:

Ն.Ա.Բերդյաևը պնդում է, որ մարդկային հասարակությունը չի կարող կառուցվել սիրո՝ որպես համընդհանուր պարտադիր և հարկադրողի սկզբի հիման վրա, դրա համար էլ այդ զգացմունքը անհրաժեշտ է ձևավորել դրսից: Նրա կարծիքով, կոնկրետ անձի արժանապատվությունը ճակատագրական կախվածության մեջ է գտնվում հասարակությունից, ինչի կապակցությամբ կորցնում է իր անհատական բնույթը, կլանվելով ինքնակարգավորվող սոցիալական խմբի կողմից: Այդ դեպքում մարդը, իր գործունեության ուղղությունների ճշգրտման համար բացարձակապես ոչ մի ջանք չի գործադրում, ամբողջությամբ հիմնվելով շրջապատողների վրա:

Ն.Ա. Բերդյաևի աշխատություններում արժանապատվության հասկացությունն անխզելիորեն կապված է մարդու կողմից հասարակությունում իր արժեքի գիտակցման հետ, բացահայտվում է մարդու ինքնագնահատականի ձևավորման վրա ազդեցություն գործող գործոնների համախմբության փոխկապվածությունը՝ ընտանիքում դաստիարակությունից մինչև ազգային մտածելակերպի ազդեցությունը:

Վ.Ս.Սոլովյովը, անձի արժանապատվության հիմնական չափանիշներից էր համարում ընտրության ազատությունը, անձի ազատությունը մտքերում և գործողություններում: Նա նշում էր համամասնական կախվածությունը, որի համաձայն անձի՝ հասարակությանը ենթակա լինելու աստիճանը պետք է համապատասխանի հենց հասարակության բարոյական բարիքին ենթակա լինելու աստիճանին, առանց որի հասարակական միջավայրը եզակի մարդու հանդեպ ոչ մի իրավունք չունի⁴⁰:

Հաշվի առնելով տվյալ դիրքորոշումը նա դիտարկում է իրավունքը որպես իրենից ազատության (հիմք) և հասարակական հավասարության համակցություն, ենթադրելով, որ իրավունքն առանց ազատության դառնում է բռնություն:

Արդարացիորեն ընդգծելով իրավունքի հարկադրական բնույթը, Վ.Ս.Սոլովյովն այն կոչում է չարի հայտնի դրսևորումներ չթույլատրելու նվազագույն բարու և կարգի իրագործման հարկադրական պահանջ⁴¹:

Հենց մարդկային արժանապատվությունն է, որին հեղինակը կոչում է բացարձակ, հանդիսանում բոլոր մարդկանց ընդհանուր հայտարարը՝ անկախ գիտելիքներից, գույքային դրությունից և այլն: Իր արժանապատիվ գոյությունն ապահովելու համար

⁴⁰ Ств' Соловьев В. С. Оправдание добра. Соч.: В 2 т. М.: 1988. Т. 1. Стр 130:

⁴¹ Ств' նույն տեղում էջ 38:

մարդու ունակ չլինելն առաջացնում է այնպիսի հանգամանքներ, երբ նա արդեն չի հանդիսանում նպատակ իր և ուրիշների համար, հանդիսանում է միայն տնտեսական արտադրության նյութական գործիք⁴²:

Շարունակելով բնական իրավունքի վերածննդի գաղափարի տեսական հիմնավորումը, Ի.Ա. Իլինը պաշտպանում էր անձի ինքնուրույնությունը պետության մեջ և պահանջում էր նրանից մարդու ինքնուրույն, արժանապատիվ և ազատ կյանքի համար պայմանների ստեղծում: Դրա հետ մեկտեղ, առաջնայնությունը նա տալիս էր ոչ թե առանձին սուբյեկտին, այլ այսպես կոչված կոլեկտիվ անհատին, ընդգծելով, որ մասնավոր շահերը պետք է նահանջեն, ենթարկվեն, որպես միջոց ծառայեն բարձրագույն նպատակի համար, քաղաքացին ենթակա է իր հայրենիքին ծառայությամբ և զոհաբերությամբ⁴³:

Իրավունքի փիլիսոփա Պ.Ի. Նովգորոդցևը դիտարկում էր մարդու արժանապատիվ գոյության իրավունքի իրավաբանական նշանակությունը որպես ժամանակակից իրավունքի զարգացման արդյունք, երբ բարոյական գիտակցությունը անցնում է իրավական գիտակցության, կոչ էր անում ներառել մարդու արժանապատիվ գոյության իրավունքը Մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների հոչակագրում, ինչպես նաև զբաղվել պոզիտիվ իրավունքի համակարգում տվյալ կատեգորիայի իրավաբանական մշակմամբ: Նա պաշտպանում էր յուրաքանչյուրի համար մարդկային գոյության ապահովման անհրաժեշտությունը և ազատել կյանքի այնպիսի պայմանների ճնշումից, որոնք սպանում են մարդուն ինչպես ֆիզիկապես, այնպես էլ բարոյապես⁴⁴:

Հետազոտելով արժանապատվության բովանդակությունը, Պ.Ի. Նովգորոդցևը հատուկ ուշադրություն է դարձրել տվյալ հասկացության տրանսֆորմացիային հաշվի առնելով պետության զարգացման պատմական գործընթացի ազդեցությունը, որի ընթացքում անխուսափելիորեն տեղի է ունենում հասարակության հայացքների և արժեքների փոփոխություն: Նա համարում էր, որ և սահմանադրությունը, և ենթաօրենսդրական ակտերը, և անգամ ինքը իշխանությունը, վերջին հաշվով կոչված

⁴² Տես՝ նույն տեղում էջ 211:

⁴³ Տես՝ Ильин И. А. Наша задача. Собрание сочинений: в 10 т. М., 1993 Т. 2. էջ 83:

⁴⁴ Տես՝ Новгородцев П. И. Право на достойное человеческое существование. Сочинения. М., 1995. էջ 322-323:

են քաղաքացիների բնական իրավունքները իրագործելու համար: Դրա համար էլ բարեփոխումներ անցկացնելու յուրաքանչյուր փորձի դեպքում անհրաժեշտ է բարոյական նորմի պահպանում, որը դարձնում է բոլորին միասնական ձգտելով դեպի բացարձակ իդեալ⁴⁵:

Որևէ իրավունքով, այդ թվում արժանապատվության իրավունքով, օժտված լինելը, ենթադրում է նաև համապատասխան պարտականության առկայություն, առանց որի, Ն.Մ.Կորկունովի ճշգրիտ սահմանմամբ կլինի պարզ թույլտվություն, այլ ոչ թե իրավազորություն, որն ենթադրում է իրավաբանական նորմերի համապատասխան պարտականության սահմանմամբ պայմանավորված իրականացման փաստացի ընդլայնման հնարավորության մեջ արտահայտվող ուղղակի և դրական ազդեցություն⁴⁶:

Անհրաժեշտ ենք համարում դիտարկել անձի արժանապատվության տեղն ու դերը պետության և իրավունքի տեսությունում, հարակից գիտություններում և սահմանադրական իրավունքում:

Այսպես, պետության և իրավունքի տեսության մեջ անձի արժանապատվությունը դիտարկվում է որպես՝ ա) հասարակական կյանքում մարդկային գործոնի բաղկացուցիչ մաս, բ) անձի սոցիալ-իրավական բնութագրի, նրա սուբյեկտիվ (անձնական) իրավունքների, պարտականությունների, ազատությունների կարևոր բաղադրիչ, գ) մարդու և հասարակության, մարդու և պետության, մարդկանց միջանձնային տարբեր հարաբերությունները կարգավորող գործիք, դ) իրավագիտակցության ու իրավական անհրաժեշտ ֆենոմեն, ե) սոցիալական կապերի և մարդկանց փոխհարաբերությունների համակարգ և այլն⁴⁷: Այն, մի կողմից, բարդ և բազմակողմ իրավական գործիքակազմի ազդեցության առարկա է, իսկ մյուս կողմից, յուրաքանչյուր մարդու սոցիալական արժեքի ընդունման արտացոլումն՝ որպես ժամանակակից հասարակության հիմնարար օրինաչափություն և սոցիալ-բարոյագիտական հատկությունների ամբողջություն:

⁴⁵ Տես՝ Новгородцев П. И. Об общественном идеале. М., Издатель <<Пресса>>, 1991. Էջ 107:

⁴⁶ Տես՝ Коркунов Н.М. Лекции по общей теории право. СПб., 1998. Էջ 124:

⁴⁷ Տես՝ Общая теория государства и права: В 2 т. / Отв. ред. М.Н. Марченко. Т. 1. Теория государства. -М., 1998.-С. 312.

Առանձին հետազոտողների կողմից «անձի արժանապատվություն» հասկացության տակ նկատի է ունեցվում «իրավունքով/օրենքով և անհատի համամարդկային ու անհատական հատկանիշների բարոյականությամբ կարգավորվող ամբողջություն, որը բնորոշում է նրա ինքնահարգանքը, արժեքը մերձավորների և հասարակության համար» իսկ «արժանապատվություն» հասկացությունը սահմանվում է որպես «մարդու առանձնահատուկ բարոյական վերաբերմունքը իր հանդեպ, ինչպես նաև նրա հանդեպ հասարակության վերաբերմունքը, որով ընդունվում է անձի արժեքը»⁴⁸:

Տվյալ դեպքում, անհրաժեշտ է կարևորել, որ արժանապատվություն կատեգորիան մի կողմից բնորոշվում է մարդու վերաբերմունքը իր հանդեպ, մյուս կողմից՝ այդ կատեգորիայի միջոցով արտահայտվում է հասարակության վերաբերմունքը նրա հանդեպ: Այսինքն, արժանապատվության ներքին կողմի մասին խոսելիս, նախ, պետք է դիտարկել այն «մարդու արժանապատվություն» կատեգորիայի սահմաններում, իսկ, այնուհետև, արտաքին սոցիալական գնահատականների հետ միասին հիմնավորել, որ մարդու արժանապատվությունը կազմում է նույն «անձի արժանապատվությունը»:

Ռուս իրավագետ Ա.Լ. Անիսիմովի կարծիքով, անձի արժանապատվությունը իր իսկ անհատական հատկանիշների, ունակությունների, աշխարհայացքի, վարքագծի, հասարակական արժեքի, ինչպես նաև անձի ինքնագնահատականն է՝ հիմնված հասարակության կողմից տրվող գնահատականի վրա⁴⁹:

Իսկ Տ.Ա. Կոստարևան անձի արժանապատվությունը ընկալում է որպես «մարդու և նրա շրջապատի կողմից այն փաստի գիտակցումը, որ անհատն ունի որոշակի դրական բարոյական և մտավոր հատկանիշներ: Եթե անձի արժանապատվությունը բնորոշվում է առաջին հերթին անձի ինքնագիտակցությամբ, կրում է սուբյեկտիվ բնույթ, ապա պատիվն առաջին հերթին անձի օբյեկտիվ, հասարակական գնահատականն է, որը բնութագրում է մարդու բարի համբավը/չվարկաբեկված հեղինակությունը հասարակության մեջ»⁵⁰:

⁴⁸ Տես՝ Штанько И.Н. Достоинство личности как правовое явление: Автореф. дис. ... канд. юрид. наук. – Владимир, 2006. 7: Ընդ որում, նույն հեղինակի կողմից առաջարկվում է նաև <<մարդու արժանապատվություն>> և <<անձի արժանապատվություն>> հասկացությունների տարբերակման հետևյալ մոտեցումը, որ մարդու արժանապատվությունն անձի արժանապատվության հիմքն է:

⁴⁹ Տես՝ Анисимов А.Л. Гражданско-правовая защита чести, достоинства и деловой репутации.-М., 2001.-С. 13-15.

⁵⁰ Տես՝ Костарева Т.А. Судебная защита прав и свобод граждан. Научно-практическое пособие. -М. 1999.-С. 183.

Հատկանշական է նաև պրոֆեսոր Ն.Մ. Կուզնեցովի այն պնդումը, որ «մարդու արժանապատվություն» հասկացությունն ուսումնասիրում է քաղաքացիական իրավունքի տեսանկյունից, արժանապատվությունը դիտարկում է որպես կոնկրետ անձի համոզմունքը, որ ինքը համապատասխանում է պատվի օբյեկտիվ սոցիալական այն չափանիշներին, որոնք մշակվել են հասարակության և պետության կողմից:

Կարծում ենք, արժանապատվությունն անխզելիորեն կապված է մարդու ունակության հետ՝ գնահատելու և համեմատելու սեփական արարքները հասարակության պահանջների հետ, ճնշելու սեփական ոչ իրավաչափ ձգտումները և մտադրությունները, որոնց իրականացումը կարող է գնահատվել որպես անպատվություն:

Պրոֆեսոր Պ.Վ. Նադտաչևի աշխատության մեջ արժանապատվությունը բնորոշվում է որպես մարդու կողմից սեփական հատկանիշների, ունակությունների, հասարակության մեջ սեփական դիրքի ներքին գնահատական՝ հաշվի առնելով սեփական զարգացվածության աստիճանը, դաստիարակությունը, աշխարհայացքը և այլն⁵¹:

Այլ է, օրինակ, Մ.Դ. Դոբրինայի տեսակետը, ըստ որի՝ «պատվի, արժանապատվության և գործարար հեղինակության ընդհանուր իրավունքը» որպես անձի արժանապատվության անձեռնմխելիության ընդհանուր իրավական սկզբունք⁵²: Միևնույն ժամանակ, նույն հեղինակի կարծիքով, այնպիսի ոչ նյութական արժեքները, ինչպիսին են պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը, չխախտված լինելու պայմաններում, չեն հանդիսանում իրավական ազդեցության օբյեկտ: Օբյեկտիվորեն առկա է նման իրավունքի (վերջինիս լայն ընկալման) առկայության սոցիալական շահը, որի հիմքում ընկած է մարդու արժանապատվության անձեռնմխելիության պահպանման համընդհանուր պարտավորվածությունը, ինչպես նաև անձի համապատասխան գնահատականը (պատիվ)⁵³:

⁵¹ Сту' Надтачаев П.В. Гражданско-правовая защита чести, достоинства и деловой репутации сотрудников и деловой репутации органов внутренних дел: Автореф. дис. ... канд. юрид. наук: 12.00.03 / Санкт-Петербургский университет МВД России. - СПб., 2005.

⁵² Сту' Добриева М.Д. Честь, достоинство, деловая репутация как объект защиты в гражданском праве и процессе. Автореф. дис.... канд. юрид. наук. - М., 2004.

⁵³ Сту' Добриева М.Д. Честь, достоинство, деловая репутация как объект защиты в гражданском праве и процессе. Автореф. дис.... канд. юрид. наук. - М., 2004.

Հարկ է համաձայնվել Դ.Ա.Սամորոդովի կարծիքին, որ «մարդու արժանապատվության» հասկացությունը սահմանվում է որպես իրավական նորմերով պաշտպանվող ոչ նյութական արժեք, որն իրենից ներկայացնում է անհատի կողմից սեփական բարոյական, մտավոր և մասնագիտական հատկանիշների դրական գնահատում⁵⁴:

Բացի այդ, այլ դիրքորոշում է արտահայտել պրոֆեսոր Ա.Ֆ. Սուրժիկը, ըստ որի, քաղաքացու պատիվն ու արժանապատվությունն անձնական ոչ նյութական բարիքներ են, որոնց հանդեպ անձն ունի բացարձակ բնույթի անձնական ոչ նյութական իրավունք: Իրավատերը բացարձակ իրավահարաբերության մեջ է բոլորի և յուրաքանչյուրի հետ, որտեղ բոլոր այլ անձինք ունեն քաղաքացու պատիվն ու արժանապատվությունը չոտնահարելու պասիվ դերակատարություն: Նշված բացարձակ իրավունքը, որը պատկանում է յուրաքանչյուր մարդու, ունի հավասար ծավալ յուրաքանչյուրի համար⁵⁵:

Միևնույն ժամանակ, բավականին կայուն է մարդու արժանապատվության զարգացման առկա միտումը բացարձակ փիլիսոփայական և միաժամանակ կրոնական կատեգորիայից մինչև իրավական կատեգորիա, որը մարդու հիմնական իրավունքներից և ժամանակակից պետության սահմանադրական սկզբունքներից մեկն է:

Մեծ արժեք են ներկայացնում հարակից գիտական ուղղությունների ներկայացուցիչների կողմից տրվող բնորոշումները: Այսպես օրինակ, հոգեբանության տեսանկյունից մարդու արժանապատվությունը մարդու կողմից սեփական արժեքի ընկալումն է որպես մարդու, որպես կոնկրետ անհատի, որպես մասնագետի և այլն⁵⁶:

Իսկ փիլիսոփաներն անձի արժանապատվությունը բնորոշում են որպես նրա անձնային արժեքի արտահայտում⁵⁷, որպես սեփական հասարակական արժեքի

⁵⁴ Տես՝ Самородов Д.А. Честь и достоинство по российскому гражданскому праву: Социальные основы и правовая характеристика: Автореф. дис. ... канд. юрид. наук: 12.00.03 / Юридический институт Московской академии экономики и права. - М., 2006.

⁵⁵ Տես՝ Суржик А.Ф. Честь, достоинство и деловая репутация в гражданском праве Российской Федерации: Дис. ... канд. юрид. наук / Академия народного хозяйства при Правительстве Российской Федерации. - М., 2007.

⁵⁶ Տես՝ Понятия чести, достоинства и деловой репутации: Спорные тексты СМИ и проблемы их анализа и оценки юристами и лингвистами. Изд. 2-е, перераб. и доп./ Под ред. А.К. Симонова и М.В. Горбаневского. - М., 2004. - С. 12.

⁵⁷ Տես՝ Краткая философская энциклопедия. - М.: Прогресс-Энциклопедия, 1994. - С. 144.

ինքնագիտակցում, հասարակության հարգանքի իրավունք, որը հիմնված է հասարակության կողմից մարդու սոցիալական արժեքի ընդունման վրա: Այդուհանդերձ, այս կամ այն հասարակությունում առկա տեսակետները մարդու արժանապատվության վերաբերյալ բնորոշվում են հասարակական փոխհարաբերությունների բնույթով, որից էլ կախված է անձի դիրքը հասարակության մեջ⁵⁸:

Այդ մոտեցումների համակարգային վերլուծությունից հետևում է, որ «մարդու արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանության մոտեցումներում սկզբունքային տարբերություններ չկան ոչ միայն իրավագիտության այլև հասարակական տարբեր գիտությունների ներկայացուցիչների շրջանում:

Այդ իմաստով, հեղինակների մեծ մասը անձի արժանապատվությունն ընկալում են որպես համեմատաբար անկախ, անձնային, անհատական գործոն, որը գոյություն ունի օբյեկտիվորեն՝ հասարակության և պետության շրջանակից դուրս, սակայն մյուս կողմից, կախված է կոնկրետ հասարակության զարգացման մակարդակից, սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական պայմաններից՝ նրա պատմական զարգացման կոնկրետ փուլում:

«Անձի արժանապատվություն» հասկացության վերոշարադրյալ բնորոշումներից և ոչ մեկը չի համապատասխանում եզրույթի միասնական ընկալման չափորոշիչներին: Որոշ հեղինակներ այդ հասկացության բովանդակության ու իմաստի բացահայտման փոխարեն ներկայացնում են դրա երկրորդային հատկանիշները կամ հետևանքային նշանակությունը:

«Անձի արժանապատվության» վերաբերյալ առավել ամբողջական ու հստակ բնութագրումը, մեր կարծիքով, տրված է պրոֆեսոր Օ.Ե. Կուտաֆինի կողմից: Նա գտնում է, որ անձի արժանապատվությունը բնորոշում է մարդու և շրջապատի կողմից որոշակի բարոյական և մտավոր հատկանիշների տիրապետության փաստի գիտակցման միջոցով, ընդ որում, այն առաջին հերթին սեփական արժեքի ընկալումն է որպես մարդ (մարդկային արժանապատվություն), որպես կոնկրետ անհատ (անձնական արժանապատվություն), որպես որոշակի սոցիալական խմբի կամ

⁵⁸ См. 'Философская энциклопедия: В 5 т. - М., 1962. - Т. 2. - С. 58.

հանրության ներկայացուցիչ (օրինակ՝ մասնագիտական արժանապատվություն), այդ հանրության արժեք (օրինակ՝ ազգային արժանապատվություն)⁵⁹: Իսկ պատվի հասկացությունն արտահայտում է սեփական անձի և արարքների համապատասխանության գնահատականը սոցիալական (բարոյական) նորմերին:

Հարկ է նկատել, որ հայ իրավագետներից Վ.Այվազյանը և Գ.Մուրադյանն անձի արժանապատվությունը դիտարկում են որպես մարդկային հատկանիշ՝ ամբողջական ու հավաքական իմաստով⁶⁰:

Հենց այդ բնորոշումն ենք նպատակահարմար գտնում ընդունել որպես հիմք հասկացության հետագա հեղինակային հստակեցված բնորոշումը մշակելիս: Ի վերջո, «անձի արժանապատվություն» հասկացության բովանդակության ուսումնասիրությունը չենք կարող լիարժեք համարել առանց այդ հասկացության իրավական, սոցիալական, փիլիսոփայական հատկանիշների ուսումնասիրության:

Այսպես, անձի արժանապատվության վերաբերյալ գիտական հետազոտությունների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ հասկացությունը բնորոշող իրավական, սոցիալ-փիլիսոփայական հատկանիշներից առավել էականները հետևյալներն են.

1. Անձի արժանապատվությունը բնածին է, այն առաջանում է մարդու ծնվելու պահից: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մինչև մարդու ծնվելը՝ պտղի մոտ, անձի արժանապատվության իրավունքի տեսական հարցը դեռևս իր համարժեք լուծումը չի ստացել, անգամ այդ տեսակետի կողմնակիցներն ունեն տարաձայնություններ պտղի /էմբրիոնի հասակի գնահատման հարցում, որից էլ հետևում է այդ իրավունքը⁶¹:

Ընդ որում, ինչպես համարում են իրավագետներ Վ.Ա. Կարտաշևը և Ե.Ա.Լուկաշևան, բնականների թվին են պատկանում ոչ թե մարդու բոլոր իրավունքները, այլ, առաջին հերթին, միայն ունիվերսալները, կյանքի իրավունքը,

⁵⁹ Տես՝ Постатейный научно-практический комментарий к Конституции Российской Федерации / Под ред. академика РАН О.Е. Кутафина. - М., 2003.

⁶⁰ Տես՝ Վ.Այվազյան, Արժանապատվությունը որպես մարդու իրավունքների հիմք // Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Եր., 2012, էջ 237, Գ.Մուրադյան ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ (ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի) Եր 2010, էջ 163-170:

⁶¹ Տես՝ Топорнин Б.Н. Указ. соч.-с.23:Богораз Л.И. Неотъемлемые права и свободы человека // Естественные права человека: Сб. матер. семинара Московской Хельсинской группы Права человека (Чистополь, июнь 1992). Вып. 4/Под ред. Л.И.Богораз.-М., 1993-с. 95.

քաղաքացիության իրավունքը, արժանապատվության իրավունքը, ազատության ու անձնական անձեռնմխելիության իրավունքը և այլ իրավունքներ:

Սահմանադրական իրավունքն ու դոկտրինան համարում են, որ բնածին իրավունքներն արդեն իսկ ըստ բնորոշման «մեկնվում են ոչ թե որպես ինքնին կամ ձեռքբերովի, այլ որպես բնածին և, պայմանականորեն արտահայտելով, նախապետական: Դրանք պատկանում են մարդուն ի ծնե և ծննդյան իրավունքով: Այդ իրավունքները շնորհված չեն իշխանության կողմից, ծագում են նրանցից անկախ և առանց նրա համաձայնության և չեն կարող հետ վերցվել: Պետությունը պարտավոր է ճանաչել այդ իրավունքները, ամրագրել դրանք սահմանադրության մեջ և պաշտպանել հնարավոր բոլոր միջոցներով: Դա իրեն ժողովրդավարական համարող յուրաքանչյուր պետության սրբազան պարտքն է: Բնական, անբաժանելի, անօտարելի իրավունքները սկսեցին ամբողջապես նույնանալ հիմնական, հիմնարար իրավունքների հետ»⁶²:

2. Անձի արժանապատվությունը որոշակիացված է մշակութային և սոցիալական առումներով, այսինքն նրա բովանդակությունը, ինչպես նաև պահպանման և պաշտպանության միջոցները կախված են հասարակության կյանքի կոնկրետ պատմական պայմաններից:

3. Անձի արժանապատվությունը չի վերանում մարդու մահվանից հետո, այլ ընդամենը, անձի արժանապատվության պաշտպանության հետ կապված իրավասությունները փոխակերպվում են և փոխանցվում նրա հարազատներին և պետությանը, թեև իր այդ նոր որակով այն ևս մշտական չէ և ունի աստիճանաբար վերանալու միտում:

4. Անձի արժանապատվությունն անքակտելի է և անօտարելի: Մարդու արժանապատվությունը չի կարող օտարվել, քանի որ այն անձի բնական իրավունքների բաղկացուցիչ ու անքակտելի մասն է կազմում: Հետևաբար անձի արժանապատվությունն անփոխանցելի է: Այն չի կարող որևէ կերպ փոխանցվել որևէ մեկին կամ փոխանակվել, վաճառվել, ժառանգվել, կամ և այլ կերպ օտարվել մարդկային անհատականությունից:

⁶² Տես՝ Ա.Երիցյան, Մարդու իրավունքները. պատմատեսական, իրավափիլիսոփայական և իրավաքաղաքական հիմնախնդիրները, Երևան, 2011թ. էջ 20:

5. Անձի արժանապատվության երաշխիքները ներառում են պետականության տարրեր, այսպես, պետությունն անվերապահորեն ընդունում է անձի արժանապատվությունը, ուստի և պահպանում ու երաշխավորում դրա պաշտպանությունը:

6. Անձի արժանապատվությունը հանդես է գալիս որպես սոցիալական փոխհարաբերություններում ինքնագիտակցման ու ինքնատիրապետման արժեքային հիմք, ընդ որում, մի կողմից, մարդը գիտակցում է ինքն իրեն որպես արժեք և, լինելով եզակի ու անկրկնելի, կառուցում է իր վարքագիծը ու վերահսկում իր գործողությունները այնպես, որ չոտնահարի այլ մարդկանց արժանապատվությունը, իսկ, մյուս կողմից սեփական անձի արժանապատվության՝ որպես ինքնագիտակցության ձևի վրա է հիմնվում և կառուցվում ինքնահարգանքը, անհատի պահանջը սեփական անձի հանդեպ:

7. Անձի արժանապատվությունն ունի համընդհանուր բնույթ, այսինքն այն պետության կողմից դիտարկվում է ոչ թե ընդհանրության մեջ, այլ առանձին-աձանձին՝ անհատապես, և այդ իմաստով անձի արժանապատվությունը հիմք է հանդիսանում ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության համար:

8. Անձի արժանապատվությունն ունի երկակի նշանակություն միաժամանակ հանդես գալով ոչ միայն որպես հասարակական միջանձնային հարաբերությունների գործոն այլև մարդու անձնական կյանքի ոլորտի գործոն:

9. Անձի արժանապատվության պաշտպանության իրավական միջոցների անհրաժեշտ, սակայն ոչ բավարար լինելն արտահայտվում է նրանում, որ անձի արժանապատվության հանդեպ ոտնձգությունը ոչ միշտ է հնարավոր կանխարգելվել վարչաիրավական, քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական գործիքակազմով, և հաճախ մարդու արժանապատվության կարգավորիչ, և երաշխիք են հանդիսանում բարոյական նորմերը (այդ հասկացության կառուցվածքի ոչ միատարր բնույթից ելնելով):

10. Անձի արժանապատվության «շարժունակությունը» կամ «փոփոխականությունը» կապված են այն բանի հետ, որ անձի կողմից սեփական

մարդկային արժանապատվության հոգեբանական ընկալումը կարող է փոխվել կրթական մակարդակի բարձրացման, կյանքի փորձի կուտակման հետ:

Անդրադառնալով այդ հատկանիշների համակարգային վերլուծությանը, անհրաժեշտ է կարևորել այն, որ եթե պատիվն ու արժանապատվությունն առաջանում են միաժամանակ՝ մարդու ծնվելու պահին, և դրանց գոյությունը ժամկետային սահմանափակում չունի, ապա անձի պատվի և արժանապատվության իրավունքը կարող է պաշտպանվել նաև նրա մահվանից հետո:

Միաժամանակ, պետք է նկատել, որ անձի արժանապատվությունն անխզելիորեն կապված է մարդու ունակության հետ՝ գնահատելու և համեմատելու սեփական արարքները հասարակության պահանջների հետ, ճնշելու սեփական ոչ իրավաչափ ձգտումները և մտադրությունները, որոնց իրականացումը կարող է գնահատվել որպես անպատվություն: Այն առավելապես ընկալվում է որպես համեմատաբար անկախ, անձնային, անհատական գործոն, որը գոյություն ունի օբյեկտիվորեն՝ հասարակության և պետության շրջանակից դուրս, սակայն մյուս կողմից, կախված է կոնկրետ հասարակության զարգացման մակարդակից, սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական պայմաններից՝ նրա պատմական զարգացման կոնկրետ փուլում:

Սահմանադրական իրավունքի գիտության մեջ մարդու արժանապատվության սահմանադրական կարգավիճակի հիմնահարցը կրել է խնդրահարույց բնույթ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդու արժանապատվությունը մի դեպքում, սահմանադրորեն ճանաչվում է. ա) որպես անօտարելի ու բարձրագույն արժեք⁶³, բ) որպես սահմանադրական հիմնարար իրավունք⁶⁴ և գ) որպես սահմանադրական արժեքային համակարգ⁶⁵: Այնուամենայնիվ, սահմանադրական գործընթացներում մարդու արժանապատվության ապահովումն ու պաշտպանությունը դիտարկվեց սահմանադրական մշակույթի դրսևորման գերակա ձև, որին ձգտում են

⁶³ Տես՝ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված, Լեհաստանի Սահմանադրության 30-րդ հոդված, Ուկրաինայի Սահմանադրության 3-րդ հոդված և այլն:

⁶⁴ Տես՝ Բելգիայի Սահմանադրության 23-րդ հոդված, Հունգարիայի Սահմանադրության 2-րդ հոդված, Իսրայելի Հիմնական օրենքի 4-րդ հոդված և այլն:

⁶⁵ Տես՝ Վրաստանի Սահմանադրության 17(1)-րդ հոդված, Ղազախստանի Սահմանադրության 17(1)-րդ հոդված, Բուլղարիայի Սահմանադրության 4-րդ հոդված, Իտալիայի Սահմանադրության 3-րդ հոդված և այլն:

սոցիալական առաջադիմության ուղին ընտրած ցանկացած երկիր: Այդ իմաստով, մարդու արժանապատվության սահմանադրորեն ճանաչումն իրավագիտությանը գիտական բնույթ հաղորդեց և դարձավ արդի սահմանադրական զարգացումների հենքը:

XX դարի երկրորդ կեսից սկսած հասարակական հարաբերությունների հետագա զարգացումը, ինչպես նաև ազատական արժեքային համակարգի տարրերի աստիճանական արմատավորմանը հաջորդեց մարդու արժանապատվության որպես պետական իշխանության սահմանափակման չափանիշի ընդունելը: Ընդ որում՝ սահմանադրական մշակույթի բնութագրիչներից մեկը դարձավ մարդու արժանապատվության և նրա սահմանադրական իրավունքների և ազատությունների ճանաչումը՝ որպես անմիջական գործող իրավունք, ինչպես նաև այն է, որ սահմանադրական արժեքների մեջ բարձրագույնը մարդն է իր արժանապատվությամբ ու իրավունքներով:

Հետագայում, մարդու արժանապատվության գաղափարը մարմնավորեց ժամանակակից ժողովրդավարական հասարակությունում հասարակական հարաբերությունների կարգավորման ամբողջ իրավական համակարգը: Այդ գաղափարն իր արտացոլումն ստացավ օրենսդրական կարգավորումներում և պետական մարմինների գործունեության համակարգում:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի յուրաքանչյուր կառուցվածքային մաս բովանդակում է անձի արժանապատվության ապահովման իր իմպերատիվ պահանջը՝ ա) որպես իրավական համակարգի հիմնարար սկզբունք, բ) որպես բարձրագույն սոցիալ-բարոյական և իրավական արժեք, գ) որպես պետության գործունեության նպատակ:

Ըստ էության, մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգի արժեքային հիմք, ընդ որում, մարդու արժանապատվության իրավունքի նկատմամբ մարդու կյանքի իրավունքը հանդիսանում է անհրաժեշտ պայման և մարդու արժանապատվության իրավունքի իրացման երաշխիք:

Իր կարևորությամբ կյանքի իրավունքից հետո, առանձնանում է արժանապատվության իրավունքը, որն ըստ էության, բոլոր այլ իրավունքների հիմնական նպատակն է: Այս տեսակետից արժանապատվության իրավունքը դառնում է սահմանադրական մյուս հիմնարար իրավունքների աղբյուրը: Ամենևին պատահական չէ, որ մարդու իրավունքներին վերաբերող միջազգային իրավական բազմաթիվ փաստաթղթերում մարդու իրավունքները թվարկելիս արժանապատվության իրավունքին հաճախ վերապահվում է առաջնային դերակատարում:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում նշվում է, որ մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով (հոդված 1), ինչից բնականաբար բխում է, որ արժանապատվությունն իր նշանակությամբ հավասարեցված է բոլոր մյուս իրավունքների ամբողջությանը: ՄԱԿ-ի քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի նախաբանում նշվում է, որ մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչումը ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքն է և այդ իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից: Նույն սկզբունքը պահպանված է նաև ՄԱԿ-ի տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին դաշնագրի նախաբանում:

Մարդու արժանապատվության արժեքային ներուժը հանդիսանում է հետևանք այն բանի, որ Սահմանադրությունը օժտում է մարդուն, նրա իրավունքներին ու ազատություններին բարձրագույն արժեքի նշանակությամբ: Հանրային կյանքում բացի իրավական ձևից չկա և սկզբունքորեն չի կարող լինել հավասարության, ազատության ու արդարության արտահայտության և կեցության որևէ այլ ձև: Իսկ վերջինիս էությունը հանգում է մարդու բնական իրավունքների ճանաչմանը՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք և պոզիտիվ իրավունքի հիմք:

Ժամանակակից արտասահմանյան ժողովրդավարական երկրները գործնականում նույն մոտեցումն են ցուցաբերում մարդու արժանապատվության նշանակության հարցին, ընդ որում՝ առանձին երկրների սահմանադրությունների

համեմատական վերլուծությունը փաստում է, որ առանձին երկրների սահմանադրություններում անձի արժանապատվությունը որոշակիացվում է որպես սահմանադրական կարգի սկզբունք, իսկ մեկ այլ դեպքում անձի արժանապատվության անձեռնմխելիությունը դիտարկվում է՝ որպես անքակտելի իրավունք, դրա անօտարելիությունը և պետության պարտավորությունն այն հարգելու ու պաշտպանելու համար:

Օրինակ, Բրազիլիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրության կարգի հիմունքներից մեկը հռչակում է անձի արժանապատվությունը (Սահմանադրության 1-ին հոդվածի 3-րդ մաս), կամ Իտալիայի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի՝ բոլոր քաղաքացիներն ունեն միևնույն արժանապատվությունը և հավասար են օրենքի առաջ՝ առանց սեռի, ռասայի, լեզվի, կրոնի, քաղաքական հայացքների, անձնական և սոցիալական կարգավիճակի տարբերակման:

Իսպանիայի Սահմանադրության 15-րդ հոդվածի հիման վրա, բոլորն ունեն կյանքի, ֆիզիկական և բարոյական անձեռնմխելիության իրավունք և ոչ ոք չի կարող ոչ մի դեպքում ենթարկվել խոշտանգումների: Իսկ Պորտուգալիայի Հանրապետության Սահմանադրությունը 13-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ բոլոր քաղաքացիներն ունեն միևնույն հասարակական արժանապատվությունն ու հավասար են օրենքի առաջ:

Բուլղարիայի Սահմանադրության 4-րդ հոդվածի 2-րդ մասը հռչակում է, որ Բուլղարիայի Հանրապետությունն երաշխավորում է անհատի կյանքը, արժանապատվությունը և իրավունքները, և պայմաններ է ստեղծում մարդու և քաղաքացիական հասարակության ազատ զարգացման համար, իսկ 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ բոլոր մարդիկ ծնվում են արժանապատվության և իրավունքների մեջ ազատ և հավասար:

Գերմանիայի Դաշնության Հանրապետության Հիմնական օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասն ամրագրում է, որ մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է: Դրա պաշտպանումը և հարգումն ամեն մի պետական իշխանության պարտականությունն է: Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանվում է, որ գերմանական ժողովուրդն ընդունում է

մարդու անձեռնմխելի ու անօտարելի իրավունքները՝ որպես ամեն մի մարդկային հանրության, խաղաղության և աշխարհում արդարության հիմք:

Գործնականում նմանօրինակ մոտեցում է ցուցաբերված նաև Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 2-րդ, 18-րդ և 21-րդ, Իսպանիայի՝ 10-րդ, Չեխիայի՝ 1-3-րդ, Վրաստանի՝ 7-րդ, Ուկրաինայի՝ 8-րդ, Լեհաստանի՝ 30-րդ, Ռումինիայի՝ 1-ին, Սլովենիայի՝ 15-րդ, Պորտուգալիայի՝ 1-ին, 18-րդ հոդվածներում:

Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքներն ամրագրված են (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 3-րդ, 23-րդ հոդվածներով: Ընդ որում, մարդու արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթները պատկանում են սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքների թվին, որոնցով պայմանավորված են սահմանադրության բոլոր մյուս դրույթները:

Հայաստանի Հանրապետության (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) Սահմանադրության 3-րդ հոդվածը հռչակում է, Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Իսկ (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածը սահմանում է, որ՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Այս նորմերի համադրված վերլուծությունը փաստում է, որ բարձրագույն արժեքի հասկացությունը վերացական չէ, ունի որոշակի իրավական բովանդակություն և ենթադրում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում՝ և պետական, և հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել: Հետևաբար

պետության պոզիտիվ պարտականությունն է դառնում պաշտպանել բոլոր մարդկանց իրենց արժանապատվության խախտումներից⁶⁶:

Արժանապատվությունը՝ որպես բարձրագույն սոցիալական արժեք, մարդու անքակտելի հատկություն է, որը պատկանում է անձին, անկախ նրանից, թե ինչպես է ինքն ընկալվում և գնահատվում իր և իր շրջապատի կողմից: Այստեղից, մարդու սահմանադրական իրավունքների համակարգում անձի արժանապատվությունը հարգելու սկզբունքը ընկալվում է որպես պետության վերաբերմունքի չափանիշ անձի և նրա իրավական կարգավիճակի հանդեպ:

Անհրաժեշտ է կարևորել այն, որ սահմանադրության այս դրույթներն առանցքային նշանակություն ունեն սահմանադրական իրավակարգավորումների արժեքանության և մեթոդաբանության տեսանկյունից: Եթե մինչև 2005 թվականը ՀՀ Սահմանադրությունը կառուցված էր մեթոդաբանական այն մոտեցման վրա, համաձայն որի՝ իրավակարգավորման հիմքում դրվում էր օրենքի գերակայության սկզբունքը, ապա 2005 թվականի սահմանադրական գործընթացների շրջանակում այդ կարգավորումների հիմքում առաջադրվեց հիմնական պահանջ մարդու բնական ու անօտարելի իրավունքների գերակայության, առաջնայնության, ելակետային բնույթի ճանաչման ու ամրագրման մասին:

2015 թվականի սահմանադրական բարեփոխումների գործընթացում միանշանակ կարևորվեց մարդը՝ չսահմանազատելով իրավունքը, ազատությունը և արժանապատվությունը որպես բարձրագույն արժեքներ:

Այսպիսով, հանրային հարաբերություններում առանցքային դերակատարումը վերապահվում է մարդուն՝ իր անօտարելի արժանապատվությամբ և իրավունքներով: Ընդ որում, այդ դեպքում արժանապատվության իրավունքը հանդիսանում է մարդու իրավունքների և ազատությունների հիմնական աղբյուրը, և որի պաշտպանությունը համարվում է պետության գոյության հիմնական պայմանը⁶⁷:

Մարդու արժանապատվության ճանաչումը՝ որպես համապարփակ և բացարձակ, պետության կողմից պաշտպանվող սահմանադրական արժեք, հանդիսանում է

⁶⁶ Տվյալ դեպքում մարդկային արժանապատվության պաշտպանությունն ունի բացարձակ բնույթ և այն տարածվում է առանց բացառության կյանքի բոլոր բնագավառների վրա:

⁶⁷ Տես՝ Վ.Այվազյան, Մարդու իրավունքներ, երկրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2007, էջ 91:

Հայաստանի Հանրապետությունում անձի իրավական կարգավիճակի կարևորագույն բնութագրիչը:

Մարդու արժանապատվության առաջնայնության սկզբունքը ներառում է բառացիորեն Սահմանադրության ողջ բովանդակությունը: Դա սահմանադրական իրողություն է, որով պետք է կանխորոշվի նաև իրավաստեղծ և իրավակիրառական պրակտիկան: Այդ սկզբունքի բովանդակությունից են բխում նաև պետության պարտականությունները մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչման, դրանց ապահովման, երաշխավորման, պահպանման ու պաշտպանության վերաբերյալ:

Այսպիսով, իրավունքը և պետությունը վերաձվում են մարդու արժանապատվությունն արտահայտող հասարակական հարաբերությունների ամբողջական համալիրը կարգավորող արդյունավետ միջոցների, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում մարդու արժանապատիվ գոյության պայմանների պահպանի և երաշխավորի: Այդ նպատակը հավասարապես ընդհանուր է և պոզիտիվ իրավունքի, և պետության համար:

Միաժամանակ, սահմանադրական երաշխիքային տեսակետից անձի արժանապատվությունը ոչ միայն պաշտպանվում է պետության կողմից, այլ նաև կարող է պաշտպանվել յուրաքանչյուր մարդու և քաղաքացու կողմից՝ բոլոր չարգելված միջոցներով: Ինչպես մարդկային արժանապատվությունը, այնպես էլ մարդու կյանքը, ընդունված չէ կախման մեջ դնել անձի հասարակական կարևորությունից, տարիքից, սեռից, համոզմունքներից և այլն: Պետք է հաշվի առնել այն պահանջը, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ իրենց արժանապատվությամբ⁶⁸: Որևէ հանգամանք, այդ թվում հանրաճանաչ ըմբռնությամբ անձի բացասական գնահատականը, հոգեկան հիվանդությունը, արտակարգ իրավիճակը, պատերազմը և այլն, չեն կարող արժանապատվության նսեմացման հիմք հանդիսանալ:

Այսպիսով, մարդու արժանապատվությունը ոչ միայն բարձրագույն արժեք է (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մաս) և իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, այլև Հայաստանի

⁶⁸ Տես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածը:

Հանրապետության՝ որպես իրավական պետության (ՀՀ Սահմանադրության 1-ին հոդված) անքակտելի բաղադրիչ, որի անփոփոխելությունը պաշտպանված է հենց Սահմանադրության 203-րդ հոդվածով:

Հենց այս հիմնավորմամբ է արտահայտվում մարդու արժանապատվության սահմանադրաիրավական երկակիության բնույթը՝ որպես սուբյեկտիվ հանրային իրավունք և որպես մարդու բոլոր հիմնական իրավունքների ու ազատությունների աղբյուր և դրանց անքակտելի հիմք: Այստեղից, մարդու արժանապատվության որպես համընդհանուր սահմանադրական արժեքի վրա է խարսխված ամբողջ սահմանադրական կարգը, որտեղ մարդու առանձին իրավունքներն ու ազատությունները պետք է մեկնաբանվեն և կիրառվեն՝ ելնելով արժանապատվության սկզբունքի նշանակությունից և այն իրականացնելու նպատակաուղղվածությունից:

Կարևորելով հասարակությունում և պետությունում գոյություն ունեցող սոցիալական հարաբերություններում անհատի մասնակցության անհրաժեշտությունը, մարդու արժանապատվությունը հանդիսանում է սկզբնական և անփոփոխ այն պայմանը, որը միաժամանակ օբյեկտիվորեն գոյություն ունեցող բարոյաիրավական երևույթի դրսևորում է ձեռք բերում՝ պետության կամ այլ սուբյեկտի կողմից անկախ նրա ճանաչման հանգամանքից: Այդ իմաստով արժանապատվությունը իմաստավորող մարդու իրավունքները հանդիսանում են անբաժանելի, անօտարելի իրավունքներ և դրանք որևիցե մեկի կողմից որևէ պայմանով կամ որևէ հիմքով չեն կարող սահմանափակվել (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդված):

Սահմանադրաիրավական գիտությունում անհատի արժանապատվությունն ընկալվում է մարդու և նրան շրջապատողների կողմից այն փաստի գիտակցումը, որ նրանք օժտված են որոշակի բարոյական և մտավոր որակներով: Այդ առումով անհատի արժանապատվությունը որոշվում է ոչ միայն սուբյեկտի ինքնագնահատմամբ, այլև մարդու՝ հասարակության մեջ նրա հեղինակությունը բնութագրող օբյեկտիվ որակների համախմբությամբ (ողջամտություն, բարոյական տվյալներ, գիտելիքների մակարդակ, սոցիալապես օգտակար հմտություններին տիրապետումը, արժանապատիվ կենսակերպ և այլն):

Այսպես, արդարացի է այն պնդումը, ըստ որի՝ արժանապատվությունը մարդու՝ իր բոլոր իրավունքները և ազատությունները ճանաչելու և հարգելու հիմքը կազմող և նրան պատկանող (անկախ այն բանից, թե ինչպես է հենց ինքը կամ իրեն շրջապատողները ընդունում և գնահատում նրա անձը), անբաժանելի հատկությունն է՝ որպես բարձրագույն արժեք⁶⁹: Տվյալ դեպքում, անհատի արժանապատվությունը դիտարկվում է պետության կողմից անհատի և նրա իրավական կարգավիճակի՝ որպես բարձրագույն սոցիալական արժեքի նկատմամբ վերաբերմունքի չափանիշ:

Այսինքն, անհատի արժանապատվությունը հանդիսանալով արժեքային հիմք և մարդու իրավունքների և ազատությունների ու դրանց պահպանության ու պաշտպանության սահմանադրական համակարգաստեղծ տարր, այն միաժամանակ առաջնային և անհրաժեշտ է մարդու այլ հիմնական իրավունքների պահպանման և պաշտպանության համար:

Այսպիսով, հետազոտվող հասկացության հետադարձ վերլուծությունը ցույց է տալիս, որ անցյալի մտածողների աշխատություններում արժանապատվության իրավաբանական բովանդակությունը նշանակալիորեն կանխորոշվել է դիտարկման բարոյական կողմով:

«Արժանապատվություն» եզրույթը փոխակերպվել է սահմանադրական օրենսդրության, մարդու կողմից իր իրավունքների և ազատությունների պաշտպանության դոկտրինի և պրակտիկայի, քաղաքացիական հասարակության և իրավագիտակցության հիմունքների ներգործության տակ:

Բոլոր մարդիկ, անկախ խտրականությունից, հանդիսանում են արժանապատվության պոտենցիալ կրողներ, սակայն շատ բան է կախված նրանից, թե ինչպես է օգտագործում պետության կողմից սահմանված իրավական խթանները և սահմանափակումները ինքը՝ մարդը:

Կարծում ենք, որ սեփական արժանապատվության զգացում ունենալը թույլ չի տալիս անձին արհամարհական վերաբերմունք ցուցաբարել մյուսների նկատմամբ (գործել «ցածր սեփական արժանապատվությունից»): Անպարկեշտ արարքն այս կամ

⁶⁹ Տես՝ Паладьев М.А. Конституционное право человека на честь и достоинство (основания, содержание, защита): Автореф. дис. ... канд. юрид. наук / МГЮА. – М., 2006.

այն աստիճանով ունահարում է արժանապատվությունը, դրա համար էլ տվյալ տեսանկյունից, նրա գնահատականը միջնորդվում է առաքինությանը:

Աստիճանաբար ձևավորվում է շրջապատողների կողմից սոցիալական դիրքից կախված հարգանքով պայմանավորված արժանապատվության որոշակի աստիճանավորում (որքան բարձր է մարդու կարգավիճակը հասարակությունում, այնքան շատ են գնահատվում նրա բարոյական որակները)⁷⁰:

Ստուգաբանական վերլուծությունը թույլ է տալիս եզրակացություն անել «արժանապատվություն»⁷¹ կատեգորիայի բազմիմաստային լինելու վերաբերյալ: Քննարկվող հասկացությունն անսովոր բազմակողմ է և անհնար է տալ դրա սպառիչ սահմանումը՝ հենվելով բացառապես իրավաբանական եզրութաբանության վրա: Գոյություն ունեն բազմաթիվ գիտական սահմանումներ տարբեր տեսակի հանրագիտարանային բառարաններում սոցիոլոգիական, իրավաբանական, մանկավարժական, փիլիսոփայական:

Հաճախ հասկացությունները ձևակերպվում են գիտության որոշակի ոլորտների յուրահատկությունները հաշվի առնելով, սակայն գոյություն ունի նաև ընդհանուր բաղադրիչը, որը կայանում է սուբյեկտիվ (սեփական արժանապատվության զգացմունք) և օբյեկտիվ (հասարակության կողմից մարդու արժանապատվության ճանաչումը և հարգումը) բաղադրիչների միավորման համախմբության մեջ:

Այսպես, «Բարոյագիտության բառարանը» ճշգրտում է, որ արժանապատվությունը ցանկացած մարդու՝ որպես անհատի արժեքի վերաբերյալ պատկերացում, հասարակության կողմից նրա նկատմամբ հատուկ բարոյական վերաբերմունք արտահայտող բարոյական հասկացություն է, որի մեջ ճանաչվում է անձի արժեքը»⁷² և որը կախված չէ մարդու սոցիալական ծագումից, քանի որ հասարակական գնահատականի հիմքում ընկած է բարոյական առումով մարդկանց հավասարության մասին պատկերացումը⁷³: Սահմանադրական իրավունքը սահմանում է արժանապատվությունը որպես մարդու հոգևոր կերպարը բնութագրող և

⁷⁰ Տես՝ Гилиев В. Е., Рудинский Ф. М. Демократия и достоинство личности. М., 1983. էջ 31:

⁷¹ Տես՝ <<Արժանապատվություն- իր անձի նկատմամբ ունեցած հարգանք, իր իրավունքների՝ արժանիքների գիտակցություն>>, Է. Բ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան 1976, էջ 132:

⁷² Տես՝ Словарь по этике/ Под. Ред. И. С. Кона. М., 1983. էջ 85-86:

⁷³ Տես՝ նույն տեղում էջ 365:

պետության, այլ անձանց կողմից նրա՝ որպես բարձրագույն արժեքի նկատմամբ վերաբերմունք ենթադրող հատկություն⁷⁴:

Իրավբանական գրականությունում կարծիք է արտահայտվում, որ մարդու (անձի) արժանապատվությունը կամ կոնկրետ տեսական արժեք ունեցող, սակայն անձի արժանապատվությունը որպես իրավաբանական կատեգորիա չբացատրող անորոշ ֆենոմեն⁷⁵, կամ օգտագործվում է միայն պատվի և հեղինակության հասկացության հետ համադրության մեջ որպես ոչ գույքային բնույթի անձնական իրավունքներից մեկը⁷⁶, կամ հանգում է խոշտանգումների, բռնության, այլ դաժան կամ մարդու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, մարդու վրա առանց նրա համաձայնության բժշկական, գիտական կամ այլ փորձերի անցկացման արգելքի պահանջին⁷⁷:

Արժանապատվությունը գիտնականների աշխատություններում չի առանձնացվում ինքնուրույն խնդրահարույց թեմայի: Այն վերլուծվում է բարու և չարի, արդարության, ողջամտության, բարեխղճության մասին ուսմունքների նկատմամբ: Իրավագիտության տեսանկյունից տեղի է ունենում միայն իրավական բազայի ամրագրում լրիվ ազատություն թողնելով արժանապատվության բովանդակության մեկնաբանման, վերլուծության և ըմբռնման էության համար:

Այսպիսով, անձի արժանապատվությունը կարելի է դիտարկել որպես հասարակական կյանքում մարդկային գործոնի բաղկացուցիչ մաս, անձի սոցիալ-իրավական բնութագրի, նրա սուբյեկտիվ (անձնական) իրավունքների, պարտականությունների, ազատությունների կարևոր բաղադրիչ, մարդու և հասարակության, մարդու և պետության, մարդկանց միջանձնային տարբեր հարաբերությունները կարգավորող գործիք, իրավագիտակցության ու իրավական անհրաժեշտ ֆենոմեն, սոցիալական կապերի համակարգ, մարդկանց փոխհարաբերությունների համակարգ, որը բարդ և բազմակողմ իրավական

⁷⁴ Տե՛ս՝ Иванец Г.И., Калинин И. В., Червонюк В. И. Конституционное право России: Энциклопедический словарь/ Под общей ред. В. И. Червонюка. М., Юрид. лет., 2002. Էջ 83:

⁷⁵ Տե՛ս՝ Конституция Российской Федерации. Проблемный комментарий /Отв. ред. В.А.Четвернин. М., 1997. Էջ 144-145:

⁷⁶ Տե՛ս՝ Судебная защита прав и свобод граждан. М., 1999. Էջ 121-123:

⁷⁷ Տե՛ս Տрекозов В. Г., Казанчев Ю. Д. Государственное (конституционное) право Российской Федерации. М., 1995. Էջ 98:

գործիքակազմի ազդեցության առարկա է, յուրաքանչյուր մարդու սոցիալական արժեքի ընդունման արտացոլումն է որպես ժամանակակից հասարակության հիմնարար օրինաչափություն, սոցիալ-բարոյագիտական հատկությունների ամբողջություն:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ է նշել հետևյալը.

ա) մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես սահմանադրական իրավունքների հիմք և նպատակ, դրանց սկզբունք, որին համապատասխան պետք է կառուցվի մարդու սահմանադրական իրավունքների ամբողջ համակարգը, պետք է ամրագրվեն պետության, իշխանության ողջ համակարգի՝ անհատի արժանապատվությունն ապահովելու նկատմամբ պարտականությունները,

բ) մարդու արժանապատվության ապահովումը պետության պարտականությունն է՝ անկախ այդ իրավունքի կրողների պահանջներից: Պետությունն այդ առումով պարտավոր է պաշտպանել անձի արժանապատվությունն այլ մասնավոր անձանց տարաբնույթ ոտնձգություններից, անհրաժեշտության դեպքում անգամ քրեական իրավունքին բնորոշ ներգործության միջոցներով,

գ) արժանապատվության պաշտպանությունն ենթադրում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովելու տվյալ սոցիալական միջավայրում մարդուն արժանավայել նվազագույն նյութական կենսապայմաններ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից պետությունում մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես սոցիալապես նշանակալի, պետության ու հասարակության կողմից պահպանվող և պաշտպանվող արժեք միայն այն դեպքում, երբ մարդն ունի իր արժանապատվության հետ ներդաշնակության մեջ գործելու իրական հնարավորություն, այն կյանքում իրականացնելով որպես անձեռնմխելի և հարգանքի ու պաշտպանության ենթակա նրա անձի անբաժանելի որակ,

դ) մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգի արժեքային հիմքը, ընդ որում, մարդու արժանապատվության իրավունքի նկատմամբ մարդու կյանքի իրավունքը հանդիսանում է անհրաժեշտ պայման, մարդու արժանապատվության իրավունքի իրացման հնարավորության երաշխիք,

ե) մարդու արժանապատվության հասկացության արժեքային ներուժը հանդիսանում է հետևանքն այն բանի, որ սահմանադրությունը՝ մարդուն, նրա իրավունքները և ազատությունները օժտում է բարձրագույն արժեքի նշանակությամբ, և այդ իմաստով այն առանցքային նշանակություն է ձեռք բերում սահմանադրական իրավակարգավորումների արժեքանության և մեթոդաբանության տեսանկյունից,

զ) մարդու արժանապատվության ճանաչումը՝ որպես համապարփակ և բացարձակ, պետության կողմից պաշտպանվող սահմանադրական արժեք, հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում անձի իրավական կարգավիճակի կարևորագույն բնութագրիչը, որով պայմանավորվում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև իրավակիրառման բովանդակության կանխորոշիչ լինելու դրա հատկությունը:

է) անհատի արժանապատվությունը հանդես է գալիս որպես մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների և դրանց պահպանության և պաշտպանության սահմանադրական համակարգաստեղծ տարր, այն միաժամանակ առաջնային և անհրաժեշտ է մարդու այլ հիմնական իրավունքների պահպանման և պաշտպանության համար:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐԴՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

2.1 Անձի արժանապատվության ամրագրման սահմանադրական մոդելները արտասահմանյան երկրներում

Պետությունների մեծամասնությունում որպես արժանապատվության պաշտպանության երաշխիք հանդես է գալիս համապատասխան սահմանադրական պահանջը: Երաշխիքը (ֆրանսերեն *garantie* բառից) նշանակում է ինչ-որ բան ապահովող պայման: Արժանապատվության սահմանադրական երաշխիքները, որպես կանոն որպես բաղադրիչ մաս ներառվում են անձի իրավական կարգավիճակում, սակայն, բացի դրանից, իրենցից ներկայացնում են իրավական նորմերի և ինստիտուտների համախմբություն, որոնք ապահովում են մարդու արժանապատվության պահպանությունը և պաշտպանությունը:

Տարբեր պետությունների սահմանադրություններում արժանապատվության իրավունքի ժամանակակից օրենսդրական ամրագրման աղբյուրները, մեր կարծիքով, շատ հանգամանքներով պայմանավորված են Անկախության Հռչակագրի՝ 1776 թվականի հուլիսի 4-ին ընդունված և Բրիտանական թագից նրա տասներեք գաղութների անջատումը հռչակող հյուսիսամերիկյան հեղափոխության հիմնարար փաստաթղթի հետ⁷⁸: Ինչպես հայտնի է, հռչակագիրը ստեղծողները ելել են այն ակնհայտ ճշմարտությունից, որ բոլոր մարդիկ ստեղծված են հավասար և օժտված են

⁷⁸Անկախության Հռչակագիրը, որը միաձայն ընդունվել է Ամերիկայի 13 նահանգների ներկայացուցիչների՝ Ֆիլադելֆիայում կայացած Երկրորդ Կոնտինենտալ Կոնգրեսի 1776թ. հուլիսի 4-ի նիստում, Կոնֆեդերացիայի Հռչակածները, որն ընդունվել է արդեն իսկ հռչակված ԱՄՆ պատվիրակների կողմից 1777թ. նոյեմբերի 15-ին և ԱՄՆ սահմանադրությունը, որն ընդունվել է 1787թ. սեպտեմբերի 17-ին:

Հյուսիսամերիկյան գաղութների ազատագրական պայքարը XVIII դարում իր առջև երկու պատմական խնդիր էր դրել. ազգային ազատագրական և ընկերային: Դրանք լուծվեցին բրիտանական գաղութային լծի դեմ մղվող հեղափոխական պատերազմում տարած հաղթանակի հետևանքով: 1775թ. մայիսի 10-ին, 13 ամերիկյան գաղութների ներկայացուցիչներ Ֆիլադելֆիայում հավաքվեցին Երկրորդ Կոնտինենտալ Կոնգրեսի՝ մետրոպոլիայի տնտեսական, քաղաքական և հատկապես սրված ռազմական ճնշման առնչությամբ ընդհանուր դիրքորոշում մշակելու համար: Երկար բանավեճերից հետո, որոնք տևեցին ավելին քան մեկ տարի, որոշում ընդունվեց Անգլիայից լիովին անջատվելու մասին: Մեծ Բրիտանիայի նախկին 13 գաղութները, իսկ այժմ 13 միացյալ սուվերեն պետություններն այդ մասին միահամուռ հայտարարեցին դարակազմիկ նշանակություն ունեցող փաստաթղթում՝ 1776թ. հուլիսի 4-ի <<Անկախության Հռչակագրում>>:

Արարչի կողմից որոշակի անօտարելի իրավունքներով, որոնց թվին դասվում է կյանքը, ազատությունը և ձգտումը երջանկությանը:

Գրեթե 200 տարի հետո ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը⁷⁹, արդեն առավել կոնկրետ է արտացոլում արժանապատվության բովանդակությունը, նշելով, որ յուրաքանչյուր մարդ, որպես հասարակության անդամ իրավունք ունի սոցիալական ապահովության և տնտեսական, սոցիալական ու մշակութային բնագավառներում իր արժանապատվությունը պահպանելու և իր անձի ազատ զարգացման համար անհրաժեշտ իրավունքներ իրագործելու՝ ազգային ջանքերի ու միջազգային համագործակցության միջոցով և յուրաքանչյուր պետության կառուցվածքին ու ռեսուրսներին համապատասխան⁸⁰:

Գործող սահմանադրություններում, մարդու բնական իրավունքներից զատ, գերակշռող դիրք են գրավում մարդու՝ որպես որոշակի շահեր և պահանջմունքներ ունեցող անհատի իրավունքները: Այդ իսկ պատճառով անհատի լիարժեք կենսագործունեության համար անհրաժեշտ է նրա իրավունքների իրացումը դրանց համախմբության մեջ:

XIX դարի հանրաճանաչ անգլիացի քաղաքական գործիչ Ջ.Ռեյը, հետազոտելով մարդու իրավունքների ոլորտում ձևավորված միտումները, նշում էր, որ ընդհանուր առմամբ հասարակության սեփական արժանապատվության զգացողությունը պատմության ընթացքի հետ փոխվում է, վաղը այն կարող է չհաշտվել նրա հետ, ինչն այսօր հանդուրժելի էր թվում, սակայն ինքը՝ պետության ռացիոնալ միջամտության գաղափարը մշտական է. այն պետք է ստեղծի որոշակի պայմաններ, ապահովելով մարդուն արժանապատիվ կյանք ապրելու և իր կոչումը կատարելու հնարավորություն⁸¹:

Պետության կարևորագույն խնդիրն է հանդիսանում սահմանադրաիրավական ոլորտում քաղաքացիների արժանապատվության իրական պաշտպանության

⁷⁹ Տես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, ընդունվել և հռչակվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1948 թվականի դեկտեմբերի 10-ի 217 Ա (III) բանաձևի համաձայն, /www.arlis.am/:

⁸⁰ Տես՝ նույն տեղում հեղված 22-րդ:

⁸¹ Տես՝ Rae J. State Socialism and Social Reform // Contemporary Review. 1890. Vol. 58. էջ 438-439.

ապահովումը, որը նրանք կարող են ստանալ ընդհանուր իրավասության դատարաններում: Երբեմն սահմանադրությունը բնակչության կողմից ընկալվում է որպես ինչ-որ վերացական ֆենոմեն և չի դիտարկվում որպես կիրառական գործիքակազմ: Հիմնականում այդպես էլ կա:

Սահմանադրությունը ընդունելուց և դրանում իրավական պետության հիմունքների օրենսդրական ամրագրումից հետո, այն բավական երկար պատմական ժամանակաշրջանում կարող է լիովին համերաշխորեն գոյատևել հենց նույն այդ պետության ոստիկանական բնույթի հետ մեկտեղ, ինչպես օրինակ, դա եղել է կայզերական Գերմանիայում:

Առավել հատկանշական է, որ մարդու արժանապատվության՝ որպես առաջատար սահմանադրական սկզբունքի օրենսդրական ամրագրումն առաջին անգամ հանդիպում են Գերմանիայի Դաշնային Հանրապետության 1919 թվականի հիմնական օրենքում. Artikel 1. Die Würde des Menschen ist unantastbar. Sie zu achten und zu schützen ist – die Pflicht aller staatlichen Gewalt (1). Das Deutsche Volk erkennt, sich darum zu unverleichen und unveräußerlichen Menschenrecht als Grundlage jeder menschlichen Gemeinschaft, des Friedens und der Gerechtigkeit in der Welt (մարդու արժանապատվությունն անձեռնմխելի է, իսկ դրա հարգելը և պաշտպանելը՝ պետական իշխանության պարտականությունն է: Գերմանացի ժողովուրդը համարում է մարդու անձեռնմխելի և անօտարելի իրավունքները ցանկացած մարդկային հասարակության, խաղաղության և արդարության հիմքը հողի վրա (թարգմանությունը մերն է)):

Գերմանիայի հիմնական օրենքը խոցված է անհատի արժանապատվության պաշտպանության գաղափարով: Երկրում արգելվում է ցանկացած գործողություն, որոնք արտահայտում են անփույթ վերաբերմունք կամ ուղղված են մարդու արժանապատվության սահմանափակմանը, օտարմանը կամ անձեռնմխելիությունից զրկմանը:

Հաշվի առնելով Վեյմարյան Հանրապետության հիմնադիրների կողմից բաց թողնված սխալները, որոնք չկարողացան պաշտպանել երկրում իրավկարգը և որոնք թույլ տվեցին ազգայնականներին գալ իշխանության, մարդկային արժանապատվության անձեռնմխելիությունը ժամանակակից գերմանական

սահմանադրաիրավական տեսությունում հիմնվում է հենց մարդու՝ որպես արժեքի առաջնայնության վրա: Բացի այդ, ԳԴՀ հիմնական օրենքը բովանդակում է արժանապատվության պաշտպանությանն ուղղված մի շարք փոխկապակցված նորմեր: Դրանց թվին, մեր կարծիքով անհրաժեշտ է դասել ձերբակալվածին բարոյական և ֆիզիկական վերաբերմունքի արժանացնելը (հոդված 104-րդ, մաս 1-ին), մահապատժի չեղյալ համարելը (հոդված 120-րդ) և այլն: Սոցիալական իրավունքները Գերմանիայում դիտարկվում են որպես բնակչության՝ արժանապատիվ կյանքի իրավունքների պաշտպանության եղանակ:

Այսպիսով, անձի արժանապատվությունը վերացական սկզբունք չէ, այլ ունի նյութական և բարոյական բնույթի լիովին կոնկրետ բովանդակություն: Գերմանացի իրավագետները համարում են, որ սահմանադրական պետությունը հիմնվում է երկու կանխադրույթների վրա՝ ժողովրդական ինքնավարության և անձի արժանապատվության վրա⁸²:

Նման եզրակացության է հանգել Վ.Վ.Նեվինսկին, նա մանրամասն հետազոտել է անձի արժանապատվության սահմանադրական ամրագրման գերմանական փորձը և դիտարկել է տվյալ սահմանադրական սկզբունքի բովանդակության և Գերմանիայում քաղաքացիների հիմնական իրավունքների և ազատությունների համակարգում նրա դերի որոշման հետ կապված մի շարք հարցեր⁸³:

Որոշ հեղինակներ ուշադրություն են դարձնում այն փաստի վրա, որ Գերմանիայի հիմնական օրենքում անձի արժանապատվությունը նկարագրված է հնարավոր խախտման տեսանկյունից, այսինքն բացասական⁸⁴: Մենք կապում ենք դա տվյալ հասկացության անհրաժեշտ կոնկրետացման հետ՝ այն գործնականում կիրառելու նպատակով: Նաև անձի արժանապատվության սկզբունքի հիման վրա հռչակվում է անձի ազատ զարգացման երաշխիքը (հոդված 2-րդ, մաս 1-ին), որը հիմնվում է հավասարության սկզբունքը (հոդված 3-րդ, մաս 1-ին):

⁸² Տես՝ Изензее Й., Кирххоф П. Государственное право Германии. М.: Российская академия наук, 1994. Т. 1. Стр 17-19:

⁸³ Տես՝ Невинский В.В. Немецкие граждане в зеркале онсовополагающих принципов конституции ФРГ. Барнаул: Изд-во Алтайского гос. Ун-та. 1994.

⁸⁴ Տես՝ Хышиктуев О.В., Цыреторов С.В. Сравнительный анализ конституционно-правового института достоинства личности в зарубежных государствах //Российская юстиция. 2011 N 1.

Գերմանացի գիտնականները իրենց աշխատություններում հաճախ վկայակոչում են պատմական փաստերը, այդ կերպ նշելով պատմական գործընթացների՝ հասարակությունում մարդկանց հարաբերությունների, առանձին անհատի հայացքների ձևավորումների վրա ազդեցության անխզելի կապը: Տվյալ իրավիճակում անձի արժանապատվության սկզբունքը դիտարկվում է որպես մարդկային հարաբերությունների, հիմք որը սահմանափակ մեկնաբանության ենթակա չէ: Անձի արժանապատվության՝ որպես սկզբունքի ամրագրումը, թույլ է տալիս երաշխավորել ինչպես անհատի անձնական գործերում պետության չմիջամտելը, այնպես էլ նրա ակտիվ գործողություններն անձի արժանապատվության պաշտպանության գծով, այսինքն, որոշակի պարտականություն:

Մարդու իրավունքների պահպանման որոշակի պայմանները, որոնք ներառված են Գերմանիայի հիմնական օրենքում, կայանում են նրա արժանապատիվ գոյության ապահովման, մարդկանց միջև իրավական հավասարության ձևավորման, հասարակական և քաղաքական ինքնարտահայտման հնարավորությունների ստեղծման (ինքնորոշման), պետության հնարավոր կամայականության դեմ մարդու դատավարական իրավունքների երաշխավորվածության, անձնական ֆիզիկական անձեռնմխելիության պահպանման մեջ⁸⁵:

Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարանի 25.02.1975 թվականի վճռում ամրագրված է, որ հիմնական օրենքը սահմանել է իրավական կորդինատների արժեքային կողմնորոշիչ համակարգ, որը դուրս է բերում առանձին մարդուն և նրա արժանապատվությունն իր բոլոր կարգավիճակների կենտրոն:

Նույն դատարանը, 21.06.1977 թվականի վճռով, մարդկային արժանապատվության հարգանքը և պաշտպանությունը դասում է հիմնական օրենքի սահմանադրական սկզբունքների թվին, որ ազատ անհատը և նրա արժանապատվությունը իրենից ներկայացնում է սահմանադրական կարգի ներսում իրավունքի բարձրագույն արժեք, իսկ պետական իշխանության վրա դրվում է մարդկային արժանապատվության հարգելու և պաշտպանելու պարտականությունը:

⁸⁵ Sten' Невинский В.В. Немцы в зеркале основополагающих принципов конституции ФРГ. Барнаул: Изд-во Алтайского гос. Ун-та. 1994. Էջ 58:

Գերմանացի պետականագետ Պ.Հաբերլեն կոչում է անհատի արժանապատվության սկզբունքը պետական կարգի հիմնարար նորմ, որը կազմում է սահմանադրորեն կազմակերպված հասարակության հիմքը և ստեղծում է բազմաչափ պաշտպանված տարածություն, ինչը պաշտպանում է իր սահմանադրաիրավական արժանիքը սպառնալիքներից⁸⁶:

Վերլուծելով պետության ազատության տեսությունը, արդարացիորեն անընդունելի է համարում այն, պետության՝ մարդու հետ հարաբերություններում անձի արժանապատվության ունիվերսալ սկզբունքի իրացման համար, ինչը թույլ է տալիս առանձնացնել արժանապատվության որոշ գործառույթներ, օրինակ սոցիալականը, որը կապված է կյանքի արժանապատիվ մակարդակի հետ, ինչպես նաև հաղորդակցականը (օրինակ՝ մարդու արժանապատվության պաշտպանության անհրաժեշտությունը պետական կառույցների և զանգվածային լրատվության միջոցների հետ շփման ընթացքում):

Այնուամենայնիվ, Գերմանիայի հիմնական օրենքում ամրագրված չէ արժանապատվության եզրութաբանական հասկացությունը և չնայած ԳԴՀ դաշնային սահմանադրական դատարանի գոյությանը, դեռևս մշակված չէ բավական հստակ և հարմար ձևակերպում այն մասին, թե ինչպես պետք է հասկանալ մարդու արժանապատվությունը⁸⁷:

Անհրաժեշտ է նշել, որ չնայած Գերմանիայի սահմանադրական իրավունքի տեսաբանները որպես իրենց նպատակ չեն էլ դնում արժանապատվության սպառիչ հասկացությունը տալը, սակայն ուշադրություն են դարձնում հետազոտվող հասկացության փոփոխականության բնույթին, կոնկրետ պատմական ժամանակաշրջանից կախվածության և պետության իրավական մշակույթի վրա: Գերմանիայի փորձը ցույց տվեց, որ սահմանադրական պետությունը չի կարող ինքնաբերաբար դառնալ իրավական՝ առանց քաղաքացիների իրավունքների իրական պաշտպանության:

⁸⁶ Stu՝ Хаберле П. Достоинство человека как основа демократической государственности //Государственное право Германии. В 2 т. Т. 2. М., 1994. էջ 16:

⁸⁷ Stu՝ նույն տեղում էջ 14:

Գերմանացի իրավագետ Ա.Բլակենգալը ընդգծում է, որ արժանապատվություն կատեգորիան չի կարող բաղկացած լինել բացառապես դրա մասին առօրյա պատկերացումներից. ապագա սերունդների, այլ հասարակության համար արժանապատվության անձեռնմխելիության այսօրվա բանաձևը միայն ծառայում է որպես ելքային նյութ՝ դրա մշակութային բովանդակության փոփոխականության պատճառով⁸⁸:

Թերևս, Գերմանիայի դատական պրակտիկայի համար արժանապատվության ստատիկ հասկացության բացակայության փաստը բացասական դեր չի խաղում: Դրական հատկանիշները կայանում են նրանում, որ կոնկրետ գործը քննելիս, տվյալ հասկացության անորոշակիությունը և բազմիմաստությունը նպաստում է հիշատակված նորմի անմիջական կիրառմանը արագ փոփոխվող իրականության պայմանների նկատմամբ⁸⁹:

Մ.Լ.Գասկարովան արդարացիորեն շեշտը դնում է Ֆ.Կեյլերի կարծիքի վրա այն մասին, որ գոյություն ունեցող ցանկացած հիմնական իրավունք, որն ապահովում է մարդկային պահանջմունքների կոնկրետ ոլորտ, միաժամանակ իրականացնում է մարդու արժանապատվության պաշտպանություն այդ ոլորտում: Այլ կերպ ասած՝ յուրաքանչյուր հիմնական իրավունք, որոշակի մասով հանդիսանում է մարդկային արժանապատվության արտացոլում և հետագայում ձևավորված բոլոր հիմնական իրավունքների աղբյուր⁹⁰:

Գերմանական սահմանադրաիրավական մոդելից էապես տարբերվում է Ավստրիայի Սահմանադրությունը, որը ամբողջական ակտ չէ, այլ իրենից ներկայացնում է իրավահարաբերությունների առանձին բնագավառները կարգավորող դաշնային սահմանադրական օրենքների համախմբություն: Դա հիմնականում պայմանավորված է նրանով, որ բացարձակ իշխանությունից դեպի սահմանադրականին անցումը տեղի է ունեցել Ավստրիայում ավելի ուշ, քան

⁸⁸ Stu՝ Blankenagel A. Gentechnologie und Menschenwürde. Ueber die Sachverstand von juristischem Sachverstand und gesundem Menschenverstand anlaesslich einesernsten Themas // Kritisch justity. 1987. էջ 388.

⁸⁹ Stu՝ Брусин А.М. Защита конституционных прав и свобод личности как направление деятельности Федерального Конституционного суда и конституционных судов земель ФРГ: Сравнительно-правовой аспект: Автореф. Дис. Канд. юрид. наук. СПб., 2002. էջ 17:

⁹⁰ Stu՝ Гаскарова М.Л. Концепция достоинства человека в немецком конституционном праве //Журнал российского право. 2002 N 4. էջ 157:

Գերմանիայում: Ավստրիայում սահմանադրական կարգը վերջնականապես հաստատվել է 1867 թվականին:

Տվյալ օրենքներում արժանապատվության իրավունքի երաշխավորման հարցերը կարգավորող կոնկրետ հոդվածներ, մեր կողմից չեն հայտնաբերվել, սակայն բացահայտվել են մասնակի հիշատակումներ: Այսպես, Ավստրիայի 1988 թվականի դաշնային սահմանադրական օրենքը⁹¹, որն ամրագրում է կալանավորվածի և բերման ենթարկվածի իրավունքները, պարտավորեցնում է զգուշորեն վերաբերվել այդպիսի անձանց, հարգել նրանց մարդկային արժանապատվությունը:

Որպես մարդու արժանապատվության և այլ իրավունքների պաշտպանության երաշխիք է ծառայում իշխանությունների ամրագրված պատասխանատվությունը, դաշնային սահմանադրական օրենքների նորմերը ոչ պատշաճ կատարելու համար: Այսպես, սուբյեկտների լայն շրջանակ կարող է ենթարկվել իրավաբանական պատասխանատվության սահմանադրական օրենքների նորմերը խախտելու համար, այդ թվում դաշնության նախագահը, դաշնային կառավարության և դրան հավասարեցված մարմինների անդամները, ինչպես նաև և այլ պաշտոնատար անձինք:

Մեր կարծիքով, այդպիսի իրավիճակը հատկապես կարևոր է կապված այն հանգամանքի հետ, որ իրավական սանկցիաներով չամրագրված սահմանադրական նորմ-սկզբունքները հաճախ գործնականում անտեսվում են պաշտոնատար անձանց կողմից: Դրա համար էլ սահմանադրական իրավունքի գիտության համար, տարբեր երկրներում հատուկ նշանակություն է ձեռք բերում պետությունում սոցիալական քաղաքականության վիճակը և քաղաքացիական իրավունքների իրական պաշտպանությունը, այլ ոչ թե չնայած սահմանադրություններում գրված, սակայն իրականության հետ առընչություն չունեցող աղմկալից հոչակագրային ձևակերպումների §2քերթը!:

Ինչպես նշել է XVIII դարի բրիտանացի պահպանողական քաղաքական գործիչ Է.Բերկը՝ հին պետական կարգերը գնահատվում էին գործունեության արդյունքներով,

⁹¹ Стн' Конституции государств Европейского Союза. М.: Норма, 1997.

եթե ժողովուրդը եղել է երջանիկ, համախմբված, հարուստ և ուժեղ, ապա մնացածը կարելի է համարել ապացուցված⁹²:

1947 թվականին ընդունված և ամենաժողովրդավարական սահմանադրություններից մեկը համարվող Իտալական Հանրապետության Սահմանադրությունում, անձի հասարակական արժանապատվության հասկացությունը գրավում է առաջնային տեղ «Հիմնական սկզբունքներ» բաժնում:

Տվյալ բաժնի 3-րդ հոդվածը սահմանում է բոլոր քաղաքացիների հավասարությունը օրենքի առջև անկախ սեռից, ռասայից, լեզվից, քաղաքական համոզմունքներից, անձնական և սոցիալական դիրքից և ամրագրում է խտրականությանը ոչ ենթակա նրանց միևնույն հասարակական արժանապատվություն: Իտալական սահմանադրության դոկտրինի առանձնահատկություններից է սահմանադրական սկզբունքների և նորմերի բարձրացված իրավաբանական նշանակությունը և անվիճելիությունը:

Դրանով իսկ, մենք համարում ենք, որ ենթադրվում է հասարակության պատրաստակամությունը՝ երկրի Սահմանադրությունում ամրագրված բոլոր իրավունքները հասարակության բոլոր անդամների կողմից ճանաչելու համար, որոնք իրենց հարաբերում են քաղաքացիական հասարակության հետ իրավական պետությունում, մարդկային անհատի արժեքն ամրագրվում է կարծիքների բազմազանության իրավունքի ճանաչմամբ (հոդված 21-րդ), քաղաքական դրդապատճառներով հետապնդման արգելքով (հոդված 22-րդ), լեզվական փոքրամասնությունների պաշտպանության երաշխիքով (հոդված 6-րդ), ինչպես նաև իրավունքների պաշտպանությամբ՝ որպես ոչ միայն անձնական, այլև ընդհանրապես ամբողջ հասարակության բարեկեցության երաշխիք (հոդված 2-րդ):

Մանրամասն ուշադրության են արժանի Սահմանադրության այն նորմերը, որոնք նախատեսում են պաշտոնատար անձանց պատասխանատվությունը քաղաքացիների արժանապատվության, նրանց իրավունքների և ազատությունների նկատմամբ ոտնձգությունների համար: Սահմանադրությունում ձևակերպված հանրապետության խնդիրն է հանդիսանում տնտեսական և սոցիալական կարգի խոչընդոտների

⁹² Տե՛ս՝ Э.Размышления о революции во Франции. М.: Рудомино, 1993 էջ 26:

վերացումը, որոնք փաստորեն սահմանափակելով քաղաքացիների ազատությունը և հավասարությունը, խանգարում են մարդկային արժանապատվության լրիվ զարգացմանը և բոլոր աշխատավորների՝ երկրի քաղաքական, տնտեսական սոցիալական կազմակերպմանն արդյունավետ մասնակցությանը⁹³:

Իտալիայում անձի արժանապատվության հանդեպ պետության հարգանքը դրսևորվում է այնպիսի նուրբ ոլորտում, ինչպիսին է հոգեբուժական օգնության ցուցաբերումը: Մեր երկրում, ինչպես նաև հետխորհրդային երկրների մեծամասնությունում վատ համբավ ունեցող հոգեբուժական հիվանդանոցների փոխարեն ձևավորված են հոգեբուժական օգնության հասարակական ծառայություններ: Դրանց հիմնական նշանակությունը կայանում է հոգեպես հիվանդ մարդկանց հասարակական կյանք ինտեգրմանը նպաստելուն, օտարման քաղաքականության հաղթահարելուն, բնակչության մոտ նշված անձանց նկատմամբ կարեկցանքի զգացմունքի դաստիարակելուն: Անխոս, հասարակական ծառայությունները չեն փոխարինում իրենցով համապատասխան բժշկական ծառայությունների գործունեությունը, որոնք գործում են սահմանված կանոնակարգերի շրջանակներում:

Փորձագետների կարծիքով, նման պրակտիկան նպաստում է հոգեկան հիվանդություններով անձանց իրավունքների վերականգնմանը, որոնց մոտ իրական հնարվորություն է առաջանում գիտենալ հասարակությունում որոշակի տեղի մասին, զգալ իրեն որպես լիիրավ քաղաքացի⁹⁴:

Իտալիայի Սահմանադրության 13-րդ հոդվածը հռչակում է անձի ազատության անխախտ լինելը՝ սահմանելով ազատության սահմանափակման ենթարկված անձանց ֆիզիկական և բարոյական հարկադրանքի հետ կապված արարքների պատժելիություն: Իտալիայի Սահմանադրության տեքստի մեկ երրորդից ավելին, որում հստակ արտահայտված է եվրոպական երկրների սահմանադրական օրենսդրության սոցիալականացման ձգտումը, նվիրված է մարդու իրավունքներին և

⁹³ Stu՝ Конституция Итальянской Республики.М.: Издательская группа: 1997. 423-450 էջ:

⁹⁴ Stu՝ The Italian National Mental Health Law (անգլ.). Trieste: Mental Health Departmen. Законодательство Италии в области психиатрии URL: <http://www.triestesalutementale.it/english/doc/psy.reform.act.doc/>.

ազատություններին, ներառյալ անձի իրավական կարգավիճակի մանրամասն, երբեմն նաև ավելորդ մանրակրկիտ կարգավորում:

Ֆրանսիայի Հանրապետության Սահմանադրության⁹⁵ (1958թ.) նախաբանում հանդիսավոր հռչակվում է ֆրանսիացի ժողովրդի հավատարմությունը մարդու իրավունքներին և ազգային ինքնուրույնության սկզբունքներին, ինչպես դրանք սահմանված են եղել 1789 թվականի հռչակագրով և 1946 թվականի Սահմանադրության նախաբանով: Հատկանշական է, որ Ֆրանսիայի Սահմանադրությունում բացակայում է պետությունների մեծամասնության նման օրենքների համար սովորական՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների թվարկումը: Դա բացատրվում է նրանով, որ վերը նշված փաստաթղթերը (Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը և 1946 թվականի Սահմանադրության նախաբանը) ճանաչվել են հանրապետության Սահմանադրական խորհրդի կողմից որպես գործող Սահմանադրության անբաժանելի մասեր:

Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիրը, չնայած անցած հարյուրամյակներին, այժմ էլ մնում է որպես կարևոր ուղենիշ ինչպես պետական իրավական փաստաթղթերի ստեղծման, այնպես էլ իրավաբանության ոլորտում հետազոտողների համար: Նրա տասնյոթ հոդվածներում զարմանալիորեն հստակ ձևակերպված են քաղաքացիական ժողովրդավարական հասարակության հիմնական սկզբունքները, որոնք ներկայումս ընկալվում են որպես լիովին արդիական:

Չնայած նրան, որ հռչակագրի հեղինակները դասում են ազատությունը, սեփականությունը, անվտանգությունը և կեղեքմանը դիմադրությունը մարդու բնական անբաժանելի իրավունքների թվին, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դիտարկվող փաստաթղթում, ինչպես և Ֆրանսիայի Սահմանադրության (1946թ.) նախաբանում արժանապատվության իրավունքի վերաբերյալ նորմերի կամ անգամ դրանց մասին հիշատակման բացակայության վրա: Նրանց բովանդակության մեջ նաև չեն ներառված իրավունքների այնիսի բավական տարածված տեսակները, ինչպիսիք են մշակութային արժեքների նկատմամբ ազատ հասանելիության իրավունքը,

⁹⁵ Stu' Конституция Франции //URL: http://www.conseil-constitutionnel.fr/conseil-constitutionnel/root/bank_mm/constitution/constitution_russe_version_aout2009.pdf.

մշակութային և պատմական ժառանգության պաշտպանության իրավունքը, տեղեկատվություն ստանալու իրավունքը:

Միայն Ֆրանսիայի կողմից 1980 թվականի նոյեմբերի 4-ին վավերացված Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի նախաբանում արժանապատվությունը հիշատակվում է որպես հիմք, որից սկիզբ են առնում մարդու բոլոր անքակտելի իրավունքները⁹⁶: Սակայն, վերոնշյալ փաստաթղթի անձի արժանապատվությանը վերաբերող հոդվածների փաստացի բովանդակությունը հանգում է մարդասիրական վերաբերմունքի և բերման ենթարկվածների ու կալանավորվածների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությանը:

Ուսումնասիրելով մարդու բնական և ձեռք բերված իրավունքների միջև կախվածությունը, ֆրանսիացի հետազոտող Ֆ.Լյուշերը ցույց է տվել, որ մարդու արժանապատվության իրավունքի երաշխավորումը կայանում է ոչ միայն նրա օրինական շահերի և օրենքով տրված ազատությունների նկատմամբ ոտնձգությունից ձեռնպահ մնալու վերաբերյալ սոցիալական հանրությանը ներկայացված պահանջի, այլ նաև մարդուն, նրա արժանապատիվ գոյության համար անհրաժեշտ չափով նյութական օգնության ցուցաբերման մեջ⁹⁷:

Արժանապատվության իրավունքի երաշխավորումն անհնար է բացատրել միայն բնական իրավունքների հայեցակարգի հիման վրա: Արժանապատվության իրավունքի բովանդակությունը Ֆ.Լյուշերը ստորաբաժանում է երկու բաղադրիչների՝ կյանքի արժանապատվություն և աշխատանքի արժանապատվություն: Կոնկրետացնելով արժանապատվության իրավունքը՝ նա դրա մեջ ներառում է առողջության պահպանման, անձի զարգացման, սոցիալական ապահովության, աշխատանքային զբաղվածության ապահովման և անգամ կյանքի դժվարությունների դեմ քաղաքացիների համախմբության իրավունքը:

Արժանապատվության բնական իրավունքը ինստիտուցիոնալացվում է նրա կողմից ձեռք բերված իրավունքների միջոցով: Նրա կարծիքով, կյանքի արժանապատվության իրավունքը, օրինակ, իրացվում է առողջության պահպանման,

⁹⁶ Տե՛ս՝ Международный пакт о гражданских и политических правах. Принят резолюцией 2200 А (XXI) Генеральной Ассамблеи от 16 декабря 1966 года.

⁹⁷ Տե՛ս՝ Люшер Ф. Конституционная защита прав и свобод личности. М.: Прогресс-Универс. 1993 էջ 121-122:

կենսագործունեության անվտանգության և անձի ազատ զարգացման իրավունքի միջոցով⁹⁸:

Մեր կարծիքով, Ֆ.Լյուշերի կողմից առաջարկված անձի իրավունքների և ազատությունների սահմանադրական պաշտպանության կառուցվածքում արժանապատվության իրավունքն արդարացիորեն զբաղեցնում է առաջնային դիրքերից մեկը, իր նշանակությամբ զիջելով միայն ազատության, հավասարության և սեփականության իրավունքներին: Դրա հետ մեկտեղ, տվյալ հասկացությունը բովանդակությամբ բավականաչափ լայն է և սերտորեն կապված է իրավունքների ավելի մեծ ծավալի հետ:

Այսպիսով, մենք կարծում ենք, որ անձի անձեռնմխելիության իրավունքը նաև ենթադրվում է արժանապատվության երաշխավորությամբ և կարիք չունի առանձին բաժնով առանձնացման, ինչպես դա ներկայացված է Ֆ.Լյուշերի մոտ:

Մարդու արժանապատվության իրավունքի իրավաբանական երաշխիք է հանդիսանում անձի իրավունքների և ազատությունների սահմանափակումների սահմանումը միայն Սահմանադրությամբ և այլ օրենքներով պաշտպանվող իրավական պետության արժեքներին համաչափ: Ընդ որում, բոլոր սահմանափակումները պետք է հաշվի առնեն մարդու շահերի, հասարակության և պետության անհրաժեշտ հավասարակշռությունը:

Ինչպես հետևում է Ֆրանսիայի Սահմանադրության 34-րդ հոդվածից, արժանապատվության իրավունքի անմիջական ապահովման գործընթացում առանցքային դեր է խաղում երկրի խորհրդարանը: Նրա կողմից ընդունված Ֆրանսիայի Հանրապետության օրենքները սահմանում են քաղաքացիական իրավունքների և քաղաքացիներին տրվող հասարակական ազատությունների հիմնական երաշխիքների իրացման անխախտ կարգ:

Արժանապատվության իրավունքի ապահովման երաշխավորման մեջ կարևոր նշանակություն է ունեցել 1973 թվականին Ֆրանսիայում «օմբուդսմենի» մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի հիմնադրումը, որը հանդես է գալիս որպես միջնորդ պետության և անհատի միջև:

⁹⁸ Տես՝ նույն տեղում էջ 130-131:

Օմբուդսմենի լիազորությունների թվին են դասվում մարդու իրավունքների խախտման փաստերով բողոքների քննումը:

Դիմումի մեջ նշված իրադարձությունների հաստատման դեպքում, միջնորդը կարող է հարուցել կարգապահական վարույթ կամ բողոքով դիմել դատարան, իսկ հանցագործություն կատարելու դեպքում՝ հանդես գալ քրեական գործ հարուցելու վերաբերյալ միջնորդությամբ:

Հունաստանի Հանրապետության Սահմանադրությունում (1975թ.) դժվար չէ նկատել վերևում դիտարկված Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի հիմնական օրենքներից զգալի փոխառությունները: Տվյալ պարտականությունը կարգավորող նորմը տեղադրված է առաջին բաժնի 2-րդ հոդվածում՝ «Պետական կառավարման ձևը» և նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք կարող է ազատ զարգացնել իր անձը և մասնակցել երկրի սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում, եթե միայն դա չի խոչընդոտում մյուսների իրավունքներին, չի խախտում Սահմանադրությունը կամ բարոյական նորմերը: 2001 թվականին Հունաստանի Սահմանադրությունը վերանայվել է՝ անհատական և սոցիալական իրավունքների կատարելագործման նպատակով:

Մարդու արժանապատվությունը ներկայացված է Շվեցարական Կոնֆեդերացիայի Դաշնային Սահմանադրության 1-ին գլխում առանձին հոդվածով՝ «Հիմնական իրավունքները» իսկ 7-րդ հոդվածում ուղղակիորեն ամրագրված է, որ «մարդկային արժանապատվությունը պետք է հարգվի և պաշտպանվի»⁹⁹: Դրան են նպաստում Սահմանադրությամբ տրված այլ հիմնական իրավունքները՝ հավասարությունը, պաշտպանությունը կամայականությունից, կյանքի և անձնական ազատության իրավունքը, անձնական բնույթի հարաբերությունների պաշտպանության իրավունքը, տնտեսական ազատությունը և այլն:

Արտահայտված դրույթն այն մասին, որ իշխանությունը պետությունում պետք է անմիջականորեն իրականացվի մարդկանց և կոնկրետ քաղաքացու

⁹⁹ Стн՝ Союзная конституция Швейцарской конфедерации от 18 апреля 1999 //Конституции государств Европы: сб.; в 3 т. Под общ. Ред. Л.А. Окунькова: Москва, 2001 էջ 537-580:

արժանապատվության և ազատության հանդեպ հարգանքով, մասնավորապես գոյություն ունի Շվեդիայի Սահմանադրությունում¹⁰⁰:

Հատկանշական է, որ շվեդական սահմանադրական օրենսդրությունը ճանաչում է մարդու արժանապատվության շահերը որպես առաջնային խոսքի ազատության և տեղեկատվության ազատության իրավունքի նկատմամբ: Տվյալ նորմն ամրագրված է մամուլի ազատության մասին ակտում (1974թ.), որը հանդիսանում է Շվեդիայի Սահմանադրության բաղկացուցիչ մասը: Շվեդական օրենսդրությունը հետևողականորեն պաշտպանում է կանանց շահերը, մեծ ուշադրություն դարձնելով նրանց արժանապատվության պաշտպանությանը: Շվեդիայում առաջին անգամ 1999 թվականին հրապարակվեց «Կանանց ազատությունների մասին» (Kvinnofridslagstiftningen) օրենքների ժողովածուն, ինչպես նաև «Սեռական ծառայությունների գնման արգելքի մասին» 1998 թվականի օրենքը, որոնք սահմանում են պոռնկությունը/процентую որպես կանանց շահագործման ձև, որպես տղամարդու կողմից բռնություն կնոջ նկատմամբ, դրանով իսկ հռչակելով անձեռնմխելիության երաշխիքներ և կնոջ արժանապատվության հարգանքը:

Իսպանիայի հիմնական օրենքը՝ 1978թ. Սահմանադրությանը, որպես քաղաքական կարգի և սոցիալական համերաշխության հիմք ներածական բաժնի 10-րդ հոդվածում հռչակում է մարդու արժանապատվությունը և նրա իրավունքների անձեռնմխելիությունը, անձի ազատ զարգացումը, օրենքի և այլ մարդկանց նկատմամբ հարգանքը: Իսպանիայի Սահմանադրության ուշադրության արժանի և բավական ուսանելի դրույթ է հանդիսանում մեր կարծիքով ծերության ժամանակ արժանապատիվ տնտեսական գոյակցության երաշխավորումը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ պատվի և արժանապատվության պաշտպանության և պահպանության գոյություն ունեցող մեխանիզմը ներառում է ոչ միայն օրենսդրությունը, այլ նաև դրա կիրառման պրակտիկան: Որպես օրենք, դա վերագրում են պետության պոզիտիվ պարտականությունների թվին: Իսկ պետության վրա դրված բացասական պարտականությունը կայանում է պատիվը և արժանապատվությունը ոտնահարող գործողություններից ձեռնպահ մնալու մեջ: Համապատասխանաբար,

¹⁰⁰ Stu՝ Конституция Швеции (Королевства Швеция) от 27 февраля 1974 г. /www.sweden4rus. nu/rus/info/ juridisk/ konstitucija_shvecii/.

պատվի պաշտպանության և արժանապատվության պահպանության սահմանադրական իրավունքները կարող է միայն պետությունը ի դեմս նրա մարմինների և պաշտոնատար անձանց:

Այսպիսով, մասնավոր անձինք չեն կարող կատարել այլ գործողություններ այն բանի ուժով, որ նրանք չեն հանդիսանում կարգավորվող հարաբերությունների սուբյեկտներ: Պատվի և արժանապատվության պաշտպանության գծով պետության պարտականություններին թղթակցում է պատվի և արժանապատվության պաշտպանության մեխանիզմին դիմելու իրավասությունը, անձն իրավունք ունի պահանջել պետությունից պատվի և արժանապատվության պաշտպանության արդյունավետ իրավական կարգավորման ստեղծման ակտիվ գործողություններ:

Այսպես, Լեհաստանի Սահմանադրության նախաբանում նշված է ծնված օրվանից մարդու արժանապատվության պաշտպանության մասին պետության կողմից հոգալու անհրաժեշտությունը երկրի հիմնական օրենքի կիրառման գործընթացում¹⁰¹:

Լեհաստանի սահմանադրական կարգի պատմությունը սկիզբ է առնում դեռևս 1791 թականից: Դա կապված է Կառավարական օրենքի (Ustawa Rzadowa) ընդունման հետ, որը չնայած ստեղծվել է Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի ազդեցության ներքո, սակայն չէր ճանաչում քաղաքացիների իրավահավասարության սկզբունքը:

Լեհական պետության հիմնական օրենքն անցել է բարդ պատմական ուղի, նախքան փաստաթուղթ դառնալը, որը ամբողջությամբ համապատասխանում է միջազգային իրավունքի պահանջներին: Լեհաստանի Սահմանադրության 30-րդ հոդվածում կրկնօրինակվում է նորմն այն մասին, որ արժանապատվությունն հանդիսանում է մարդու անքակտելի հատկանիշը ծնված օրվանից, ինչպես նաև մարդու և քաղաքացու ազատությունների և իրավունքների աղբյուրը: Սահմանադրության բոլոր այլ սկզբունքները և նորմերը մեկնաբանվում են արժանապատվության պրիզմայով, ինչը մեր կարծիքով շատ կարևոր է: Դա թույլ է տալիս մեզ անձի արժանապատվության վերաբերյալ սահմանադրական դրույթը

¹⁰¹ Sten' Конституция Польской республики от 2 апреля 1997г. //ources/world_constitutions/constit/poland/poland-r.htm//

բնութագրել ոչ միայն որպես հոչակագրային հաստատում, այլ նաև քաղաքական իրավական բովանդակությամբ օժտված անմիջականորեն գործող նորմ:

Հայտնի լեհ իրավապաշտպան Մ.Նովիցկին ընդգծում էր, որ մարդու իրավունքների հայեցկարգի հիմքում ընկած է մարդկային արժանապատվության հասկացությունը, որը բնորոշ է յուրաքանչյուր մարդու և կախված չէ նրա կենսակերպից (անձնական արժանապատվությունը, ընդհակառակը, կախված է մարդու կենսակերպից և նրա վարքից): Սահմանադրության բաժինները, որոնք ամրագրում են մարդու իրավունքները և ազատությունները, նա առանձնացնում էր որպես հատուկ սկզբունք, որը իր կողմից կոչվել է *սահմանադրականության սկզբունք*, որը սահմանում է իշխանության սահմանները ժողովրդավարական հասարակությունում¹⁰²:

Հավասարության և ազատության սկզբունքները մարդկային արժանապատվության գաղափարից նրա կողմից ուղղակիորեն դուրս են բերվում: Հռչակելով որոշակի իրավունքներ, օրինակ՝ կրթության իրավունքը, պետությունը դրանով իսկ երաշխավորում է կրթական հաստատությունների ստեղծումը, ուսուցման արդյունավետ համակարգը, արժանապատիվ կրթաթոշակը և այլն:

Ինչպես նշում է Պ.Ի.Սավիցկին, Բելգիայի գործող Սահմանադրությունը ընդունվել է 1831 թվականի Սահմանադրության երկարատև բարեփոխումից հետո¹⁰³: Բելգիայի Սահմանադրության 23-րդ հոդվածում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի մարդկային արժանապատվությանը համապատասխանող կյանք վարելու իրավունք: Սահմանադրությունը երաշխավորում է անձնական ազատությունը ամրագրելով, որ ոչ ոք չի կարող ենթարկվել հետապնդման այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, բացառությամբ հանցագործության վայրում բռնելու դեպքերից, ոչ ոք չի կարող կալանավորվել այլ կերպ, քան կալանավորման պահին կամ ոչ ուշ քան 24 ժամում ներկայացված դատավորի պատճառաբանված որոշման հիման վրա (հոդված 12-րդ): Ոչ մի պատիժ չի կարող ոչ սահմանվել ոչ էլ

¹⁰² Տես՝ Новицкий М. Фундаментальная лекция на Варшавской школе прав человека /URL:<http://www.hro.org/node/181>.

¹⁰³ Տես՝ Саеицкий П.И. О новых изменениях в Конституции Бельгии /<http://www.krugosvet.ru/node/42737>.

կիրառվել այլ կերպ, քան օրենքի հիման վրա (հոդված 14-րդ): Քաղաքացիական մահապատիժը չեղյալ է համարվել և չի կարող վերականգնվել (հոդված 18-րդ):

Բելգիայի Սահմանադրության համար հատկանշական է երեխայի արժանապատվության նկատմամբ հատուկ հարգանքը: Այսպես, 22-րդ հոդվածին համապատասխան, յուրաքանչյուր երեխա ունի իրեն վերաբերող ցանկացած հարցով արտահայտվելու իրավունք. նրա կարծիքը հաշվի է առնվում տարիքի և նրա ողջամիտ դատողության հաշվարկով: Յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ստանալ այն ամենը, ինչը վերաբերում է իր զարգացմանը: Նաև ցանկացած որոշման մեջ, որը այս կամ այլ կերպ վերաբերվում է երեխային, ամենից առաջ հաշվի են առնվում նրա շահերը:

Ամրագրելով հիմնական իրավունքները և ազատությունները, Սլովակիայի Հանրապետության Սահմանադրությունը 12-րդ հոդվածով հռչակում է, որ բոլոր մարդկ ազատ են և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով, ճանաչում է մարդու հիմնական իրավունքները և ազատություններն անքակտելի և անօտարելի: Դրանք վաղեմության ենթակա չեն և չեղյալ չեն համարվում, ինչպես նաև երաշխավորվում են Սլովակիայի Հանրապետության տարածքում բոլորի համար: Նույն հոդվածի 4-րդ մասում առկա է նորմ, որի համաձայն ոչ ոք չի կարող ոտնահարվել իր իրավունքներում հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման համար:

Սլովակիայի Սահմանադրությունը երաշխավորում է անձնական ազատությունը (հոդված 17-րդ), բնակարանի անձեռնմխելիությունը (հոդված 21-րդ), նամակագրության գաղտնիությունը, փոխանցվող հաղորդագրությունների և այլ փաստաթղթերի գաղտնիությունը, անձնական տվյալների պահպանությունը (հոդված 22-րդ), տեղաշարժվելու և բնակվելու ազատությունը (հոդված 23-րդ), մտքի, խղճի, կրոնի և հավատքի ազատությունը (հոդված 24-րդ):

Առանձին ուշադրության են արժանի այն նորմերը, որոնք հատուկ վերաբերմունք են երաշխավորում կանանց, երիտասարդության և առողջության որոշակի խանգարումներ ունեցող անձանց աշխատանքային գործառույթներն իրականացնելիս առողջության պահպանման հատուկ վերաբերմունք: Սլովակիայի հիմնական օրենքը նաև իր պաշտպանության տակ է վերցնում մայրությունը, հայրությունը և

մանկությունը: Նշենք, որ համանման նորմ գոյություն ունի նաև ՌԴ Սահմանադրությունում (հոդված 8-րդ):

Ի տարբերություն Եվրամիության մի շարք երկրների, Սլովակիան ներկայումս հանդիսանում է այն փոքրաթիվ պետություններից մեկը, որը ձգտում է օրենսդրորեն ամրագրել ամուսնության հասկացությունը՝ որպես տղամարդու և կնոջ միջև յուրահատուկ միություն: Սահմանադրությունում տվյալ ուղղումները պաշտպանվեցին խորհրդարանում ձայների մեծամասնությամբ:

Ջ.Կ. ֆոն Կրեմպախը, հանդիսանալով օրենքի և արդարադատության եվրոպական կենտրոնի փաստաբան (European Centre for Law and Justice), բնութագրելով ձևավորված իրավիճակը, նշում է, որ մարդկային քաղաքակրթության սկզբից մինչև տասը տարի առաջ սկսված ժամանակաշրջանը, բոլորին պարզ էր, որ ամուսնությունը պետք է կնքվի տղամարդու և կնոջ միջև և որ միասեռ ամուսնությունները, հետևաբար, չեն կարող գոյություն ունենալ... չպետք է զարմանալ, որ երկրների մեծամասնության սահմանադրական օրենքներում չկա ամուսնության սահմանում, դրա անհրաժեշտությունը չի եղել: Միասեռ ամուսնությունները թույլատրող երկրների թվի աճով պայմանավորված ունիվերսալ բարոյական իրավական պայմանագիրը ամուսնության վերաբերյալ ոչնչացվեց¹⁰⁴:

Սլովակիայի Սահմանադրության 19-րդ հոդվածում իր ամրագրումն է գտել հետևյալ դրույթը, որին համապատասխան յուրաքանչյուր ոք ունի մարդկային արժանապատվության, անձնական պատվի հարգանքի, բարի համբավի և անվան պաշտպանության, մասնավոր ընտանեկան կյանքին անհիմն միջամտությունից պաշտպանվելու իրավունք:

Բելառուսի Հանրապետության Սահմանադրությունը պարտավորեցնում է պետությանն ապահովել անձի արժանապատվությունը նրա ազատության և անձեռնմխելիության հետ մեկտեղ: 21-րդ հոդվածում նշված է, որ Բելառուսական պետության բարձրագույն նպատակն է հանդիսանում մարդու իրավունքների և ազատությունների ապահովումը, ինչպես ամրագրված է յուրաքանչյուրի՝ կյանքի արժանապատիվ մակարդակի իրավունքը, ինչը ներառում է բավարար սնունդը,

¹⁰⁴ Stu' La Constitution Belge. Texte coordonné du 17 février 1994 // URL: http://www.senate.be/doc/const_fr.html.

հագուստը, բնակարանը և դրա համար անհրաժեշտ պայմանների մշտական բարելավումը: Հատկանշական է, որ տվյալ հոդվածը զետեղված է երկրորդ բաժնում՝ «Անձը, հսարակությունը, պետությունը» վերտառությամբ, ի տարբերություն Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության, որտեղ համանման նորմն ամրագրված է «Սահմանադրական կարգի հիմունքերը» առաջին գլխի առաջին բաժնի 7-րդ հոդվածում: Արժանապատիվ կյանք (Ռուսաստանի Դաշնության Սահմանադրություն) և կյանքի արժանապատիվ մակարդակ (Բելառուսի Հանրապետության Սահմանադրություն) հասկացությունների տնտեսական բովանդակության համեմատական համադրելի վերլուծությունը ցույց է տալիս, որ առաջին դեպքում խոսքը գնում է քաղաքացիների համար աշխատանքի վարձատրության երաշխավորված նվազագույն չափի սահմանման, իսկ երկրորդում՝ արժանապատիվ գոյության համար անհրաժեշտ պայմանների մշտական բարելավման մասին, ինչը մեր կարծիքով առավել նախընտրելի է, չնայած և պակաս կոնկրետ է:

Դրա հետ մեկտեղ կյանքի արժանապատիվ մակարդակի սահմանադրական ամրագրումը Բելառուսի Սահմանադրությունում մեծամասամբ հարաբերվում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 23-րդ հոդվածի 5-րդ կետի հետ, որին համապատասխան յուրաքանչյուր աշխատող ունի մարդուն արժանի գոյությունը ապահովող արդարացի և բավարար վարձատրության իրավունք:

Եթե ելնենք Հռչակագրի այն հիմնական գաղափարից, որ մարդու արժանապատվությունը հանդիսանում է բոլոր իրավունքների էությունը, ապա և պետության կողմից սոցիալ-տնտեսական իրավունքների անտեսումը, մեր կարծիքով, նույնպես հանդիսանում է անձի անձեռնմխելիության նկատմամբ ոտնձգություն:

Արտասահմանյան երկրներում անձի արժանապատվության իրավունքի ամրագրման սահմանադրական մոդելների համեմատական հետազոտությունը հնարավորություն է տալիս եզրակացություն կատարել այն մասին, որ օրենսդիրը տարբեր աստիճանով է գնահատում տվյալ եզրույթի նշանակությունը հասարակության իրավական կյանքում: Դրանից ելնելով, մենք առանձնացրել ենք սահմանադրական մոդելների երեք մակարդակ, որոնցով աստիճանավորումը պայմանավորված է

օրենսդրի՝ քաղաքացիների արժանապատվության երաշխիքների նկատմամբ մոտեցմամբ:

Իմպերատիվ-արժեքանական մակարդակը ներառում է մի շարք եվրոպական պետություններ՝ Գերմանիա, Հունաստան, Իտալիա, Իսպանիա, Լեհաստան, Շվեյցարիա, Շվեդիա և մի շարք այլ պետություններ, որտեղ պետության՝ մարդու արժանապատվությունը հարգելու և պաշտպանելու պարտականությունը սահմանված է օրենսդրի կողմից որպես առաջնահերթ: Այսպես, Գերմանիայում պետական իշխանության՝ մարդկային արժանապատվությունը հարգելու և պաշտպանելու պարտականությունը վերագրված է հիմնական օրենքի սահմանադրական սկզբունքներին, իսկ ազատ անձը և նրա արժանապատվությունն իրենցից ներկայացնում են սահմանադրական կարգի ներսում իրավունքի բարձրագույն արժեք:

Ենթադեքստային միջնորդավորված մակարդակը միավորում է այնպիսի երկրներ, ինչպիսին են Բելառուսը, Բելգիան, Սլովակիան և այլն, որոնց սահմանադրություններում մարդկային արժանապատվության հարգանքի իրավունքը դիտարկվում է այլ իրավունքների և ազատությունների՝ անձնական պատվի և բարի համբավի պահպանության, մասնավոր ընտանեկան կյանքին անհիմն միջամտելուց պաշտպանության ենթատեքստում:

Բնական ապրիոր մակարդակը ներառում է այնպիսի երկրներ, ինչպիսիք են Ավստրիան, Ֆրանսիան և այլն, որոնց սահմանադրություններում պետության կողմից արժանապատվության պաշտպանության երաշխավորման հարցերը կարգավորող հոդված չկա, կամ (ինչպես Ֆրանսիայի Սահմանադրությունում) բացակայում է պետությունների մեծամասնության համանման օրենքների համար սովորական մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների թվարկումը:

Սահմանադրական մոդելների բաշխումն ըստ մակարդակների՝ կախված քաղաքացիների արժանապատվության պաշտպանության երաշխիքից, հնարավորություն է տալիս սահմանադրական իրավունքի ոլորտում հետազոտողին որոշել, թե ինչպիսի նշանակություն է ձեռք բերում տարբեր երկրներում սոցիալական քաղաքականության և քաղաքացիական իրավունքների պաշտպանության վիճակը:

2.2. Մարդու արժանապատվության պաշտպանության միջազգային իրավական երաշխիքները

Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական ինստիտուտը ներառում է միջազգային իրավական սկզբունքների, նորմերի, երաշխիքների ու կառուցակարգերի համալիր համակարգ, որը կոչված է երաշխավորելու այդ արժանապատվության պահպանումն ու պաշտպանությունը: Կարևորելով այն, որ արժանապատվության պաշտպանությունը հանդիսանում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգի բաղկացության տարր, ունի իր իրավական ընկալումը՝ դիտարկվելով որպես միջազգային իրավանորմերով ճանաչվող, պահպանվող և պաշտպանվող համակարգաստեղծ արժեք: Հենց այս հանգամանքով է պայմանավորված մարդու արժանապատվության իրավական ամրագրումն ոչ միայն պետությունների սահմանադրություններում, այլև՝ միջազգային իրավական ակտերում:

Այսպես, մարդու արժանապատվության ճանաչման, պաշտպանության միջազգային նորմերի, սկզբունքների, երաշխիքների և կառուցակարգերի համալիրն իր մեջ ներառում է՝

1) պետության կողմից մարդու արժանապատվության որպես բարձրագույն արժեքի ճանաչումը և դրա՝ որպես միջազգային իրավական պահպանության օբյեկտի նշանակությամբ ամրագրող դրույթներ,

2) մարդու արժանապատվության պաշտպանության ուղղակի երաշխիքները ամրագրող և մանրամասնող դրույթներ, որոնք թղթակցում են մարդու արժանապատվության կառուցվածքի առավել կարևոր տարրերի հետ,

3) մարդու արժանապատվության պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ սահմանող կամ միջնորդավորված ձևով մարդու արժանապատվության պաշտպանությանն ուղղված իրավական սկզբունքների ու նորմերի համալիր դրույթներ,

4) իրավապահ մարմինների գործունեությունում և դատավարական ընթացակարգերում մարդու արժանապատվության պաշտպանության լրացուցիչ

երաշխիքներ սահմանող կամ միջնորդավորված ձևով մարդու արժանապատվության պաշտպանությանն ուղղված իրավական սկզբունքների ու նորմերի համալիր դրույթներ:

Անդրադառնալով պետության կողմից մարդու արժանապատվության որպես բարձրագույն արժեքի ճանաչումը և դրա՝ որպես միջազգային իրավական պահպանության օբյեկտի նշանակությամբ ամրագրող դրույթների համալիր վերլուծությանն, անհրաժեշտ է նշել, որ մարդու հիմնական իրավունքների գաղափարախոսությունն ամրագրումը Միավորված Ազգերի Կազմակերպության կանոնադրությունում և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում շրջադարձային դարձավ մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության գործում, քանի որ այն ենթադրում է, որ պետք է ուղղված լինի երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին միլիոնավոր մարդկանց ոտնահարված իրավունքների ու ազատությունների վերականգնմանը:

Այսպես, ՄԱԿ-ի կանոնադրության առաջաբանում ամրագրվեց այդ կազմակերպության նպատակը, ըստ որի՝ Միավորված ազգերի ժողովուրդները լի են վճռականությամբ փրկել գալիք սերունդներին պատերազմի արհավիրքից, որը մեր կյանքի ընթացքում երկու անգամ անասելի վիշտ է պատճառել մարդկությանը, և վերահաստատել հավատը մարդու հիմնական իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, տղամարդու և կնոջ, ինչպես նաև մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների նկատմամբ, և ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն արդարությունն ու դաշինքներից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունների հանդեպ հարգանքը, և ավելի մեծ ազատության պայմաններում խթանել սոցիալական առաջընթացն ու կենսամակարդակի բարելավումը¹⁰⁵:

Այս դրույթի նշանակությունն այն է, որ մարդու արժանապատվությունն ընկալվեց որպես բարձրագույն արժեք և բարոյական ու իրավական հենք, ինչը ենթադրում է, որ մարդու իրավունքները համընդհանուր են, անօտարելի, անքակտելի ու

¹⁰⁵ Տես՝ ՄԱԿ-ի կանոնադրություն, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12), <http://www.arlis.am/>:

փոխկապակցված, և բոլոր մարդիկ օժտված են մարդու իրավունքներով ու հիմնարար ազատություններով ի ծնե և հանուն ազատ ու արժանապատիվ կյանքի:

Արժանապատվության որպես բարձրագույն արժեքի գաղափարը դրվեց նաև ՄԱԿ-ի 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հիմքում: Այսպես, այդ հռչակագրի 1-ին հոդվածով սահմանվեց, որ բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով¹⁰⁶:

Զարգացնելով իր կանոնադրությամբ հռչակված սկզբունքներին համապատասխան մարդկային ընտանիքի բոլոր անդամներին ներհատուկ արժանապատվության և նրանց հավասար ու անկապտելի իրավունքների ճանաչման վերաբերյալ դիրքորոշումը, Միավորված Ազգերի Կազմակերպությունը 1966 թվականի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին և Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրերի նախաբանում հռչակեց, որ այն հանդիսանում է ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքը, ընդունելով, միաժամանակ այն, որ մարդու իրավունքները բխում են մարդկային անհատին ներհատուկ արժանապատվությունից:

Անհրաժեշտ է կարևորել նաև ՄԱԿ-ի 1968 թվականին մարդու իրավունքների վերաբերյալ կազմակերպված միջազգային կոնֆերանսում ընդունված բանաձևով ամրագրված դրույթի նշանակությունը, ըստ որի՝ Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր նպատակն է յուրաքանչյուրի համար առավելագույն ազատության և արժանապատվության ապահովումը: Իսկ 1969 թվականի Սոցիալական առաջընթացի և զարգացման մասին հռչակագրի 2-րդ հոդվածով նախատեսվեց, որ սոցիալական առաջընթացը և զարգացումը հիմնվում են մարդկային անհատականության արժանապատվության և արժեքի հարգման վրա՝ ապահովելով նրա իրավունքների և սոցիալական արդարության զարգացումը¹⁰⁷:

Այնուհետև, անդրադառնալով մարդու արժանապատվության պաշտպանության ուղղակի երաշխիքները ամրագրող և մանրամասնող դրույթների վերլուծությանը, անհրաժեշտ է նշել, որ դրանք ևս բազմաթիվ են, որոնք նույնպես հիմնարար նշանակություն ունեն: Այսպես, Տնտեսական, սոցիալական և մշակութային

¹⁰⁶ Տես՝ ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(16)

¹⁰⁷ Տես՝ ՄԱԿ-ի 1968 թվականին մարդու իրավունքների վերաբերյալ կազմակերպված միջազգային կոնֆերանս:

իրավունքների մասին դաշնագրի 13-րդ հոդվածում անդրադառնալով յուրաքանչյուրի կրթության իրավունքի ճանաչման խնդրին ՄԱԿ-ը հռչակեց, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ:

Միաժամանակ, մարդու արժանապատվության հարգման վերաբերյալ անհրաժեշտ է կարևորել ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 7-րդ հոդվածի իրավակարգավորումը, ըստ որի՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ էլ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Թերևս, հիշատակված նորմի իրացման կարևոր նշանակություն ունի ՄԱԿ-ի 1984 թվականի խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիայով ամրագրված երաշխիքները:

Մասնավորապես, նույն կոնվենցիայի 16-րդ հոդվածով սահմանվեց, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պարտավորվում է իր իրավազորության ներքո գտնվող ցանկացած տարածքում կանխել դաժան, անմարդկային և նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մյուս ձևերը, որոնք չեն դասվում Կոնվենցիայի 1-ին հոդվածում որպես խոշտանգում սահմանվածների շարքը, երբ այդպիսի գործողությունները կատարվում են պետական պաշտոնյայի կամ պաշտոնապես հանդես եկող մեկ այլ անձի կողմից, կամ նրանց հրահրմամբ, կամ նրանց գիտությամբ կամ լուռ համաձայնությամբ¹⁰⁸:

Ինչ վերաբերում է մարդու արժանապատվության պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ սահմանող կամ միջնորդավորված ձևով մարդու արժանապատվության պաշտպանությանն ուղղված իրավական սկզբունքների ու նորմերի համալիր դրույթներին, ապա այդ առումով կարևոր նշանակություն է ձեռք բերել Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովի կողմից 1993 թվականի հունիսի 25-ին ընդունված Վիեննայի հռչակագիրն է, որի 18-րդ, 25-րդ և 30-րդ կետերով ամրագրված

¹⁰⁸ ՄԱԿ-ի 1984 թվականի խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիա:

դրույթների համակարգային վերլուծությունից հետևեց, որ ծայրահեղ աղքատությունը և սոցիալական մեկուսացումը հանդիսանում են մարդու արժանապատվությանը վիրավորանք, իսկ՝ ըստ սեռի բռնությունը և բոլոր տիպի սեռական ոտնձգությունները... անհամատեղելի են մարդկային անհատականության արժանապատվության և արժեքի հետ: Միաժամանակ, այդ խորհրդաժողովը վերահաստատեց այն, որ մարդու արժանապատվության ապահովումը, բացի համընդհանուր իրավունքից, դիտարկվում է որպես մարդու իրավունքների և անհատի զարգացման անքակտելի կապ, իսկ մարդու արժանապատվության նկատմամբ ցանկացած վիրավորանք կամ բռնություն ինքնին դիտարկվում են որպես խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք¹⁰⁹:

Մարդու արժանապատվության պաշտպանությանն ուղղված իրավական սկզբունքների զարգացումն իր արտացոլումն է գտել նաև ՄԱԿ-ի 1981 թվականի Կրոնական կամ համոզմունքների հիման վրա բոլոր ձևերի անհանդուրժողականության և խտրականության վերացման մասին հռչակագրում, որի 3-րդ հոդվածը սահմանում է, որ մարդկանց խտրականությունը կրոնի կամ համոզմունքների հիման վրա հանդիսանում են մարդկային անհատականության արժանապատվության վիրավորում:

Մարդու արժանապատվության պաշտպանության լրացուցիչ երաշխիքների շարքին կարելի դասել նաև ՄԱԿ-ի 1985 թվականի Հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագրով ամրագրված դրույթները: Այսպես, հիշատակված հռչակագրի 4-րդ կետի համաձայն՝ զոհերին անհրաժեշտ է վերաբերվել կարեկցանքով և հարգել նրանց արժանապատվությունը և նրանք ունեն արդարադատության մեխանիզմների նկատմամբ հասանելիության և իրենց վնաս հասցնելու համար

¹⁰⁹ Մարդու իրավունքների համաշխարհային համաժողովի կողմից 1993 թվականի հունիսի 25-ին ընդունված Վիեննայի հռչակագիրը:

ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով և հիմքերով փոխհատուցման իրավունք¹¹⁰:

Թերևս, մարդու արժանապատվության պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ մասով անգնահատելի պետք է համարել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, որի 3-րդ հոդվածը սահմանում է, որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի¹¹¹:

Անդրադառնալով իրավապահ մարմինների գործունեությունում և դատավարական ընթացակարգերում մարդու արժանապատվության պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ սահմանող կամ միջնորդավորված ձևով մարդու արժանապատվության պաշտպանությանն ուղղված իրավական սկզբունքների ու նորմերի վերլուծությանը, անհրաժեշտ է կարևորել ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 10-րդ հոդվածի այն իրավակարգավորումը, ըստ որի՝ ազատագրված բոլոր անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի ու մարդկային անհատին ներհատուկ արժանապատվության հարգման իրավունք¹¹²:

Հիշատակված նորմն իր հետագա զարգացումը ստացավ ՄԱԿ-ի 1979 թվականի դեկտեմբերի 17-ի Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվեցողության կանոնագրքում, որի 5-րդ հոդվածում նախատեսվեց, որ՝ ոչ մի իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձ չի կարող իրականացնել, հրահրել կամ հանդուրժել որևէ գործողություն, որն իրենից ներկայացնում է խոշտանգում կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքի և պատժի այլ ձև: Միաժամանակ, նույն հոդվածի մեկնաբանությունում սահմանվեց, որ իրավակարգը պահպանող ոչ մի պաշտոնատար անձ չի կարող հիմնվել վերադաս

¹¹⁰ Հանցագործությունների և իշխանության չարաշահման գոհերի հանդեպ արդարադատության հիմնարար սկզբունքների հռչակագիր, ընդունվել է 1985թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 40/34 բանաձևով /www.arlis.am/:

¹¹¹ Կոնվենցիա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին՝ փոփոխված 11-րդ արձանագրությամբ, Հոռոմ 1950թ. նոյեմբերի 4-ին , /www.arlis.am/:

¹¹² ՄԱԿ-ի 1966թ. դեկտեմբերի 16-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիր, ընդունվել է ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 1966թ. դեկտեմբերի 16-ին 2200Ա (XXI) բանաձևով /www.arlis.am/:

անձանց կարգադրությունների կամ այնպիսի բացառիկ իրավիճակների վրա, ինչպիսիք են պատերազմի առկայությունը կամ վտանգը, ազգային անվտանգության սպառնալիքը, ներքին քաղաքական անկայունությունը կամ ցանկացած այլ արտակարգ իրադրություն՝ արդարացնելու համար խոշտանգումները կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը ստորացնող վերաբերմունքն ու պատժաձևը:

Քրեակատարողական համակարգում հետազոտության առարկա նորմերին վերաբերող երաշխիքներ է ամրագրված ՄԱԿ-ի Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոնների բանաձևում, որի 60-րդ կետի 1-ին մասը սահմանում է, որ հիմնարկում ընդունված ռեժիմը պետք է ձգտի բանտային և ազատ կյանքի միջև եղած տարբերությունը նվազագույնի հասցնել, քանի որ այդ տարբերությունը բանտարկյալի մեջ սպանում է պատասխանատվության զգացումը և մարդկային արժանապատվության գիտակցումը, իսկ 65-րդ կետը հռչակում է, որ բանտային ազատազրկման կամ նմանատիպ մեկ այլ պատժաձևի դատապարտված անձանց հետ վարվեցողության ընթացքում պետք է ձգտել նրանց մեջ ցանկություններարկել օրենքներին ենթարկվելու և ազատվելուց հետո սեփական գոյությունն ապահովելու՝ հաշվի առնելով պատժաժամկետների տևողությունը, ինչպես նաև նրանց հետ վարվեցողությունը պետք է ամրապնդի անհատական արժանապատվության զգացումը և սեփական պատասխանատվության գիտակցումը¹¹³:

Այնուհետև, ՄԱԿ-ի 1990 թվականի դեկտեմբերի 14-ի՝ Ազատազրկվածների հետ վերաբերմունքի հիմնական սկզբունքների բանաձևի 1-ին կետով սահմանվեց, որ՝ բոլոր ազատազրկվածները օգտվում են հարգալից վերաբերմունքից, հաշվի առնելով իրենց բնորոշ արժանապատվությունը և նրանց՝ որպես մարդ նշանակությունը¹¹⁴:

Գործնականում, իրավական գրեթե միևնույն մոտեցումը ցուցաբերվեց Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի Եվրոպական բանտային կանոնների մասին թիվ R (2006)2 հանձնարարականով, որում առաջարկվեց մասնակից բոլոր պետություններին

¹¹³ Բանտարկյալների հետ վարվեցողության նվազագույն ստանդարտ կանոններ ընդունվել են հանցագործությունների կանխմանն ու իրավախախտների հետ վարվեցողությանը նվիրված ՄԱԿ-ի առաջին կոնգրեսի կողմից, Ժնև, 1955 թ. հավանության է արժանացել ՄԱԿ-ի տնտեսական ու սոցիալական խորհրդի 1957 թ. հուլիսի 31-ի 663 C (XXLY) և 1977թ. մայիսի 13-ի 2076 (LXII) բանաձևով:

¹¹⁴ ՄԱԿ-ի 1990 թվականի դեկտեմբերի 14-ի՝ Ազատազրկվածների հետ վերաբերմունքի հիմնական սկզբունքների բանաձև:

կիրառել իրավական այն չափորոշիչը, ըստ որի՝ կալանք կիրառելիս և ազատազրկված անձանց նկատմամբ վերաբերմունք ցուցաբերելիս անհրաժեշտ է հաշվի առնել անվտանգության և կարգապահության պահանջները, միաժամանակ ապահովելով այնպիսի բանտային պայմաններ, որոնք չեն նվաստացնում անձի արժանապատվությունը և կալանավորված անձանց համար ապահովում են համապատասխան աշխատանքի հնարավորությամբ և ծրագրերով, որոնք հնարավորություն կտան անձին ազատազրկումից հետո վերադառնալ հասարակություն:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդի մասնակից-պետությունների Վիեննայի 1989 թվականի հունվարի 15-ի եզրափակիչ փաստաթղթի 23.2 և 23.4 կետերով առաջարկվեց մասնակից-պետություններին, որպեսզի կալանքի կամ ազատազրկման տակ գտնվող անձանց հետ վերաբերվեն մարդասիրորեն և մարդկային անհատականությանը բնորոշ արժանապատվության հարգմամբ՝ արգելելով խոշտանգումները կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ձևերը և կիրառելով այդպիսի պրակտիկայի ու դրա համար պատժի կանխարգելման համար արդյունավետ օրենսդրական, վարչական, դատական և այլ միջոցներ:

Միաժամանակ, նույն խորհրդի 1990 թվականի Կոպենհագենյան խորհրդակցության ժամանակ ընդունված բանաձևի համաձայն.

- խոշտանգումները և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության ու պատժի այլ ձևերն արգելելը, նման գործելակերպի կանխման և դրա համար պատժելու արդյունավետ օրենսդրական, դատական և այլ միջոցներ ձեռնարկելը, առանձին անձանց որևէ հոգեբուժական կամ մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները խախտող բժշկական այլ գործունեությունից պաշտպանելը և նման գործունեության կանխման ու դրա համար պատժելու արդյունավետ միջոցներ ձեռնարկելը դիտարկվեցին որպես պետությունների ուղղակի պարտավորություն (կետ 16.1),

- այդ պարտավորությունների արդյունավետ կատարման համաձայնեցված միջոցներին և ընթացակարգերին համապատասխանող պատշաճ գործողություններ

ձեռնարկելու համար առաջնահերթ կարգով պետությունները քննարկման պետք է ընդունեն խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության ու պատժի այլ ձևերի ցանկացած դեպք, որի մասին նրանց հայտնի է դարձել պաշտոնական ուղիներով կամ տեղեկատվության որևէ այլ հուսալի աղբյուրից (կետ 16.6),

- որևէ ձևով խոշտանգումների և անմարդկային կամ մարդկային արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության ու պատժի այլ ձևերի ենթարկվող ցանկացած անձի կյանքի ու անվտանգության պահպանումն ու երաշխիքը պետք է լինի միակ չափանիշը դրությունը շտկելու և պատշաճ միջոցներ կիրառելու համար, ընդ որում՝ խոշտանգումների և կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության ու պատժի այլ ձևերի ցանկացած դեպքի քննարկումը որևէ այլ միջազգային մարմնի կողմից կամ մեխանիզմի շրջանակներում չի կարող հիմք հանդիսանալ համապատասխան ու պատշաճ գործողությունների քննարկումից ու ձեռնարկումից ձեռնպահ մնալու առումով (կետ 16.7):

Մարդու արժանապատվության վերաբերյալ միջազգային իրավական կարգավորումների կառուցվածքային ու համակարգային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մարդու արժանապատվության արժեքանական բովանդակությունն ու նշանակությունն արտացոլող միջազգային իրավական հետևյալ հիմնարար բնութագրիչները.

ա. մարդկային անհատականության արժանապատվության և արժեքի ճանաչումը որպես միջազգային իրավունքի հիմնարար սկզբունք,

բ. յուրաքանչյուրին բնորոշ անհատի արժանապատվության ճանաչումը,

գ. մարդու իրավունքները բխում են մարդկային անհատականությանը բնորոշ արժանապատվությունից,

դ. պետության և հասարակության կողմից անհատի արժանապատվության որպես բարձրագույն արժեքի ճանաչումը հանդիսանում է ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության հիմքը,

ե. Միավորված Ազգերի Կազմակերպության գլխավոր նպատակն է յուրաքանչյուրի համար առավելագույն ազատության և արժանապատվության ապահովումը,

գ. սոցիալական առաջընթացը և զարգացումը հիմնվում են մարդկային անհատականության արժանապատվության և արժեքի հարգման վրա՝ ապահովելով նրա իրավունքների և սոցիալական արդարության զարգացումը,

է. բոլոր մարդիկ հավասար են իրենց արժանապատվությամբ,

ը. ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի,

թ. պետությունները, պետական մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են ճանաչել, հարգել, պահպանել և պաշտպանել անհատի արժանապատվությունը,

ժ. պետությունները պարտավոր են կանխարգելել իրենց իրավասությանն ենթակա ցանկացած տարածքում դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի մյուս ձևերը,

ի. հանցագործությունների և իշխանության չարաշահման զոհերին պետք է վերաբերվել կարեկցանքով և հարգել նրանց արժանապատվությունը,

լ. կրոնական կամ համոզմունքների հիման վրա բոլոր ձևերի անհանդուրժողականությունը և խտրականությունը հանդիսանում է մարդկային արժանապատվության վիրավորանք,

խ. ըստ սեռի բռնությունը և սեռական ոտնձգությունների բոլոր ձևերը անհամատեղելի են մարդու պատվի և արժանապատվության հետ,

ծ. բոլոր ձերբակալված կամ կալանավորված անձինք մարդասիրական վերաբերմունքի և մարդ-անհատին բնորոշ արժանապատվության հարգման իրավունք ունեն,

կ. ձերբակալված կամ կալանքի տակ գտնվող ոչ մի անձ չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության կամ պատժի այլ ձևերի, միաժամանակ, ոչ մի հանգամանք չի կարող արդարացում հանդիսանալ խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վարվեցողության կամ պատժի այլ ձևերի համար,

հ. քրեակատարողական հիմնարկում ընդունված ռեժիմը պետք է ձգտի բանտային և ազատ կյանքի միջև եղած տարբերությունը նվազագույնի հասցնել, քանի որ այդ տարբերությունը բանտարկյալի մեջ սպանում է պատասխանատվության զգացումը և մարդկային արժանապատվության գիտակցումը,

ձ. բանտային ազատագրկման կամ նմանատիպ մեկ այլ պատժաձևի դատապարտված անձանց հետ վարվեցողության ընթացքում պետք է ձգտել նրանց մեջ ցանկություն ներարկել օրենքներին ենթարկվելու և ազատվելուց հետո սեփական գոյությունն ապահովելու՝ հաշվի առնելով ազատագրկման տևողությունը: Նրանց հետ վարվեցողությունը պետք է ամրապնդի անհատական արժանապատվության զգացումը և սեփական պատասխանատվության գիտակցումը:

Այսպիսով, մարդու արժանապատվությունը ներկայումս համարվում է հասարակության զարգացման գլխավոր արժեքային կողմնորոշիչներից մեկը: Քաղաքացիական հասարակության ձևավորումը և իրավական պետության կառուցումն անհնարին կլինի, եթե հասարակական գիտակցությունում և պրակտիկայում չարմատավորվի մարդու արժանապատվության էությունը, իմաստավորումն ու նշանակությունը ցանկացած պետության և հասարակության բնական գործունեության համար:

Քաղաքակիրթ հասարակությունում պետության հիմնական գործառույթը պետք է լինի անձի արժանապատվության պաշտպանությունը: Մարդու արժանապատվության էությունը արտացոլող հիշատակված միջազգային իրավական դրույթների իմաստավորումն ու արժևորումը ազգային օրենսդրությամբ պայմանավորված կլինի պետության գոյության արդարացվածությունը և միայն այն դեպքում, եթե վերջինիս գործունեությունն ուղղված կլինի մարդու արժանապատվության ու նրա իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:

2.3. Մարդու արժանապատվության վերաբերյալ մարդու իրավունքների եվրոպական դատարանի հայեցակարգային մոտեցումները

Մարդու արժանապատվության պաշտպանության երաշխավորման համար էական նշանակություն ունեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Դատարան) իրավական դիրքորոշումները և մեկնաբանությունները: Դրանք առավել արդիական են հատկապես սահմանադրաիրավական նոր կարգավորումների և եվրոպական միասնական իրավական չափորոշիչների սահմանման համատեքստում:

Այդ առումով, մարդու արժանապատվության վերաբերյալ Դատարանի դոկտրինալ մոտեցումները պայմանականորեն բաժանենք հետևյալ խմբերի.

1) Մարդու կյանքի իրավունքի որպես մարդու արժանապատվության կառուցվածքի հիմնական տարրի վերաբերյալ,

2) Խոշտանգումների և այլ բռնի գործողությունների արգելումը որպես մարդու արժանապատվության պաշտպանության տարրի վերաբերյալ,

3) Մարդու մասնավոր կյանքի, անձնական և ընտանեկան գաղտնիքի պահպանման որպես մարդու արժանապատվության ապահովման տարրի վերաբերյալ,

4) Անձի ազատության և անձնական անձեռնմխելիությունը որպես մարդու արժանապատվության հիմնական տարրի վերաբերյալ,

5) Քրեական դատավարությունում անձի տեղեկատվության իրավունքի պահպանումը որպես մարդու արժանապատվության պաշտպանության տարրի վերաբերյալ:

Դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադառնալով մարդու արժանապատվության կառուցվածքի, պաշտպանության ու ապահովման խնդիրներին վեր է հանել դոկտրինալ այն մոտեցումները, որոնք իրենց իրավակիրառական ու իրավաընկալման առումներով ինքնին դիտարկվում են և միաժամանակ հավակնում որպես եվրոպական միասնական իրավական չափորոշիչներ:

Այսպես, կյանքի իրավունքը, ըստ Դատարանի, արժեքների համակարգում մարդու այն հիմնարար իրավունքն է, առանց որի այլ իրավունքների և ազատությունների գոյությունը և իրացումը դառնում է իմաստազուրկ, ընդ որում՝ այդ իրավունքը միաժամանակ հանդիսանում է ժողովրդավարական հասարակության արժեքների պահպանման ու ապահովման երաշխիքը¹¹⁵:

Պետության պոզիտիվ պարտականությունն է պաշտպանել մարդու կյանքի իրավունքը իրավական արդյունավետ մեխանիզմների սահմանման և իրացման միջոցով¹¹⁶:

Այնուհետև, խոշտանգումների արգելումը որպես միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար սկզբունք, մի կողմից, կրում է պարտադիր կատարման բացարձակ պահանջի բնույթ¹¹⁷, իսկ մյուս կողմից, այդպիսի խոշտանգումների ու մարդու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի արգելումն ինքնին արդարացված է խոշտանգումների ենթարկված զոհի ցանկացած գործողության համար¹¹⁸:

Հետևաբար, խոշտանգումների արգելումը չի կարող պայմանավորված լինել որևէ բացառությամբ, անգամ արտակարգ իրավիճակների պայմաններում¹¹⁹ կամ ահաբեկչության¹²⁰ ժամանակ: Ավելին, կազմակերպված հանցավորության դեմ

¹¹⁵ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.06.2000թ. որոշումը *Իլիամը ընդդեմ Թուրքիայի* (<<Ilhan c. Turquie>>) գործով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.06.2000թ. որոշումը *Սալմանը ընդդեմ Թուրքիայի* (<<Ilhan c. Turquie>>) գործով:

¹¹⁶ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.10.2002թ. որոշումը *Մասատրիոն ընդդեմ Իտալիայի* (<<Masatromatteo c. Italie>>) գործով:

¹¹⁷ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 29.04.1997թ. որոշումը *Էյջ Էլ Ռենը ընդդեմ Ֆրանսիայի* (<<H.L.R. c. France>>) գործով:

¹¹⁸ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 06.04.2000թ. որոշումը *Լաբիտան ընդդեմ Իտալիայի* (<<Labita c. Italie>>) գործով:

¹¹⁹ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 18.01.1978թ. որոշումը <<Իռլանդիան ընդդեմ Միացյալ Թագավորության >> (<<Irlande c. Royaume-Uni>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 25.04.1978թ. որոշումը <<Թայրերն ընդդեմ Միացյալ Թագավորության>> (<<Tyner c. Royaume-Uni>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 04.12.1995թ. որոշումը <<Ռիբիչն ընդդեմ Ավստրիայի>> (<<Ribitsch c. Autriche>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 17.12.1996թ. որոշումը <<Ահմեդն ընդդեմ Ավստրիայի>> (<<Ahmed c. Autriche>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 03.02.2007թ. որոշումը <<Հուրտադոն ընդդեմ Իտալիայի>> (<<Hurtado c. Italie>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 30.02.1998թ. որոշումը <<Ավիս Էնթերփրայզիսն ընդդեմ Հունաստանի>> (<<Avis Enterprises c. Grece>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.08.1992թ. որոշումը <<Թոմասին ընդդեմ Ֆրանսիայի>> (<<Tomas c. France>>) գործով:

¹²⁰ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 18.12.1996թ. որոշումը <<Ակսոյն ընդդեմ Թուրքիայի >> (<<Aksoy c. Turquie>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 25.09.1997թ. որոշումը <<Այդինն ընդդեմ Թուրքիայի>> (<<Aydin c. Turquie>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.04.1998թ. որոշումը <<Սելզուկն ու Ասկերն ընդդեմ Թուրքիայի>> (<<Selvuk et Asker c. Turquie>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 11.07.2000թ. որոշումը <<Դիկմեն ընդդեմ Թուրքիայի>> (<<Dikme

պայքարի շրջանակներում պետական իշխանության մարմիններն իրավունք չունեն կիրառել խոշտանգումներ և անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող ցանկացած վերաբերմունք¹²¹:

Մարդու արժանապատվությունը նսեմացնող ցանկացած գործողություն կարող է ճանաչվել որպես խոշտանգում նույնիսկ նվազագույն դաժանության դրսևորման պարագայում: Այդպիսի դաժանության գնահատականը կարող է կրել հարաբերական բնույթ՝ կախված այն հանգամանքից, որ խոշտանգում որակված գործողությունը պայմանավորված է զոհի ֆիզիկական կամ հոգեբանական վիճակի, սեռի, տարիքի և այլ հանգամանքներից¹²²:

Որպես խոշտանգում կարող է որակվել ոչ միայն ֆիզիկական, այլև հոգեբանական բռնությունը: Բնականաբար, չպետք է բացառել խոշտանգման կիրառման սպառնալիքի առկայությունը, որն ինքնին ևս ընկալվում է որպես իրական խոշտանգում¹²³:

Էական է նաև այն մոտեցումը, որ պետությունը պարտավոր է բացատրություններ տալ կալանքի տակ գտնվող անձի վնասվածքների կամ այլ մարմնական վնասվածքների առաջացման համար, եթե մինչև կալանավորումը տվյալ անձը մարմնական վնասվածքներ չի ունեցել, հակառակ պարագայում այն ընկալվում որպես խոշտանգումների կիրառման փաստ¹²⁴:

Իսկ կալանավորվածներին ազատագրկման վայրերում պահելն ինքնին նրանց արժանապատվությանը պատճառում է տառապանքներ: Այսպես, ըստ Դատարանի՝ պաշտոնատար անձանց կանխամտածված այն գործողությունները, որոնք հանգեցնում են մարդու արժանապատվությանը նվաստացնող վերաբերմունք, պայմանավորված են զոհի մոտ վախի, ճնշվածության և ոչ լիարժեքության, վիրավորանքի և ստորացման

c. Turquie>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.10.1998թ. որոշումը <<Ասսենովը և ուրիշները ընդդեմ Բուլղարիայի>> (<<Assenov et autres c. Bulgarie>>) գործով:

¹²¹ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.07.1999թ. որոշումը <<Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի>> (<<Selmouni c. France>>) գործով:

¹²² Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 28.07.1999թ. որոշումը <<Սելմունին ընդդեմ Ֆրանսիայի>> (<<Selmouni c. France>>) գործով:

¹²³ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 06.06.2000թ. որոշումը <<Մեգին ընդդեմ Միացյալ Թագավորության>> (<<Magee c. Royaume-Uni>>) գործով:

¹²⁴ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 06.04.2000թ. որոշումը <<Լաբիտան ընդդեմ Իտալիայի>> (<<Labita c. Italie>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 11.07.2000թ. որոշումը <<Դիկմեն ընդդեմ Թուրքիայի>> (<<Dikme c. Turquie>>) գործով:

զգացում առաջացնելու հնարավորությամբ¹²⁵: Նույնիսկ, բավական է այն, որ զոհն ապրել է ստորացումներ ինքն իր սեփական աչքի առաջ, անգամ, եթե նա չի ստորացվել մեկ ուրիշի աչքի առաջ¹²⁶:

Մարդու մասնավոր կյանքի, անձնական և ընտանեկան գաղտնիքի պահպանման որպես մարդու արժանապատվության ապահովման տարրի վերաբերյալ Դատարանի իրավական դիրքորոշումները կառուցված են Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրված Մարդու մասնավոր կյանքի, անձնական և ընտանեկան գաղտնիքի իրավունքի իրացման ու սահմանափակման հիմքերի վրա:

Այսպես, ըստ Դատարանի, հանցագործության քննության շրջանակներում անհրաժեշտ տեղեկատվության պարզման նպատակներով իրականացվող գործողությունները պետք է սահմանափակված լինեն օրինականության սահմաններում՝ հաշվի առնելով հետապնդվող նպատակի իրավաչափությունը և դրա հստակության բավարար աստիճանի առկայությունը, որպեսզի չխախտվի պետական մարմինների օրինական գործողությունների, հայեցողության և մարդու մասնավոր կյանքին նրանց կամայական միջամտության սահմանները¹²⁷:

Կամ, օպերատիվ-հետախուզական մարմինների գործունեությունը կարող է իրականացվել միայն օրենքի հիման վրա և օրենքին համապատասխան և պետք է վերահսկվի նրանց գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորություններով օժտված մարմինների կողմից: Ըստ Դատարանի, վերահսկիչ գործառույթները պետք է ենթարկվեն օրինականության և իրավունքի գերակայության

¹²⁵ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 29.04.2002թ. որոշումը <<Փրիթթին ընդդեմ Միացյալ Թագավորության>> (<<Pretty c. Royaume-Uni>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 26.10.2000թ. որոշումը <<Կուդլան ընդդեմ Լեհաստանի>> (<<Kudla c. Pologne>>) գործով:

¹²⁶ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 16.12.1997թ. որոշումը <<Ռանինյենն ընդդեմ Ֆինլանդիայի>> (<<Raninen c. Finlande>>) գործով:

¹²⁷ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 26.04.1985թ. որոշումը <<Մալոուն ընդդեմ Միացյալ Թագավորության (հոդված 50)>> (<<Malone c. Royaume-Uni (Article 50)>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.04.1990թ. որոշումը <<Կռուսլին ընդդեմ Ֆրանսիայի>> (<<Kruslin c. France>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 14.09.1987թ. որոշումը <<Հուվին ընդդեմ Ֆրանսիայի>> (<<Huvig c. France>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 14.09.1987թ. որոշումը <<Գիլլուն ընդդեմ Միացյալ Թագավորության (հոդված 50)>> (<<Gillow c. Royaume-Uni (Article 50)>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 26.03.1987թ. որոշումը <<Լինդեռն ընդդեմ Շվեդիայի >> (<<Leander c. Suede>>) գործով:

սկզբունքներին, իսկ դատական վերահսկողությունը պայմանավորված լինի առավել արդյունավետ, անկախության և անաչառության երաշխիքներով¹²⁸:

Հեռախոսային խոսակցությունների գաղտնալսումը, ձայնագրումը և փոխանցումը կապված են մարդու մասնավոր կյանքի, նրա արժանապատվության, անձնական և ընտանեկան գաղտնիքի միջամտության հետ: Այդ առումով Դատարանը արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ օրենքը պետք է հստակ կանոնակարգի նման օպերատիվ միջոցառումների անցկացման կանոնները և նախատեսի մարդու անձնական կյանքի ոլորտը կամայական միջամտությունից պաշտպանության միջոցներ¹²⁹:

Անձի ազատության և անձնական անձեռնմխելիությունը որպես մարդու արժանապատվության հիմնական տարրի վերաբերյալ Դատարանը սահմանել է օրինականության և իրավաչափության սկզբունքներին համապատասխանող ազատագրկման և ազատության սահմանափակման հիմքերի սպառիչ ցանկը, որը ներառում է.

ա) իրավասու դատարանի կողմից դատապարտված անձին օրինական կալանքի տակ պահելը,

բ) անձին օրինական բերման ենթարկելը կամ կալանավորելը օրենքին համապատասխան ուժի մեջ մտած դատարանի որոշումը չկատարելու համար,

գ) անձին օրինական բերման ենթարկելը օրենքում նշված ցանկացած պարտավորության կատարման ապահովման նպատակով.

դ) իրավախախտում կատարելու հիմնավոր կասկածանքով անձին բերման ենթարկելը և կալանավորելը իրավասու մարմին հասցնելու նպատակով,

ե) անձին օրինական կարգով բերման ենթարկելը, երբ բավարար հիմքեր կան կասկածել իր կողմից իրավախախտում կատարելու մեջ կամ խանգարել նրան թաքնվել այն կատարելուց հետո,

¹²⁸ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 04.05.2000թ. որոշումը <<Ռոտարուն ընդդեմ Ռումինիայի>> (<<Rotaru c. Roumanie>>) գործով:

¹²⁹ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.04.1990թ. որոշումը <<Կռուսլին Ֆրանսիայի>> (<<Kruslin c. France>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.04.1990թ. որոշումը <<Յուվին ընդդեմ Ֆրանսիայի>> (<<Huvig c. France>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 06.09.1978թ. որոշումը <<Կլասս և ուրիշները Պերմանիայի>> (<<Klass et autres c. Allemagne>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 26.04.1985թ. որոշումը <<Մալուն ընդդեմ Միացյալ Թագավորության (հոդված 50)>> (<<Malone c. Royaume-Uni (Article 50)>>) գործով:

է) օրինական որոշման հիման վրա անչափահասին կալանավորումը դաստիարակչական վերահսկման համար, կամ նրա կալանավորումը կապված իրավասու մարմին ներկայանալու հետ,

ը) անձանց օրինական կալանավորումը վարակիչ հիվանդությունների տարածումը կանխարգելելու նպատակով, հոգեկան հիվանդների, հարբեցողների, թմրամոլների կամ թափառաշրջիկների օրինական կալանավորումը, անձին օրինական բերման ենթարկելը կամ կալանավորելը՝ նրա անօրինական կարգով մուտքը երկիր կանխարգելելու նպատակով կամ անձին օրինական կալանավորումը, որի դեմ կիրառվում են նրան արտաքսելու կամ հանձնելու միջոցներ¹³⁰:

Պետական իշխանության մարմինների կամայականություններից զերծ պահելու մարդու արժանապատվության պաշտպանության կարևորագույն երաշխիքը, ըստ Դատարանի.

1) դա այն պահանջի ամրագրումն է, ըստ որի՝ ազատագրվումը պետք է իրականացվի անկախ դատական վերահսկողության ներքո և ուղեկցվի այդ մարմինների ոչ իրավաչափ գործողությունների համար պատասխանատվության ամրագրմամբ,

2) անձին կալանավորման գործընթացը պետք է իրականացվի մրցակցության սկզբունքի հիման վրա և երաշխավորի կողմերի իրավահավասարությունը, այդ թվում՝ փաստաբանի կողմից քննության նյութերի նկատմամբ հասանելիության ապահովումը,

3) անձի ազատության սահմանափակումը չպետք է գերազանցի դատարանի կողմից սահմանված ժամկետը, իսկ կասկածյալի անազատության մեջ գտնվելու ժամանակը ևս ներառվում է կալանքի տակ պահելու ժամկետի մեջ¹³¹,

4) անձին անօրինական բերման ենթարկելու համար պատասխանատվությունը կրում են պետական մարմինները,

5) հանցագործություն կատարելու մեջ կասկածանքով բերման ենթարկված անձին մեղադրանք չառաջադրելը և քրեական գործը հետագայում դատարան չուղարկելը չի

¹³⁰ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 25.05.1997թ. որոշումը <<Էրիկսենն ընդդեմ Նորվեգիայի>> (<<Ericssen c. Norvege>>) գործով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 01.07.1997թ. որոշումը <<Ջիուլիան Մանզոնին ընդդեմ Իտալիայի>> (<<Giulia Manzoni c. Italie>>) գործով:

¹³¹ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 27.11.1997թ. որոշումը <<Կ.-Ֆ.ն ընդդեմ Գերմանիայի>> (<<K.-F. c. Allemagne>>) գործով:

նշանակում, որ կասկածյալի ազատության սահմանափակումը նշանակել է ազատության և անձնական անձեռնմխելիության խախտում: Քննչական մարմինները պարտավոր չեն ունենալ կալանավորման կամ բերման ենթարկելու պահին մեղադրանք առաջադրելու համար բավարար ապացույցներ:

6) ցանկացած ազատագրվում կամ ազատության սահմանափակում պետք է լինի օրինական, իսկ ցանկացած բերման ենթարկված կամ կալանավորված անձ պետք է կանգնի դատարանի առջև՝ նրա ազատագրվման հարցը քննելու և ըստ էության որոշում կայացվելու համար¹³²:

Քրեական դատավարությունում անձի տեղեկատվության իրավունքի պահպանումը որպես մարդու արժանապատվության պաշտպանության տարրի վերաբերյալ Դատարանն արտահայտել է հետևյալ իրավական մոտեցումները.

ա) բերման ենթարկվող կամ կալանավորվող յուրաքանչյուր անձ իրավունք ունի այդպիսի գործողությունների հիմքերի մասին տեղեկանալու և առարկություն ներկայացնելու հնարավորության իրավունք¹³³,

բ) կասկածյալի (մեղադրյալի) լռությունը դատավարության ընթացքում ցուցմունք տալուց հրաժարվելու հետևանքով չպետք է սխալ մեկնաբանվի պաշտոնատար անձանց կողմից և հանգեցնի հարցաքննվողի համար բացասական հետևանքների, ի վերջո անհրաժեշտ է հաշվի առնել, որ կասկածյալի (մեղադրյալի) լռությունը կարող է դիտարկվել որպես փաստաբանի խորհուրդների իրականացում,

գ) բերման ենթարկելու պահից կասկածյալին պետք է ընձեռնվի իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն: Դատաքննության արդարության սկզբունքը կայանում է կասկածյալի (մեղադրյալի) դատավարության սկզբնական փուլերում փաստաբանական օգնության իրավունքի իրացման մեջ, իսկ պաշտոնատար անձանց՝ այդ իրավունքի իրականացման մերժումը բերման ենթարկելուց հետո առաջին 48 ժամվա ընթացքում պետք է դիտարկվի որպես բերման ենթարկվածի արդար դատաքննության իրավունքի խախտում և այլն:

¹³² Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 24.11.1994թ. որոշումը <<Կեմաշն ընդդեմ Ֆրանսիայի N° 3>> (<<Kemmache c. France (N° 3)>>):

¹³³ Տես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 14.11.1960թ. որոշումը <<Լոուլեսսն ընդդեմ Իռլանդիայի (N° 1)>> (<<Lawless c. Irlande (N° 1)>>):

Այսպիսով, մարդու արժանապատվության պաշտպանության, ապահովման և պահպանման վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից արտահայտած դոկտրինալ մոտեցումների կառուցվածքահամակարգային վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մարդու արժանապատվության արժեքային բովանդակությունն արտացոլող և որպես մարդու արժանապատվության ապահովման, պահպանման և պաշտպանության երաշխիքներ ծառայող հիմնարար միջազգային իրավական դրույթների համախմբությունը:

Մարդու արժանապատվության ճանաչմանը և պաշտպանությանը վերաբերող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայում արտահայտված իրավական դիրքորոշումները Հայաստանի Հանրապետության համար պետք է դիտարկվեն որպես արժեքային համակարգի պաշտպանության իրականացման որոշակի իրավական հիմքեր:

**ԳԼՈՒԽ 3.: ԱՆՁԻ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

3.1. Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական առանձնահատկությունները և զարգացումները սահմանադրական բարեփոխումների համատեքստում

Համակարգային ամբողջականության մեջ վերլուծելով Հայաստանի Հանրապետությունում անձի արժանապատվության սահմանադրական զարգացումների պատմական ընթացքը գտնում ենք, որ հայեցակարգային մոտեցումների տեսանկյունից անհրաժեշտ է առանձնացնել զարգացումների հետևյալ հիմնական փուլերը.

1. Առաջին փուլը ընդգրկում է 1995-2005 թվականները: 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն էական դեր ունեցավ Հայաստանում ժողովրդավարության հաստատման, իրավական պետության հիմքերի ամրապնդման, պետական իշխանության ինստիտուտների աստիճանական կայացման, մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրական երաշխիքներ ապահովելու գործում:

Այս փուլում սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը պայմանավորված էր հետևյալ հիմնախնդիրների առկայությամբ.

1) Հայաստանի Հանրապետության միջազգային ինտեգրման գործընթացները վկայեցին, որ անհրաժեշտ էր առավել խորությամբ հաշվի առնել այն հիմնարար արժեքները, որոնք, հատկապես մարդու իրավունքների բնագավառում, դրվում էին եվրոպական երկրների ներպետական ու միջպետական իրավահարաբերությունների հիմքում:

2) Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1995 թվականին ընդունված Սահմանադրության մեջ բացակայում էր հստակ վերաբերմունքը մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն արժեքի, սահմանադրորեն ճանաչման ու

ամրագրման նկատմամբ, մարդու արժանապատվությունն ամրագրված էր ոչ թե որպես սահմանադրական իրավունքի, այլ որպես քրեաիրավական հարաբերությունների շրջանակներում պաշտպանության առարկա և չէր հաղթահարված նախկին խորհրդային իրավական համակարգին բնորոշ մոտեցումն այս հարցում:

Սահմանադրական փոփոխությունների գլխավոր ուղղություն դիտվեց մարդու հիմնական իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության սահմանադրական երաշխիքների ամրապնդումը, այդ իրավունքների հնարավոր սահմանափակման շրջանակների հստակեցումը՝ ելնելով միջազգային իրավունքի, մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթներից:

2. Երկրորդ փուլը ընդգրկում է 2005 թվականից հետո ընկած ժամականահատվածը: Հայաստանի Հանրապետությունում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքում կատարված սահմանադրական փոփոխությունները համակարգային լուծումների առումով վերոնշյալ հարցերում առաջընթաց գրանցելով հանդերձ, բովանդակեցին նաև մի շարք հիմնախնդիրներ, որոնք ներկայումս հաղթահարելու և համակարգային մոտեցումներն ամբողջականացնելու անհրաժեշտություն ունեն:

2 թվականի սահմանադրական փոփոխությունները, մասնավորապես, անրաժեշտ սահմանադրական նախադրյալներ չստեղծեցին իրավունքի գերակայության սկզբունքի առավել հետևողական իրացման և այս հարցում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների արդյունավետ կատարումը երաշխավորելու առումով: Սահմանադրությամբ ամրագրված է հետևյալ դրույթը՝ համաձայն որի պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք, նշված դրույթը մնաց որպես բարի ցանկություն, քանի որ համակարգային առումով դրա իրացման անհրաժեշտ սահմանադրական նախադրյալներ չամրագրվեցին: Հայաստանի Հանրապետության համար առանցքային խնդիր շարունակեց մնալ պետաիշխանական լիազորություններով օժտված

մարմինների սահմանադրական գործառույթների ու իրավասության ներդաշնակումը, դրանց հայեցողության սահմանների հստակեցումը, իրավունքով իշխանության սահմանափակման իրական նախադրյալների ստեղծումը:

Անձի արժանապատվության անմիջական պաշտպանությունը հատկապես կարևորվում է անձի՝ պետության հետ իրավահարաբերությունների շրջանակներում, քանի որ տվյալ հարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված, առավելապես մեծանում է այդ մարմինների կողմից արժանապատվության խախտման ռիսկը, հետևաբար արժանապատվության անմիջական պաշտպանության անհրաժեշտությունը ոչ միայն պետք է գիտակցված լինի պետական մարմինների կողմից՝ որպես իրավական մշակույթից բխող պահանջ, այլև պետք է օրենքով նախատեսված լինի որպես հայեցողական լիազորությունները սահմանափակող արժեք:

Նշված խնդիրների վերաբերյալ հայեցակարգային մոտեցումները, կոնկրետ իրավիճակի գնահատումից ելնելով, հստակեցված են «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ»-ում¹³⁴:

3. Երրորդ փուլը ընդգրկում է 2014-2015 թվականները: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի սեպտեմբերի 4-ի հրամանագրով ձևավորվել է սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը, որի կողմից մշակվել է «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգը»: Ելնելով իրավունքի գերակայության սկզբունքի իրացման, մարդու հիմնական իրավունքների և ազատությունների երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը կատարելագործելու, իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու անհրաժեշտությունից:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հիմքում դրված են հետևյալ հիմնարար սկզբունքները, որոնց համաձայն՝

1. մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները պետության կողմից ճանաչվելով որպես բարձրագույն արժեք՝ պետք

¹³⁴ Տես՝ <<Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ>> Երևան, 2014թ. էջ 27:

է պայմանավորեն իրավունքի գերակայության սկզբունքի անշեղ իրացումը և երաշխավորեն իրավունքով իշխանության սահմանափակումը:

2. Սահմանադրական նորմերը ոչ միայն պետք է հռչակեն մարդու սահմանադրական իրավունքը, այլև առավելագույնս հստակ սահմանեն դրանց իրացման երաշխիքները, պետության պարտավորությունները, առանձին իրավունքների սահմանափակման թույլատրելի շրջանակները: Մարդու իրավունքները պետք է դիտարկվեն որպես իրագործելի իրավունքներ, իսկ դրանց սահմանափակումները պետք է բխեն միջազգային իրավունքի նորմերից, լինեն համաչափ, չաղավաղեն իրավունքի բովանդակությունն ու իմաստը, հստակ սահմանվեն օրենքով, զուգակցվեն հանրային իշխանության համարժեք պարտականություններով:

ՀՀ Սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային մոտեցումները.

Նշենք նաև, որ հայեցակարգային մոտեցումն այն է, որ իշխանությունն իրականացնելիս ժողովուրդը և պետությունը պետք է սահմանափակված լինեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով: Էականն այն է, թե որոնք են այդ սահմանափակման իրավաչափ սահմանները, ինչպես են դրանք իրավական օրենքներով որոշակիություն ստանում՝ իրավական համակարգի ու իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականացման ճանապարհով երաշխավորելով սահմանադրականությունը:

Այնուամենայնիվ, Սահմանադրությունն անհրաժեշտ ու բավարար սահմանադրաիրավական երաշխիքներ պետք է նախատեսի իրավունքների անմիջական գործողությունն ապահովելու համար: Վերջինս պետք է հանդիսանա Սահմանադրության գերակայության երաշխավորման հիմնական չափանիշը: Կոնկրետ սահմանադրական լուծումները կոչված են ստեղծելու այն միջավայրը, որն անհրաժեշտ է նախ՝ իրավունքի գերակայությունը մարդու և քաղաքացու սոցիալական արժևորման միջուկը, նրա ինքնադրսևորման ու ինքնաիրացման արժեքանական հենքը դարձնելու համար, երկրորդ՝ իշխանության հանրային-իրավական վարքագիծն իրավունքի գերակայության սկզբունքին ներդաշնակելու համար: Իրավունքի գերակայությունը, հանդիսանալով իրավական պետության էությունը, ենթադրում է, որ.

- մարդու իրավունքները սահմանադրորեն ճանաչված, օրենսդրորեն երաշխավորված, համարժեք կառուցակարգային լուծումներով ապահովված ու պաշտպանված պետք է լինեն,

- պետք է հարգվի ու երաշխավորվի իրավական օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը,

- օրենքները և այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքին, լինեն կանխատեսելի, հստակ, զերծ՝ բացերից ու երկիմաստություններից,

- իշխանության իրականացումը պետք է խարսխված լինի գործառույթների և լիազորությունների ներդաշնակումը երաշխավորելու վրա,

- հանրային իշխանության իրականացման հիմքում պետք է ընկած լինի օրինականության սկզբունքը,

- պետք է երաշխավորվի կամայականության արգելքի սկզբունքը և հստակեցված լինեն հանրային իշխանության մարմինների հայեցողության սահմանները,

- պետությունը պետք է պոզիտիվ պարտականություն կրի իրավունքների երաշխավորման, ապահովման ու պաշտպանության հարցում և ստանձնի համարժեք հանրային-իրավական պատասխանատվություն,

- իրավունքներին ցանկացած միջամտություն և իշխանության ցանկացած գործողություն պետք է բխեն համաչափության սկզբունքից,

- իրավական վեճերը պետք է ունենան բացառապես իրավական ճանապարհով արդյունավետ լուծման անհրաժեշտ կառուցակարգեր,

- արդարադատությունը պետք է լինի անկախ ու անկողմնակալ¹³⁵:

Իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորումը ենթադրում է փոխապայմանավորված ու փոխլրացնող այս բոլոր իրավապայմանների միաժամանակյա առկայություն, դրանց համար անհրաժեշտ սահմանադրական երաշխիքների ապահովում:

¹³⁵ Տես՝ ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, մշակվել է ՀՀ նախագահին առընթեր ահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան. 2014թ.

Նշված մոտեցումները բխում են իրավունքի գերակայության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1594(2007) բանաձևի, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2008 թվականի նոյեմբերի 21-ի CM(2008)170 հանձնարարականի, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 4-ի CDL-AD(2011)003rev. զեկույցում ներկայացված դիրքորոշումների և ՄԱԿ-ի՝ 2012 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված «Իրավունքի գերակայության մասին» բանաձևի դրույթներից: Հաշվի են առնվում նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Միացյալ Թագավորության նախագահության շրջանակներում անցկացված «Իրավունքի գերակայությունը որպես գործնական հայեցակարգ» /Լոնդոն, 2012 թվականի մարտի 2/ և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում Հայաստանի Հանրապետության նախագահության շրջանակներում անցկացված «Իրավունքի գերակայության եվրոպական չափորոշիչները և ազգային իշխանությունների հայեցողության սահմանները» /Երևան, 2013 թվականի հուլիսի 3-4/ խորհրդաժողովներում քննարկումների արդյունքները: Բոլոր այս մոտեցումները համակարգային զարգացում են ստացել վերջին տարիներին եւ համարժեք պահանջներ են առաջադրում Եվրախորհրդի անդամ երկրների սահմանադրական զարգացումներին:

Հաշվի առնելով վերոշարադրյալը և նկատի ունենալով, որ Եվրոպայի խորհրդի՝ 1949 թվականի մայիսի 5-ին Լոնդոնում ստորագրված կանոնադրության 3-րդ հոդվածում միանշանակ սահմանված է, որ Եվրոպայի խորհրդի յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի իրավունքի գերակայության սկզբունքը, եվրոպական իրավական համակարգում վերջինիս իրացման հիմնական չափորոշիչները հանգամանորեն շարադրված են Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի 04.04.2011 թվականի վերոնշյալ CDL-AD(2011)003rev. «Իրավունքի գերակայության մասին» զեկույցում: Այն ելակետային նշանակություն կունենա նաև հանձնաժողովի կողմից սահմանադրական կոնկրետ լուծումների վերաբերյալ մոտեցումներ առաջադրելիս:

2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքում Սահմանադրության 2-րդ գլխում կատարված բովանդակային և կառուցվածքային փոփոխությունները, հիմնական իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ

սահմանադրաիրավական հիմք էին հանդիսանում: Միննույն ժամանակ, հիմնական իրավունքների բնագավառում սահմանադրական փոփոխություններն իրականացվեցին իրավունքների ու ազատությունների չտարբերակված ամրագրման տրամաբանության շրջանակներում: Դրա հետևանքով սկզբունքային լուծումներ չտրվեցին իրավունքների անմիջական գործողության երաշխավորման հիմնախնդրին, քանի որ հստակ չտարանջատվեցին ու չամրագրվեցին անմջականորեն գործող իրավունքները, ինչպես նաև դրանց պաշտպանության առանձնահատկությունները: ՀՀ Սահմանադրությամբ ամրագրվեց դրույթ համաձայն որի մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես ամնիջականորեն գործող իրավունք: Ինչպես նկատում ենք, 3-րդ հոդվածը, թերևս, ճանաչում է արժանապատվությունը որպես բարձրագույն արժեք՝ ի թիվս հիմնական իրավունքների և ազատությունների, այդուհանդերձ, հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում խոսվում է միայն հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության և անմիջական գործողության մասին: Սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված նման հայեցակարգային մոտեցումը կասկածի տակ է դնում հետագայում Սահմանադրության ողջ տեքստում արժանապատվության ուղղակի իրավական պաշտպանության հնարավորությունը, ինչպես նաև արժանապատվության ուղղակի խախտման դեպքերում հենց արժանապատվության վերականգման համար կառուցակարգերի մշակման պետության պարտավորությունը: Նշենք նաև արժանապատվության վերաբերյալ մեկ այլ հիմնարար սահմանադրաիրավական դրույթ՝ ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածը, արժանապատվության ապահովման և պահպանման պետության պարտականությունն ուղղակիորեն դիտարկում է այնքանով, որքանով արժանապատվությունը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների և ազատությունների հիմք, ամրագրելով, որ մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է

պետության կողմից: Այսպիսով, հիմնական իրավունքների բնագավառում սահմանադրական փոփոխություններն իրականացվեցին իրավունքների ու ազատությունների չտարբերակված ամրագրման տրամաբանության շրջանակներում: Հիմնական իրավունքների ցանկի մի շարք հոդվածներում սահմանված են ինչպես ընդհանուր, այնպես էլ հատուկ սահմանափակումներ, ինչն առաջացնում է տարակարծիք մեկնաբանություններ դրանց ծավալի և բովանդակության վերաբերյալ: Խնդրահարույց է նաև այն, որ որոշ հիմնական իրավունքների համար չեն սահմանվել սահմանափակման հնարավորություններ, թեև դրանց անհրաժեշտությունն ակնհայտ է: Չնայած սահմանադրական այն դրույթի առկայությանը, համաձայն որի՝ հիմնական իրավունքների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները, այդուհանդերձ, գործող Սահմանադրությունը բավարար չափով չի հստակեցրել իրավունքների սահմանափակումներին ներկայացվող պահանջները, ինչն էլ խնդրահարույց է հիմնական իրավունքների իրացման ու պաշտպանության տեսանկյունից: Գործող Սահմանադրության 47-րդ հոդվածի 1-ին մասով յուրաքանչյուր անձի վրա դրված պարտականությունը՝ հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը, հնարավորություն է տալիս անմիջապես, Սահմանադրության ուժով, հիմնական իրավունքների գործողությունը տարածել մասնավոր անձանց միջև հարաբերությունների վրա, ինչը հակասում է հիմնական իրավունքների ավանդական պատկերացումներին: Արժանապատվության ուղղակի հարգման պարտավորություն պետությունն իր համար սահմանում է միայն սահմանադրության 17-րդ հոդվածի շրջանակներում որը, չնայած վերաբերում է արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքներին, այդուհանդերձ, որևէ վկայակոչում արժանապատվության՝ որպես ինքնուրույն արժեքի, այն չի պարունակում: Գտնում ենք, որ արժանապատվության հայեցակարգի նորմատիվային շարադրանքը ՀՀ Սահմանադրության տեքստում որոշակի շտկումների կարիք ունի, քանի որ այն սահմանափակում է արժանապատվության սահմանադրաիրավական կարգավիճակը: Հայրենական իրավական համակարգում առա է նաև հիմնախնդիր արժանապատվության սահմանադրական կարգավիճակ

արժանապատվության բովանդակություն հարաբերակցության հարթությունում: ՀՀ իրավական համակարգում անձի արժանապատվության՝ բոլոր իրավունքների հիմքը լինելու սահմանադրաիրավական կարգավիճակի ճանաչման փաստից կարելի է նաև ենթադրել, որ ՀՀ-ում ճանաչվում է արժանապատվության պատմափիլիսոփայական համատեքստում ձևավորված բովանդակությունը, սակայն, հակառակ նման սպասումների, մասնագիտական գրականության մեջ հանդիպում ենք այնպիսի իրավիճակի, երբ արժանապատվությունը մեկնաբանվում է, որպես սուբեկտիվ, սեփական անձի նկատմամբ մարդու ունեցած վերաբերմունք¹³⁶: Որոշակի մեկնաբանությունների արդյունքում այն նույնանում է պատվի և/կամ հեղինակության հետ /ավելի մանրամասն վերլուծվել է 1-ին գլխի 1.2-րդ պարագրաֆում/:

Վերոհիշյալ հիմնախնդիրների լուծումը, հաշվի առնելով միջազգային փորձը և սահմանադրական զարգացումների արդի միտումները, պահանջում է **հայեցակարգային նոր մոտեցումներ**: Դրանք ընդհանուր ձևով հանգում են հետևյալներին.

իրավունքների, ազատությունների և պարտականությունների բովանդակային, կառուցվածքային և խմբագրական հստակեցումներ,

ընդհանուր և հատուկ սահմանափակումների ծավալի, բովանդակության, հարաբերակցության, ամրագրման եղանակի, մոտեցման համակարգային ամբողջականության երաշխավորում,

իրավունքների և ազատությունների սահմանափակումների հստակեցում՝ դրանց դասակարգման միջազգային չափորոշիչներից ելնելով, մասնավորապես նկատի ունենալով՝

իրավունքի էության անձեռնմխելիության երաշխիքի ամրագրման անհրաժեշտությունը՝ բացառելու համար դրա արգելափակումը, համաչափության սկզբունքի հստակ ամրագրման անհրաժեշտությունը, միայն օրենքով ու թոշակիության սկզբունքին համապատասխան իրավունքի սահմանափակման թույլատրելիությունը¹³⁷:

¹³⁶ Տես՝ Առաքելյան Նելլի <<Անձի արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում>> Երևան, 2014թ. էջ 48:

¹³⁷ Տես՝ ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, մշակվել է ՀՀ նախագահին առընթեր ահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Երևան. 2014թ.

Հիմնական իրավունքների, ազատությունների և պարտականությունների բովանդակային ճշգրտումներից զատ, հիմնական իրավունքների ավելի հստակ մեկնաբանման տեսանկյունից անհրաժեշտ են այնպիսի կառուցվածքային հստակեցումներ, որոնք հիմնական իրավունքների դրույթների շարադրանքը և հերթականությունը կդարձնեն առավել համակարգված: Ընդ որում, կարևորագույն խնդիրներից մեկը, մի կողմից, դասական հիմնական իրավունքների, իսկ մյուս կողմից՝ սոցիալական հիմնական իրավունքների ու պետության նպատակների սահմանազատումն է: Նման սահմանազատումը հնարավորություն կտա առանձնացնել բոլոր այն հիմնական իրավունքները, որոնց վրա անմիջականորեն հենվելով անձը կկարողանա պաշտպանել իր սահմանադրական իրավունքները՝ ներառյալ սահմանադրական գանգատի միջոցով:

Ահրաժեշտ ենք համարում անրադառնալ «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) եզրակացությանը ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի վերաբերյալ:

Վենետիկի հանձնաժողովի կողմից նշվել է, որ բարեփոխումները նպատակ են հետապնդում ճանաչելու մարդու արժանապատվությունը որպես առանցքային արժեք, հստակ սահմանել հիմնարար իավունքների իրականացման համար երաշխիքները և թույլատրելի սահմանափակումները, իրավական պետության նախադրյալների ստեղծումը, հիմնել հավասարակշռված և կայուն ժողովրդավարական կառավարման համակարգ:

Այսպիսով, անձի արժանապատվության ներդաշնակ հայեցակարգ մշակելու համար անհրաժեշտ է հստակ տարբերակել արժանապատվության բովանդակությունը դրա հիման վրա ձևավորվող սահմանադրական կարգավիճակից, որը իր հերթին հանդես է գալիս լայն և նեղ առումներով: Առաջին դեպքում արժանապատվությանը հանդես է գալիս որպես միջնորդավորված կատեգորիա, երկրորդ դեպքում՝ որպես անմիջական պաշտպանության օբեկտ: Արժանապատվության նեղ սահմանադրաիրավական կարգավիճակի երաշխավորման համար անհրաժեշտ է ՀՀ Սահմանադրության տեքստում կատարել մի շարք փոփոխություններ, որոնք թույլ կտան երաշխավորել արժանապատվության ամնիջական գործողությունը:

Հայեցակարգային մոտեցումների և իրավական աղբյուրների համակարգային վերլուծության հիման վրա մեր կողմից տրվել է անձի արժանապատվության սահմանադրաիրավական հետևյալ ձևակերպումը, ըստ որի՝ այն իրենից ներկայացնում է անձի իրավական կարգավիճակի տարր կազմող հանրաճանաչ և բացառապես սահմանադրորեն պայմանավորված ու որոշակիացված սկզբունք, որի պաշտպանությունը օրենսդրական և ինստիտուցիոնալ գործիքների միջոցով երաշխավորվում է պետության կողմից՝ չբացառելով նաև դրա ինքնապաշտպանության ձևական իրականացման հնարավորությունը ցանկացած որևէ ոտնձգություններից:

3.2. Մարդու արժանապատվության ապահովման սահմանադրական երաշխիքները Հայաստանի Հանրապետությունում

Ժողովրդավարական հասարակությունում մարդու արժանապատվության գաղափարախոսությունը ինքնաբերաբար ներթափանցում է պետության ողջ իրավական համակարգ: Ընդ որում, դա պայմանավորված է մի կողմից, օրենսդրության համակարգում դրա անմիջական արտացոլման միջոցով, իսկ մյուս կողմից, պետական իշխանության համակարգի մարմինների գործունեության ուղղվածությամբ:

Այդ իմաստով ակներև է այն պահանջը, որ իրավական համակարգի յուրաքանչյուր ինստիտուտի համար մարդու արժանապատվության ապահովումը դիտարկվում է, որպես կանոն, առաջնային ու գերակա: Հետևաբար, մարդու արժանապատվությունը հանդես է գալիս մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների ու ազատությունների պաշտպանության արժեքային հենքը և միաժամանակ անհրաժեշտ պայմանը երաշխավորելու դրանց արդյունավետ իրացումը:

Մարդու արժանապատվության պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքները Սահմանադրությամբ ամրագրված այն ընդհանուր պայմաններն են ու հատուկ իրավաբանական միջոցներն են, որոնք փաստացի հնարավորություն են ընձեռում իրականացնել մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներն ու ազատությունները, երաշխավորել դրանց պաշտպանությունը և օրինական շահերի բավարարումը:

Սահմանադրական կարգավորումներում մարդու արժանապատվության վերաբերյալ որևէ դրույթ ինքնին դիտարկվում է այն առաջնայինը, որի հենքի վրա երաշխավորվում է սահմանադրական այլ պահանջների իրագործումը:

Այսպես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) 3-րդ հոդվածով հռչակված «մարդու արժանապատվությունը որպես բարձրագույն արժեք» հասկացության բովանդակությունից բխում է, որ այն վերացական չէ, քանի որ ունի որոշակի

իրավական բովանդակություն: Այն ենթադրում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում՝ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել, քան մարդու արժանապատվության ապահովման սահմանադրական երաշխավորվածությունն է: Ի վերջո, անժխտելի է ընդհանուր այն կանոնը, որ անհնար է տնօրինել մարդու արժանապատվությունը որպես Սահմանադրության արժեհամակարգի առանցք և մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների հիմք:

Պետության առաջնային պարտականությունը բոլոր մարդկանց իրենց արժանապատվության խախտումներից պաշտպանելն է, հետևաբար այդ արժանապատվության պաշտպանությունն ունի բացարձակ բնույթ և տարածվում է առանց բացառության կյանքի բոլոր բնագավառների վրա:

Արժանապատվությունը՝ որպես բարձրագույն արժեք, մարդու անքակտելի հատկություն է, որը պատկանում է անձին, անկախ նրանից, թե ինչպես է ինքն ընկալվում և գնահատվում իր և իր շրջապատի կողմից:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) 3-րդ հոդվածի տրամաբանությունից և սահմանադրական իրավունքի տեսանկյունից հետևում է, որ մարդու արժանապատվությունը հարգելու, երաշխավորելու, պաշտպանելու կամ պահպանելու սկզբունքը պետության հանրային վարքագծի չափանիշն է անձի և նրա իրավական կարգավիճակի տարրերի նկատմամբ, որի իրավական ամրագրումն երաշխավորվում է սահմանադրական այլ կարգավորումներում:

Մարդու արժանապատվության ապահովման սահմանադրական երաշխիքները՝ որպես իրավական երաշխիքների տեսակ, օժտված են իրավաբանական երաշխիքների համար ընդհանուր բոլոր հատկանիշներով, որ.

ա) ամրագրված են իրավական նորմերում, ապահովված են պետական մարմինների նորմաստեղծ ու իրավակիրառ գործունեությամբ և ունեն իրավունքի համակարգում կանոնակարգված կիրառման եղանակ:

բ) դրանք դրսևորվում են իրենց օբյեկտիվ անհրաժեշտությամբ ու համընդհանրությամբ¹³⁸:

Հարկ է նկատել, որ ի տարբերություն մյուս իրավական երաշխիքների, մարդու արժանապատվության ապահովման սահմանադրական երաշխիքները համընդհանուր են և իրենց գործողության ոլորտում ներառում են մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրագործման բոլոր բնագավառները: Այդ իմաստով, սահմանադրական երաշխիքների փոխկապվածությունը իրավական այլ երաշխիքների հետ կարելի է ներկայացնել հետևյալ կերպ, որ դրանք միասեռ են, որոնց վրա «նստած» են իրավական մյուս բոլոր երաշխիքները¹³⁹:

Սակայն նման սխեման կլինի շատ պարզունակ և չի արտահայտի դիտարկվող երաշխիքների իրական նշանակությունն ու բազմազանությունը, եթե միաժամանակ հաշվի չառնվի նրանց գործառությային և ինստիտուցիոնալ նշանակությունը: Այդ իսկ պատճառով հնարավոր ենք համարում դասակարգել մարդու արժանապատվության սահմանադրական երաշխիքներն ըստ հետևյալ տեսակների.

ա) Սահմանադրական սկզբունք-երաշխիքներ, ինչպիսիք են, օրինակ, սեփականության ձևերի իրավահավասարությունը, քաղաքական բազմակարծությունը և այլն, ուղղված են առաջին հերթին՝ օրենսդրին, այնուհետև՝ իրավակիրառողին՝ վերջինիս գործունեության համար անհրաժեշտ կոնկրետ կառուցակարգերի ու գործողությունների իրականացման պայմանների, կարգի և ձևերի սահմանման միջոցով:

Սահմանադրական այդպիսի երաշխիքների առկայությունը թույլ է տալիս ինչպես հայեցակարգային մակարդակով, այնպես էլ օրենսդրական տեխնիկայի պահանջներին համապատասխան ստեղծել որակապես միասեռ օրենքներ, որոնք կհամապատասխանեն ժողովրդավարական հասարակության մեջ մարդու օրինական շահերի ու պահանջմունքների բավարարման պայմաններին: Այդպիսի երաշխիքները կատարում են յուրատեսակ կոմերտոնի դեր, որին պետք է համահունչ լինել իրավական համակարգը կազմող յուրաքանչյուր իրավական ակտ:

¹³⁸ Տես՝Калашников С.В. Система конституционных гарантий обеспечения прав и свобод граждан в условиях формирования в России гражданского общества. Государство и прав, 2002, с. 17-25.

¹³⁹ Տես՝ Ա.Երիցյան, Մարդու իրավունքների և դրանց պաշտպանության հիմնախնդիրները գլոբալիզացիայի դարաշրջանում, Երևան, 2007, էջ 53:

Այսպես, (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածում ամրագրված օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը հասցեագրված է իրավաստեղծ, իրավապահպան և իրավակիրառ գործունեության բոլոր մասնակիցներին:

բ) Ապահովիչ սահմանադրաիրավական երաշխիքներ, ինչպիսիք են, օրինակ, (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածով երաշխավորված ոչ միայն մարդու կյանքի բնածին իրավունքների անօտարելիությունը, այլև նրան կյանքից կամայականորեն զրկելը, մահապատժի չդատապարտելը կամ չենթարկելը: Նույնը վերաբերում է նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության կոնվենցիայով և դրան կից 6-րդ արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությաններին:

գ) Սահմանադրական խթանիչ երաշխիքներ, ինչպիսիք են, օրինակ, քաղաքացիների օգտակար գործունեության խթանում՝ ուղղված նրանց անձնական բարեկեցության բարձրացմանը, կամավոր սոցիալական ապահովագրմանը, սոցիալական ապահովման և բարեգործության հավելյալ տեսակների ստեղծմանը ((2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 44-րդ, 45-րդ, 48-րդ, 59-րդ, 60-րդ, 82-րդ, 83-րդ, 84-րդ, 85-րդ հոդվածները և այլն): Ընդ որում, իրենց գործառությանին նշանակությամբ սահմանադրական պահպանիչ երաշխիքներն ունեն նաև կանխարգելիչ նշանակություն և բովանդակում են քաղաքացիների իրավունքների ու ազատությունների պաշտպանությանն ուղղված պետական միջոցները: Այդպիսի միջոցներն երբեմն բազմանպատակ են, ունեն համալիր ներգործության բնույթ և այդ միջոցների համակարգում քաղաքացիների իրավունքների, ազատությունների պաշտպանությունը դիտարկվում է որպես իրավական ներազդման կամ ներգործության օբյեկտ այլ օբյեկտների նկատմամբ: Այսպես, օրինակ, մենաշնորհի դեմ ուղղված գործողությունները և բարեխիղճ մրցակցությամբ իրականացվող տնտեսական գործունեության իրականացումը նպատակ է հետապնդում պաշտպանել յուրաքանչյուր սպառողի իրավունքներն ու շահերը:

դ) Սահմանադրական պաշտպանիչ երաշխիքներ, որոնց առկայության անհրաժեշտությունը պայմանավորված է այն ժամանակ, երբ մարդու իրավունքները խախտվել են կամ գոյություն ունի նման սպառնալիք: Պաշտպանիչ երաշխիքները նույնպես կանխարգելիչ նշանակություն ունեն, սակայն դրա հետ միասին, ապահովում են պատճառած վնասի հատուցումն ու խախտված իրավունքի վերականգնումը:

Ընդ որում, հատուցման և խախտված իրավունքի վերականգնման երաշխիքների միջև կարելի է որոշակի նմանություն տեսնել, քանի որ երկու դեպքում էլ առկա է մարդուն զրկանքներ ու վնաս պատճառելու փաստը, ինչպես նաև դրա համարժեք հատուցման անհրաժեշտությունը, սակայն եթե առաջին դեպքում խոսքը պետության կողմից մարդուն պատկանող բարիքի թեկուզ հարկադիր, բայց իրավաչափ զրկման մասին է, ապա երկրորդ դեպքում մարդուն պատկանող բարիքի կորստի պատճառ են հանդիսանում պաշտոնատար կամ այլ անձանց ոչ իրավաչափ գործողությունները կամ անգործությունը: Մյուս կողմից, վերականգնիչ երաշխիքների իրագործումը, որպես կանոն, ընթանում է դատական կարգով և կարող է ներառել ոչ միայն տուժած քաղաքացու ուղղակի նյութական վնասների, այլև անուղղակի կարգի վնասների փոխհատուցում (պատվի, արժանապատվության, գործարար համբավի պաշտպանություն և այլն): Իսկ կանխարգելիչ երաշխիքների առանձնացումը որպես առանձին խումբ՝ պայմանավորված է քաղաքացիների իրավունքների և ազատությունների խախտմանը միտված շարունակական գործոնի գործողությամբ: Այդպիսի երաշխիքների անհրաժեշտությունն ու արժեքը կապված են ինչպես ոչ իրավաչափ գործողությունը դադարեցնելու (կանխելու) հնարավորությամբ, այնպես էլ ցանկությամբ թույլ չտալ, որպեսզի վնաս հասցվի (կամ այն մեծանա) այն մարդուն, ում իրավունքներն ու ազատությունները խախտվել է: Որպես կանխարգելիչ երաշխիքներ կարելի է, մասնավորապես, նշել յուրաքանչյուրի վարչական մարմինների կողմից իրեն առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդված:

Այսպիսով, մարդու արժանապատվության ապահովման սահմանադրական երաշխիքների համընդհանրությունը և դրանց գործողության ոլորտում մարդու և

քաղաքացու իրավունքների ու ազատությունների իրագործման որոշակիությունը կարելի է ներկայացնել սահմանադրական այս կամ այն նորմի գործառութային և ինստիտուցիոնալ նշանակության համատեքստում:

Հայաստանի Հանրապետությունում մարդու արժանապատվության ապահովման սահմանադրական երաշխիքների ամրագրումն ինքնաբերաբերաբար բերում է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխավորմանը, որը վերաբերելի է ՀՀ (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) Սահմանադրությամբ ամրագրված. ա) քաղաքացիական և քաղաքական իրավունքներին ու ազատություններին (հոդվ. 3-րդ, 8-րդ, 24-րդ, 26-րդ, 27-րդ, 32-րդ, 40-րդ, 41-րդ, 42-րդ, 44-րդ, 47-րդ, 48-րդ, 49-րդ, 51-րդ, 53-րդ, 61-րդ, 63-րդ, 64-րդ, 65-րդ, 66-րդ և այլն), բ) տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներին ու ազատություններին (հոդվ. 10-րդ, 15-րդ, 16-րդ, 36-րդ, 56-րդ, 57-րդ, 59-րդ, 82-րդ, 83-րդ, 84-րդ, 85-րդ, 86-րդ և այլն): Ակնհայտ է այն, որ հենց Սահմանադրությունն է հանդես գալիս որպես անձի պատվի, արժանապատվության և բարի համբավի մասին հասարակության արտահայտման ու խտացված պատկերացումների այն համակարգը, որը կոչված է միաժամանակ վերահսկելու և պաշտպանելու մարդու գույքային ու ոչ գույքային իրավունքներն ու շահերը¹⁴⁰:

ՀՀ Սահմանադրության հիշատակված հոդվածների միջոցով ամրագրվել են ոչ միայն մարդու արժանապատվության կարևորագույն երաշխիքները, այլև որոշակի աստիճանով կոնկրետացվում է այդ հասկացության հենց բովանդակությունը, ինչը հիմք է տալիս մարդու իրավունքների ու ազատությունների հետ փոխադարձ կապի մեջ տեսնելու պետության պարտականությունները դրանց երաշխավորման տեսանկյունից:

Այսպես, մարդու արժանապատվության իրավունքի ուղղակի երաշխավորումն ամրագրված է (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու

¹⁴⁰ Տես՝ Кузнецов Н.М. Содержание отношений по защите чести, достоинства и деловой репутации: Автореф. дис. ... канд. юрид. наук / РУДН. - М., 2009 էջ 69:

պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Առանձին սահմանադրական նորմեր բովանդակում են օժանդակող և կարգավորիչ երաշխիքներ սահմանող դրույթներ: Այսպես, (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածը սահմանում է, որ՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է, իսկ 26-րդ հոդվածը հռչակում է, որ՝ ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Մարմնական պատիժներն արգելվում են: Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ 2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրությամբ անփոփոխելի հոդվածների շարքը լրացվել է նաև 3-րդ հոդվածով, որը որպես սահմանադրական կարգավորումների առանցք է դիտարկում մարդուն և նրա արժանապատվությունը: Ինչպես 2005 թվականի ՀՀ Սահմանադրության, այնպես էլ 2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածում արտահայտված է այն գաղափարը, որ պետության գոյությունն ինքնանպատակ չէ, պետությունը հաստատվում է հանուն մարդու և ոչ թե հակառակը: Սահմանադրության 3-րդ հոդվածներում ամրագրված հիմնարար սկզբունքները Սահմանադրության արժեքանական կողմնորոշիչներն իրենց հետևողական իրացումն են գտել ողջ տեքստում:

Հիշատակված հոդվածների համադրված վերլուծությունից հետևում է, որ մարդու արժանապատվության ճանաչելը, հարգելը և պաշտպանելը պետության ուղղակի պարտականությունն է: Այս պարտականության իրագործումը ստեղծում է համարժեք երաշխիքներ և սահմանում դրանց իրացման իրավական կառուցակարգեր: Սահմանադրական իրավունքի տեսության համաձայն մարդու արժանապատվությունը որպես մարդու իրավունքների ու ազատությունների անմիջական գործող սկզբունք պետք է ճանաչվի ու պաշտպանվի պետական ու տեղական ինքնակառավարման

մարմինների և նրանց պաշտոնատար անձանց կողմից՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք որոշակիացվել են գործող օրենսդրությամբ, թե ոչ¹⁴¹:

Այնուամենայնիվ, սահմանադրաիրավական նորմերի համակարգային վերլուծության արդյունքում, կարծում ենք, որ մարդու արժանապատվության ապահովման սահմանադրաիրավական հիմնական երաշխիքներն են.

ա) պետությունն է երաշխավորում մարդու արժանապատվությունը որպես բարձրագույն արժեք (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրությամբ 3-րդ հոդված), որն առանցքային նշանակություն ունի սահմանադրական իրավակարգավորումների արժեքանության և մեթոդաբանության տեսանկյունից, իսկ վերջինիս էությունը հանգում է մարդու բնական իրավունքների ճանաչմանը՝ որպես բարձրագույն արժեք, որպես անմիջական գործող իրավունք և պոզիտիվ իրավունքի հիմք :

բ) պետության պարտականությունն է անձի արժանապատվության հարգման իրավունքի երաշխավորումը, այսինքն, մարդու արժանապատվության պաշտպանությունն ամրագրող երաշխիքները բովանդակում են որևէ հիմքով անհատի արժանապատվության նսեմացման սահմանադրաիրավական արգելքը (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրությամբ 26-րդ հոդված): Սահմանադրական այս նորմը դիտվում է որպես մարդու արժանապատվության և անձեռնմխելիության իրավունքների ապահովման կարևորագույն երաշխիք: Այն միջազգային իրավունքի այն հիմնարար սկզբունքներից է, որն ամրագրված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 5-րդ հոդվածում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 7-րդ հոդվածում, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածում, ինչպես նաև ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի ընդունած՝ Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի ենթարկվելուց բոլոր անձանց պաշտպանության մասին հռչակագրում ու Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ կոնվենցիայում:

¹⁴¹ Стен' Иванец Г.И., Калинин И.В., Червонюк В.И. Конституционное право России: энциклопедический словарь / Под общей ред. В.И. Червонюка. - М: 2002. Էջ 432:

Սահմանադրական արգելքն այն մասին, որ մարդուն չի կարելի առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի 4-րդ մաս), վնասել մարդու առողջությունը, նվաստացնել նրա պատիվն ու արժանապատվությունը: Այսպիսով, ինչպես ՀՀ Սահմանադրությունը, այնպես էլ միջազգային իրավական ակտերը մարդուն առանց իր համաձայնության գիտական, բժշկական և այլ փորձերի ենթարկելը որակում են որպես խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի մասնավոր դեպքեր:

գ) մարդու արժանապատվության պաշտպանությունը պետության պարտականությունն է (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված), ընդ որում՝ մարդու արժանապատվության ճանաչումը՝ որպես պետության կողմից պաշտպանվող սահմանադրական արժեք, հանդիսանում է անձի իրավական կարգավիճակը բնութագրող կարևորագույն սահմանադրաիրավական նորմ, և որպես բարձրագույն արժեքի ճանաչման սահմանադրական սկզբունքից բխում են պետության մի շարք պարտականություններ՝ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ճանաչումը, դրանց ապահովումը, երաշխավորումը, պահպանումն ու պաշտպանությունը:

դ) մարդու արժանապատվությունն անձի անձնական ազատության և անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքն է (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված): Այդ իրավունքը պետության կողմից ճանաչված, նրա ֆիզիկական ազատությունն արտահայտող հնարավորություններն են, որն ունի առանցքային նշանակություն: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածում ամրագրված է նշված իրավունքը. «բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար իրենց արժանապատվությամբ և իրավունքներով»,

ե) մարդու արժանապատվության ապահովումը դիտարկվում է որպես յուրաքանչյուրի՝ մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության պաշտպանության իրավունքի սահմանադրական երաշխիք (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդված:

զ) պետությունն երաշխավորում է մարդու արժանապատվությունը օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքի իրացմամբ (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդված), որի հիման վրա է կառուցված մարդու, մարդու և քաղաքացու սահմանադրական կարգավիճակի ամբողջ հայեցակարգը: Փաստորեն, ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխում նախատեսված մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները սահմանված են այս սկզբունքին համապատասխան, իսկ սահմանադրական այս պահանջը վերածվում է ինչպես կոնկրետ իրավունքների, այնպես էլ ողջ համակարգի օրենսդրական կարգավորման գնահատման սահմանադրական չափանիշի:

է) յուրաքանչյուրի կյանքի իրավունքի որպես մարդու արժանապատվության սահմանադրական երաշխիքի ապահովում (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդված): Այն թեպետ Սահմանադրությամբ ընգծված է մահապատժի դատապարտելու կամ ենթարկելու արգելքը, այնուամենայնիվ, կյանքի իրավունքը բովանդակային առումով անհամեմատ լայն է ու ընդգրկուն, և այդ իրավունքը պետությանը պարտավորեցնում է ստանձնելու և կյանքի կոչելու բազմաձևալ այնպիսի միջոցներ, որոնք երաշխիքներ են ստեղծում հասարակությունում կյանքի անվտանգության համար, քանի որ մարդու կյանքի իրավունքը բացարձակ իրավունք է և չի ուղեկցվում որևէ վերապահմամբ:

ը) Սահմանադրական նորմն այն մասին, որ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային և էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք, ինչպես նաև ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի և մշակույթի պահպանման ու զարգացման իրավունք (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 56-րդ, 89-րդ հոդվածներ) կոչված են կանոնակարգելու ազգային փոքրամասնությունների իրավական վիճակը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության կարևոր բաղադրիչ, հանդիսանում է ինչպես ներպետական, այնպես էլ ժամանակակից միջազգային իրավունքի արդիական խնդիրներից մեկը: Ընդ որում, ազգային փոքրամասնությունների և նրանց ներկայացուցիչների իրավունքների պաշտպանությունը ենթադրում է իրավական երաշխիքների երկու հիմնական խմբի առկայություն՝ մարդու հիմնական իրավունքների

իրագործման հնարավորություն՝ առանց որևէ խտրականության, ազգային, կրոնական ու լեզվական ինքնության պահպանության, և զարգացման հնարավորությունների առկայություն:

Միաժամանակ, մարդու արժանապատվության պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ սահմանող և պետության կողմից այդ պահպանողական և պաշտպանիչ գործառույթների իրացումն ապահովող իրավական սկզբունքների և իրավական նորմերի համալիրը.

Անհրաժեշտ է կարևորել սահմանադրական նորմն այն մասին, որ մարդուն կարելի է անձնական ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկելու բոլոր հնարավոր դեպքերը: Անհատի ազատությունը բացարձակ չէ, բացարձակ ազատությունն անխուսափելիորեն կհանգեցնի այլոց իրավունքների և ազատությունների անիրավաչափ սահմանափակմանը: Սահմանադրությունը հնարավոր է համարում մարդուն ազատությունից զրկումը, սակայն այդ դեպքերը պետք է սահմանվեն օրենքով և իրականացվեն օրենքով ամրագրված ընթացակարգերով (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդված):

Ինչ վերաբերում է բնակարանի անձեռնմխելիության սահմանադրական երաշխիքին (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդված), ապա անհրաժեշտ է ընդգծել, որ այն երաշխավորում է մարդու բնակարանային անկախությունը և կարող է միայն սահմանափակվել օրենքով սահմանված դեպքերում և դատական կարգով:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է յուրաքանչյուրի իր կարծիքն ազատ արտահայտելու, տեղեկություններ և գաղափարներ փնտրելու իրավունքների երաշխիքները (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդված): Կարծիքի և տեղեկատվության ազատությունը դասվում է քաղաքակրթության համեմատաբար նոր ձեռքբերումներին: Դրույթն ամրագրում է միմյանց հետ փոխկապվածության և համակարգային միասնության մեջ գտնվող իրավունքները և ազատությունները՝ ուղղված յուրաքանչյուր մարդու հավասար հնարավորությունների զարգացմանը՝ գաղափարների ու կարծիքների

մրցակցության հիման վրա ինքնարտահայտման և մարդկանց միջև հաղորդակցման համար:

Սեփականության իրավունքների և տնտեսական գործունեության ազատությունն ու ազատ տնտեսական մրցակցությունն ապահովող սահմանադրական նորմերը (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 10-րդ, 11-րդ, 59-րդ, 60-րդ հոդվածները) որոնց միջոցով պետությունը երաշխիքներ է ամրագրել յուրաքանչյուրի սեփականության իրավունքի ճանաչման և պաշտպանության համար:

Մարդու արժանապատվության ապահովման հաջորդ կարևոր երաշխիքներն են ը դրա պաշտպանությանն միջնորդավորված ձևով ուղղված և ապահովող իրավական սկզբունքներն ու իրավական նորմերը:

Այսպես, ՀՀ Սահմանադրությունը երաշխավորում է յուրաքանչյուր ոքի՝ քաղաքացու, օտարերկրյա քաղաքացու և քաղաքացիություն չունեցող անձի իրավունքների և ազատությունների պաշտպանությունը (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մաս): Իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորող սահմանադրական նման դրույթը բխում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային հանրահայտ փաստաթղթերի պահանջներից, ինչպիսիք են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան և այլն: Իրավունքների պաշտպանության միջոցների շարքում դատական պաշտպանությունն առանձնահատուկ տեղ է գրավում, քանի որ իրականացվում է իշխանության տարանջատման համակարգում ինքնուրույն և անկախ կարգավիճակ ունեցող մարմնի կողմից: Դատական պաշտպանության իրավունքը բնութագրվում է որպես անձի հիմնական անօտարելի իրավունքներից մեկը և միաժամանակ որպես այլ իրավունքների ու ազատությունների ապահովման միջոց և երաշխիք:

Այնուհետև, յուրաքանչյուրի իրավունքը՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան իր իրավունքների և ազատությունների պաշտպանության գծով միջպետական մարմիններ դիմելու սահմանադրական նորմը (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ

Սահմանադրության 61-րդ հոդվածի 2-րդ մաս): Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, որոնք ընդունվել են միջազգային կազմակերպությունների կողմից, պարտադիր են այդ ակտերին միացած պետությունների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության համար:

Իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով ՀՀ քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև հենց իր՝ Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային կազմակերպություններին դիմելու հնարավորությունը՝ ա) մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների, ինչպես նաև պետության շահերի ապահովման միջազգային երաշխիք է, պաշտպանության լրացուցիչ կառուցակարգ այն դեպքերում, երբ քաղաքացիները սպառում են իրավական պաշտպանության բոլոր ներպետական միջոցները կամ Հայաստանի Հանրապետությունը ցանկանում է միջազգային կառույցներում քննարկման առարկա դարձնել մեկ այլ պետության կողմից իր իրավունքները խախտելու վերաբերյալ հարցերը, բ) բարձրացնում է ՀՀ պետական մարմինների և պաշտոնատար անձանց, հատկապես՝ դատարանների պատասխանատվությունը քաղաքացիական, քրեական և վարչական գործերի քննության և լուծման հարցում, որպեսզի դրանցում տեղ չգտնեն միջազգային իրավական ակտերի դրույթների խախտումներ, գ) նպաստում է ներպետական օրենսդրության կատարելագործմանը, եթե միջազգային կազմակերպությունների վճիռներն ու որոշումներն ընդունվել են ՀՀ նկատմամբ, դ) թույլ է տալիս ՀՀ-ի համար նախադեպեր ստեղծել միջազգային տվյալ կազմակերպության, ասենք՝ Եվրոպական դատարանի կողմից այլ մասնակից պետությունների նկատմամբ նույնանման հարցերով կայացված ակտերով :

Յուրաքանչյուրի իրավունքը իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմելու, տեղեկություններ ստանալու, դիմումներ կամ հանրագիր ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու սահմանադրական նորմը (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 52-րդ, 53-րդ հոդվածներ): ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ յուրաքանչյուր մարդու ինչպես

անձնական, այնպես էլ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով հանրային մարմիններին (պետական և տեղական ինքնակառավարման) դիմումներ և առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետներում պատշաճ պատասխան ստանալու իրավունքը կարելի է դասել մարդու կարևորագույն իրավունքների շարքը, որքանով այդ իրավունքի իրացումը յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռում ոչ միայն հետամուտ լինել սեփական շահին, այլև մասնակից դառնալ հասարակական կարևորագույն հիմնախնդիրների լուծմանը:

Պետական իշխանության մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց անօրինական գործողություններով պատճառված վնասի փոխհատուցման յուրաքանչյուրի իրավունքի սահմանադրական երաշխիքը (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդված): Սահմանադրությամբ շեշտված է անձին պատճառված վնասի հատուցման անհրաժեշտությունը, բնականաբար, անձի յուրաքանչյուր իրավունքի խախտմամբ պատճառված վնասը ենթակա է հատուցման, այս դեպքում պարզապես Սահմանադրությամբ ընդգծվում է այդ իրավունքի առավել պաշտպանված ու երաշխավորված լինելու անհրաժեշտությունը:

Անգամ (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած) ՀՀ Սահմանադրության 76-րդ հոդվածը, որտեղ ամրագրված են իրավունքների և ազատությունների սահմանափակումներ դրանով իսկ հանդերձ կայուն երաշխիքներ է ապահովում սահմանադրությամբ ամրագրված մարդու արժանապատվությանը վերաբերող մյուս իրավունքների իրացման տեսանկյունից:

Միաժամանակ, այդ երաշխիքների միջոցով են կոնկրետացվում են մարդու արժանապատվության ապահովման սահմանադրական այլ երաշխիքները: Մասնավորապես, դա կարող է վերաբերել մարդու արժանապատվության ապահովման դատավարական երաշխիքներին: Այսպես, օրինակ, ՀՀ Սահմանադրության (2015 թվականի դեկտեմբերի 22-ին ուժի մեջ) 26-րդ, 27-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածների համատեքստում մարդու արժանապատվության ապահովման դատավարական երաշխիքներից առանձնակի նշանակություն ունի 27-րդ հոդվածը, որը հայ սահմանադրական դոկտրինալ մոտեցումներում և պրակտիկայում առաջին

անգամ սպառիչ կերպով ամրագրել է անձին ազատությունից զրկելու հիմքերը: Իսկ ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածը ապահովելով 27-րդ հոդվածի տրամաբանական շարունակությունը, սահմանել է, որ՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Նույնը վերաբերում է Սահմանադրության 61-րդ հոդվածին, որն իր բովանդակությամբ ամրագրում է մարդու իրավունքների պաշտպանության ներպետական և միջազգային իրավական ինստիտուցիոնալ համակարգերը:

Իրավական տրամաբանության ու դրա շարունակականության ապահովման խնդրի շրջանակում, անհրաժեշտ է կարևորել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու սահմանադրական իրավունքի ամրագրումը, երբ սպառվում են ներպետական բոլոր ընթացակարգերը:

Սահմանադրության 63-րդ հոդվածը, ըստ էության, վերարտադրում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմնական դրույթները և սահմանում մարդու կարևորագույն իրավունքներից մեկի՝ արդարացի դատական քննության իրավունքի իրականացման երաշխիքները:

Դատավարական երաշխիքների տեսանկյունից արդար դատաքննության իրականացումն առաջին հերթին նշանակում է մարդու իրավունքների պաշտպանությունն անաչառ դատարանի կողմից՝ կողմերի հավասարությունը և ազատությունն ապահովող դատավարական երաշխիքներով: Այլ կերպ ասած՝ արդար դատաքննությունը կազմում է արդարադատության բովանդակությունը: Կոնվենցիան սահմանում է արդարացի դատական քննության իրավունքի այն նվազագույն երաշխիքները, որոնց պահպանումը պարտադիր է ազգային պետությունների դատարանների կողմից: Ընդ որում, անդամ երկրները կաշկանդված չեն 6-րդ հոդվածի տեքստով և կարող են արդարացի դատաքննության իրավունքը հարստացնելու այլ տարրերով:

Այս կապակցությամբ, ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը բովանդակային առումով ավելի հստակ դատավարական երաշխիքներ է պարունակում արդար և անկողմնակալ դատաքննություն իրականացնելու համար:

Այսպիսով, մեր կարծիքով, մարդու արժանապատվության իրացումն երաշխավորելու համար անբաժանելի տարր են հանդիսանում հետևյալ իրավունքների նվազագույն ցանկը. կյանքի իրավունքը, ազատության իրավունքը, արժանապատվության և դրա պաշտպանության իրավունքը, անվտանգության և անձեռնմխելիության իրավունքը, իրավահավասարությունը, բռնության, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքը պետական մարմինների կողմից կամայական վերաբերմունքից պաշտպանությունը, հարկադիր աշխատանքի արգելքը, առանց անձի համաձայնության բժշկական և գիտական փորձերի արգելքը, ազատությունից զրկված անձանց՝ մարդկային պայմանների իրավունքը, անձի ինքնավարությունը, անմեղության կանխավարկածը, անձնական կյանքի հարգման և պաշտպանության իրավունքը, իրավական պաշտպանության իրավունքը¹⁴²:

Միաժամանակ, անհրաժեշտ է նշել, որ մարդու արժանապատվության ապահովման հիշատակված երաշխիքներից են ածանցվում Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի դիրքորոշումները և մեկնաբանությունները:

Այսպես, ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է մարդու արժանապատվության պաշտպանության երաշխիքներին:

Սահմանադրական դատարանն իր 2006 թվականի ՍԴՈ-618 որոշմամբ արձանագրել է, որ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելումը

¹⁴² Հոկտեմբերի 25-ին Երևանյան միջազգային 19-րդ խորհրդաժողովի շրջանակներում ձևավորված վիրտուալ սահմանադրական դատարանը խորհրդաժողովի աշխատանքների սկզբում մասնակիցներին բաժանել էր հարցաթերթիկներ: Թվարկված է եղել 36 իրավունք, որոնցից բոլորի վերաբերյալ դրական արձագանքներ են եղել: Ի դեպ, ցանկից դուրս մասնակիցների կողմից ավելացվել է ևս երկու իրավունք, որոնք նույնպես կարևոր են արժանապատվության իրացումը երաշխավորելու համար: Մասնավորապես՝ շեշտվել է սեփականության իրավունքը և արժանապատիվ կյանքի իրավունքը: Ապա ներկայացրեց վիրտուալ սահմանադրական դատարանի կողմից ընդունված՝ անձի արժանապատվության իրացման համար անհրաժեշտ իրավունքների նվազագույն ցանկը:

բխում է ՀՀ սահմանադրության նպատակներից¹⁴³: Իսկ 2010 թվականի ՍԴՈ-913 որոշման մեջ Սահմանադրական դատարանը արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, ըստ որի. մի կողմից՝ մարդու արժանապատվության հարգման և պաշտպանության, մյուս կողմից՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նրա սահմանադրական իրավունքների ներդաշնակումը, անհատի, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների, գերակա է հասարակական շահի նկատմամբ: Միաժամանակ, արձանագրվել է, որ մարդու և քաղաքացու իրավական կարգավիճակի կարևորագույն բաղադրիչը նրա արժանապատվությունն է, որն իր սահմանադրաիրավական բովանդակությամբ առաջնային նշանակություն ունի մարդու և քաղաքացու հիմնական բոլոր իրավունքների ու ազատությունների ազատ, անարգել ու երաշխավորված իրականացման համար, որն նաև ենթադրում է ինչպես սահմանադրորեն թույլատրելի շրջանակներում անձի կողմից որոշակի գործողությունների կատարում և կամահայտնության դրսևորում, այնպես էլ դրանք պաշտպանելու պետության համարժեք պարտականություն¹⁴⁴:

Սահմանադրական դատարանը 2011 թվականի ՍԴՈ-935 որոշմամբ փաստել է, որ գործնականում առաջին հերթին հանցագործության հետևանքով տուժած անձի իրավունքների ու արժանապատվության խախտում պետք է դիտարկվի այն, որ օրենսդրության մեջ բացակայում է նոր կամ նոր երևան եկած հանգամանքների հիմքով քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում կայացված՝ գործի վարույթը կարճելու, քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չիրականացնելու մասին վերջնական որոշումների վերանայման մեխանիզմը: Զարգացնելով այդ միտքը, Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ եթե տուժողի համար արդարադատությունը մատչելի չէ, հետևաբար, այն խախտում է դատարանի առջև հավասարության սկզբունքը, դրանով իսկ իմաստազրկում արդարադատության բուն գաղափարը¹⁴⁵:

¹⁴³ Տես՝ <http://www.concourt.am/> 14 փետրվարի 2006 թ. ՍԴՈ-618:

¹⁴⁴ Տես՝ <http://www.concourt.am/> 14 սեպտեմբերի 2010 թ. ՍԴՈ-913:

¹⁴⁵ Տես՝ <http://www.concourt.am/> 4 փետրվարի 2011 թ. ՍԴՈ-935:

2011 թվականի ՍԴՈ-997 որոշման մեջ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցին, Սահմանադրական դատարանը արձանագրել է, որ զրպարտության ապաքրեականացման վերաբերյալ թե՛ Հայաստանի Հանրապետությունում և թե՛ եվրոպական մի շարք այլ երկրներում վերջին տարիներին կատարված օրենսդրական փոփոխությունների ու նոր իրավակարգավորման հիմնական տրամաբանությունը հենվում է ոչ թե մեղավորության կանխավարկածի վրա (նախատեսել պատիժ՝ արարքի համար), այլ անմեղության կանխավարկածի վրա (երաշխավորել անձի անմեղությունը՝ վերականգնելով նրա պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավը): Երբ անձի պատվի և արժանապատվության արատավորումը հետևանք է դիտավորության, չարամտորեն իրականացված գործողության, ունի շարունակական բնույթ ու առնչվում է լրատվամիջոցին, ապա խնդիրը տեղափոխվում է նաև իրավահարաբերությունների կարգավորման այլ հարթություն, և հարցը կարող է քննության առարկա դառնալ ընդհուպ «Ձանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման տեսանկյունից¹⁴⁶:

Սահմանադրական դատարանը բացահայտելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը ընդգծել է, որ մարդու արժանապատվության առանցքային բաղադրատարրերից մեկը, ի թիվս այլնի, հանդիսանում է անհատական հատկանիշներով պայմանավորված բարոյական տառապանքներից զերծ մնալը, ինչպես նաև խոշտանգումները, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը չեն կարող չուղեկցվել հոգեկան և բարոյական տառապանքների պատճառամբ, որոնք կարող են նույնիսկ ավելին լինել, քան դրանց հետևանքով պատճառված հնարավոր ֆիզիկական (մարմնական) կամ նյութական վնասը, և առանց որոնց ողջամիտ և արդարացի փոխհատուցման հնարավոր չէ ամբողջությամբ հատուցել անձին և նրա արժանապատվությանը պատճառված վնասը: Հակառակ դեպքում հնարավոր չի լինի երաշխավորել Սահմանադրությամբ որպես բարձրագույն

¹⁴⁶ Տես՝ <http://www.concourt.am/> 15 նոյեմբերի 2011 թ. ՍԴՈ-997:

արժեքներ հռչակված մարդու, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը¹⁴⁷:

Այսպիսով, Սահմանադրության նորմերի և Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված դիրքորոշումներում ամրագրված դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ.

1) մարդու արժանապատվությունը հանդես է գալիս պետության և հասարակության կողմից պահպանվող ու պաշտպանվող բարձրագույն սոցիալական արժեք միայն այն դեպքում, երբ մարդն ունի իրական հնարավորություն գործելու իր արժանապատվությանը համապատասխան և պաշտպանելու իր իրավունքները որպես հարգման ու պաշտպանության ենթակա տարր,

2) մարդու արժանապատվության ապահովումն այն անհրաժեշտ պայմանն է, որի պարագայում երաշխավորվում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների արդյունավետ իրացումը,

3) Հայաստանի Հանրապետությունում անձի արժանապատվության պաշտպանության իրավունքի գիտակցումը սահմանադրականության կարևորագույն երաշխիքներից է, և քանի դեռ մարդու արժանապատվության ապահովման հիմնահարցերը սահմանադրական կարգավորումներում կրում են հռչակագրային բնույթ, չի կարող երաշխավորվել Սահմանադրության գերակայությունը և մարդու իրավունքների պաշտպանության գործուն կառուցակարգերի առկայությունը:

¹⁴⁷ Տե՛ս՝ <http://www.concourt.am/> 5 նոյեմբերի 2013 թ. ՍԴՈ-1121:

1. «Անձի արժանապատվություն» հասկացության իրավական բովանդակության և կառուցվածքի վերլուծությունը բացահայտում է երկու էական տարրերի առկայություն, դրանք են՝ անփոխարինելին կամ հաստատունը և փոխարինելին կամ փոփոխվողը:

Բացի այդ, մարդու արժանապատվության կառուցվածքում կարևոր նշանակություն ունեցող տարրերից կարելի է առանձնացնել այդ հասկացության դրսևորման *օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերը*:

Անձի արժանապատվության սուբյեկտիվ և օբյեկտիվ կողմերն ունեն տարբերություններ, և դրանցից յուրաքանչյուրն իր կառուցվածքով համապատասխանում է անձի արժանապատվության իրավական բովանդակության վերոնշյալ անփոփոխելի և փոփոխելի տարրերի համակցությանը:

Այսպիսով, անձի արժանապատվությունը բարդ և միաժամանակ բազմակողմ հասկացություն է, որի բովանդակությունը և կառուցվածքը հնարավոր է բացահայտել և ներկայացնել նաև նրա տարբեր կողմերի ուսումնասիրության միջոցով:

Դրանցից են.

ա) ընդհանուր և մասնավոր կենսաբանականը,

բ) անհատական անձնականը (անձի արժանապատվություն),

գ) սոցիալականը (որոշակի սոցիալական խմբին կամ ժամանակավոր (իրավիճակային) սոցիումին պատկանելը),

դ) գենդերայինը (սեռային՝ կնոջ արժանապատվություն, տղամարդու արժանապատվություն),

ե) ազգայինը, կրոնականը, ռասսայականը (անձի արժանապատվություն՝ ըստ ազգի, կրոնի և ռասսայական պատկանելության)

զ) տարիքայինը:

«Մարդու արժանապատվություն» և «անձի արժանապատվություն» հասկացությունների առկա բնորոշումների կառուցվածքային, համակարգային, տրամաբանական և իրավալեզվաբանական վերլուծությունը, ինչպես նաև «անձի արժանապատվություն» հասկացության ընկալման և մեկնաբանման խնդրի տարբեր

կողմերը, «մարդու արժանապատվության» պաշտպանության, այդ թվում պատվի և արժանապատվության վերաբերյալ գիտական հետազոտությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել նրա էական հատկանիշների համակարգը:

Աձի արժանապատվությունը կարելի է բնորոշել՝ որպես մարդկային հատկանիշ, իրավագիտականության և մարդկային մշակույթի բնականոն և սոցիալապես պայմանավորված արժեքային համակարգ և միաժամանակ, մարդու իրավունքների և ազատությունների հենք, որն արտահայտվում է արժեքային-աշխարհայացքային գնահատականներով, հոգեբանական զգացումներով, և պայմանավորված են անձի ինքնաընկալումով, ինքնարտահայտմամբ և սեփական անձի հանդեպ այլ անձանց վերաբերմունքի բարոյահոգեբանական ընկալմամբ:

Մարդու արժանապատվության արտահայտման, դրսևորման և պաշտպանության տարբեր ասպեկտների, ինչպես նաև մարդու արժանապատվության իրավունքի իրականացման ընկալման և մեկնաբանման խնդրի, այդ իրավունքի պաշտպանության, այդ թվում պատվի և արժանապատվության գործերի վերաբերյալ գիտական հետազոտությունների արդյունքների կառուցվածքային-համակարգային, տրամաբանական և իրավալեզվաբանական վերլուծությունը հնարավորություն է տալիս անձի արժանապատվության (մարդու արժանապատվության) պահպանումը, իրականացումը, կիրառումը և կիրարկումը բնորոշել որպես կոնկրետ անձի (որպես կրողի և դրսևորողի) սեփական արժանապատվության պաշտպանության (պետության և հասարակության կողմից որպես սոցիալական նշանակություն ունեցող, պահպանվող և պաշտպանվող արժեք) և դրսևորման, արտահայտման, պաշտպանության և կյանքի կոչելու այլ մեխանիզմի իրական հնարավորությունների տիրապետում, այդ թվում նաև այլ անձանց հետ հարաբերություններում, դրա հետ կապված իրավունքների ամբողջություն, ինչպես նաև առօրյա ընթացիկ անմիջական և իրավիճակային մարմնավորում:

2. արժանապատվության ու պատվի՝ որպես իրավական ու բարոյական արժեքների վերաբերյալ բերված դատողությունների ու դրանց իրավական կարգավորումների համադրված վերլուծությունների համատեքստում անհրաժեշտ է վեր հանել հետևյալը.

1. եթե իրավական նորմերը սահմանվում են պետության կողմից, ապա բարոյական նորմերը ծագում են տարերայնորեն,

2. եթե իրավական նորմերն իրենց ամրագրումն են ստանում գրավոր աղբյուրներում, ապա բարոյական նորմերը գոյություն ունեն մարդկանց գիտակցության մեջ,

3. եթե իրավական նորմերի իրացումն ապահովված է պետական հարկադրանքի հնարավորությամբ, ապա բարոյական նորմերը կյանքի են կոչվում մարդկանց կամարտահայտության ու հասարակական կարծիքի ուժով,

4. վերջապես՝ եթե իրավական կարգավորման ոլորտն այն հարաբերություններն են, որոնք գտնվում են պետական վերահսկողության ներքո, ապա բարոյական կարգավորման ոլորտները պետությանն ենթակա չեն:

Այնուամենայնիվ, իրավունքի ու բարոյականության սերտ կապերն ու փոխգործողությունները մեծապես նպաստում են սոցիալական այդ երկու կարգավորիչների՝ արժանապատվության ու պատվի դերի կարևորմանը, դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը, հասարակական հարաբերությունների կայունացմանն ու ամրապնդմանը:

3. Անձի արժանապատվության վերաբերյալ գիտական հետազոտությունների ուսումնասիրությունը վկայում է, որ այդ հասկացությունը բնորոշող իրավական, սոցիալ-փիլիսոփայական հատկանիշներից առավել էականները հետևյալներն են.

1. Անձի արժանապատվությունը բնածին է, այն առաջանում է մարդու ծնվելու պահից: Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ մինչև մարդու ծնվելը՝ պտղի մոտ, անձի արժանապատվության իրավունքի տեսական հարցը դեռևս իր համարժեք լուծումը չի ստացել, անգամ այդ տեսակետի կողմնակիցներն ունեն տարաձայնություններ պտղի /էմբրիոնի հասակի գնահատման հարցում, որից էլ հետևում է այդ իրավունքը¹⁴⁸:

Ընդ որում, ինչպես համարում են իրավագետներ Վ.Ա. Կարտաշևը և Ե.Ա.Լուկաշևան, բնականների թվին են պատկանում ոչ թե մարդու բոլոր իրավունքները, այլ, առաջին հերթին, միայն ունիվերսալները, կյանքի իրավունքը,

¹⁴⁸ Տես՝ Топорнин Б.Н. Указ. соч.-с.23:Богораз Л.И. Неотъемлемые права и свободы человека // Естественные права человека: Сб. матер. семинара Московской Хельсинской группы Права человека (Чистополь, июнь 1992). Вып. 4/Под ред. Л.И.Богораз.-М., 1993-с. 95.

քաղաքացիության իրավունքը, արժանապատվության իրավունքը, ազատության ու անձնական անձեռնմխելիության իրավունքը և այլ իրավունքներ:

Սահմանադրական իրավունքն ու դոկտրինան համարում են, որ բնածին իրավունքներն արդեն իսկ ըստ բնորոշման «մեկնվում են ոչ թե որպես ինքնին կամ ձեռքբերովի, այլ որպես բնածին և, պայմանականորեն արտահայտելով, նախապետական: Դրանք պատկանում են մարդուն ի ծնե և ծննդյան իրավունքով: Այդ իրավունքները շնորհված չեն իշխանության կողմից, ծագում են նրանցից անկախ և առանց նրա համաձայնության և չեն կարող հետ վերցվել: Պետությունը պարտավոր է ճանաչել այդ իրավունքները, ամրագրել դրանք սահմանադրության մեջ և պաշտպանել հնարավոր բոլոր միջոցներով: Դա իրեն ժողովրդավարական համարող յուրաքանչյուր պետության սրբազան պարտքն է: Բնական, անբաժանելի, անօտարելի իրավունքները սկսեցին ամբողջապես նույնանալ հիմնական, հիմնարար իրավունքների հետ»¹⁴⁹:

2. Անձի արժանապատվությունը որոշակիացված է մշակութային և սոցիալական առումներով, այսինքն նրա բովանդակությունը, ինչպես նաև պահպանման և պաշտպանության միջոցները կախված են հասարակության կյանքի կոնկրետ պատմական պայմաններից:

3. Անձի արժանապատվությունը չի վերանում մարդու մահվանից հետո, այլ ընդամենը, անձի արժանապատվության պաշտպանության հետ կապված իրավասությունները փոխակերպվում են և փոխանցվում նրա հարազատներին և պետությանը, թեև իր այդ նոր որակով այն ևս մշտական չէ և ունի աստիճանաբար վերանալու միտում:

4. Անձի արժանապատվությունն անքակտելի է և անօտարելի: Մարդու արժանապատվությունը չի կարող օտարվել, քանի որ այն անձի բնական իրավունքների բաղկացուցիչ ու անքակտելի մասն է կազմում: Հետևաբար անձի արժանապատվությունն անփոխանցելի է: Այն չի կարող որևէ կերպ փոխանցվել որևէ մեկին կամ փոխանակվել, վաճառվել, ժառանգվել, կամ և այլ կերպ օտարվել մարդկային անհատականությունից:

¹⁴⁹ Տես՝ Ա.Երիցյան, Մարդու իրավունքները. պատմատեսական, իրավափիլիսոփայական և իրավաքաղաքական հիմնախնդիրները, Երևան, 2011թ. էջ 20:

5. Անձի արժանապատվության երաշխիքները ներառում են պետականության տարրեր, այսպես, պետությունն անվերապահորեն ընդունում է անձի արժանապատվությունը, ուստի և պահպանում ու երաշխավորում դրա պաշտպանությունը:

6. Անձի արժանապատվությունը հանդես է գալիս որպես սոցիալական փոխհարաբերություններում ինքնագիտակցման ու ինքնատիրապետման արժեքային հիմք, ընդ որում, մի կողմից, մարդը գիտակցում է ինքն իրեն որպես արժեք և, լինելով եզակի ու անկրկնելի, կառուցում է իր վարքագիծը ու վերահսկում իր գործողությունները այնպես, որ չոտնահարի այլ մարդկանց արժանապատվությունը, իսկ, մյուս կողմից սեփական անձի արժանապատվության՝ որպես ինքնագիտակցության ձևի վրա է հիմնվում և կառուցվում ինքնահարգանքը, անհատի պահանջը սեփական անձի հանդեպ:

7. Անձի արժանապատվությունն ունի համընդհանուր բնույթ, այսինքն այն պետության կողմից դիտարկվում է ոչ թե ընդհանրության մեջ, այլ առանձին-աձանձին՝ անհատապես, և այդ իմաստով անձի արժանապատվությունը հիմք է հանդիսանում ազատության, արդարության և համընդհանուր խաղաղության համար:

8. Անձի արժանապատվությունն ունի երկակի նշանակություն միաժամանակ հանդես գալով ոչ միայն որպես հասարակական միջանձնային հարաբերությունների գործոն այլև մարդու անձնական կյանքի ոլորտի գործոն:

9. Անձի արժանապատվության պաշտպանության իրավական միջոցների անհրաժեշտ, սակայն ոչ բավարար լինելն արտահայտվում է նրանում, որ անձի արժանապատվության հանդեպ ոտնձգությունը ոչ միշտ է հնարավոր կանխարգելվել վարչաիրավական, քրեաիրավական կամ քաղաքացիաիրավական գործիքակազմով, և հաճախ մարդու արժանապատվության կարգավորիչ, և երաշխիք են հանդիսանում բարոյական նորմերը (այդ հասկացության կառուցվածքի ոչ միատարր բնույթից ելնելով):

10. Անձի արժանապատվության «շարժունակությունը» կամ «փոփոխականությունը» կապված են այն բանի հետ, որ անձի կողմից սեփական

մարդկային արժանապատվության հոգեբանական ընկալումը կարող է փոխվել կրթական մակարդակի բարձրացման, կյանքի փորձի կուտակման հետ:

Անդրադառնալով այդ հատկանիշների համակարգային վերլուծությանը, անհրաժեշտ է կարևորել այն, որ եթե պատիվն ու արժանապատվությունն առաջանում են միաժամանակ՝ մարդու ծնվելու պահին, և դրանց գոյությունը ժամկետային սահմանափակում չունի, ապա անձի պատվի և արժանապատվության իրավունքը կարող է պաշտպանվել նաև նրա մահվանից հետո:

Միաժամանակ, պետք է նկատել, որ անձի արժանապատվությունն անխզելիորեն կապված է մարդու ունակության հետ՝ գնահատելու և համեմատելու սեփական արարքները հասարակության պահանջների հետ, ճնշելու սեփական ոչ իրավաչափ ձգտումները և մտադրությունները, որոնց իրականացումը կարող է գնահատվել որպես անպատվություն: Այն առավելապես ընկալվում է որպես համեմատաբար անկախ, անձնային, անհատական գործոն, որը գոյություն ունի օբյեկտիվորեն՝ հասարակության և պետության շրջանակից դուրս, սակայն մյուս կողմից, կախված է կոնկրետ հասարակության զարգացման մակարդակից, սոցիալական, տնտեսական, մշակութային, քաղաքական պայմաններից՝ նրա պատմական զարգացման կոնկրետ փուլում:

4. Անձի արժանապատվությունը կարելի է դիտարկել որպես հասարակական կյանքում մարդկային գործոնի բաղկացուցիչ մաս, անձի սոցիալ-իրավական բնութագրի, նրա սուբյեկտիվ (անձնական) իրավունքների, պարտականությունների, ազատությունների կարևոր բաղադրիչ, մարդու և հասարակության, մարդու և պետության, մարդկանց միջանձնային տարբեր հարաբերությունները կարգավորող գործիք, իրավագիտակցության ու իրավական անհրաժեշտ ֆենոմեն, սոցիալական կապերի համակարգ, մարդկանց փոխհարաբերությունների համակարգ, որը բարդ և բազմակողմ իրավական գործիքակազմի ազդեցության առարկա է, յուրաքանչյուր մարդու սոցիալական արժեքի ընդունման արտացոլումն է որպես ժամանակակից հասարակության հիմնարար օրինաչափություն, սոցիալ-բարոյագիտական հատկությունների ամբողջություն:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ անհրաժեշտ է նշել հետևյալը.

ա) մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես սահմանադրական իրավունքների հիմք և նպատակ, դրանց սկզբունք, որին համապատասխան պետք է կառուցվի մարդու սահմանադրական իրավունքների ամբողջ համակարգը, պետք է ամրագրվեն պետության, իշխանության ողջ համակարգի՝ անհատի արժանապատվությունն ապահովելու նկատմամբ պարտականությունները,

բ) մարդու արժանապատվության ապահովումը պետության պարտականությունն է՝ անկախ այդ իրավունքի կրողների պահանջներից: Պետությունն այդ առումով պարտավոր է պաշտպանել անձի արժանապատվությունն այլ մասնավոր անձանց տարաբնույթ ոտնձգություններից, անհրաժեշտության դեպքում անգամ քրեական իրավունքին բնորոշ ներգործության միջոցներով,

գ) արժանապատվության պաշտպանությունն ենթադրում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովելու տվյալ սոցիալական միջավայրում մարդուն արժանավայել նվազագույն նյութական կենսապայմաններ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ ժամանակակից պետությունում մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես սոցիալապես նշանակալի, պետության ու հասարակության կողմից պահպանվող և պաշտպանվող արժեք միայն այն դեպքում, երբ մարդն ունի իր արժանապատվության հետ ներդաշնակության մեջ գործելու իրական հնարավորություն, այն կյանքում իրականացնելով որպես անձեռնմխելի և հարգանքի ու պաշտպանության ենթակա նրա անձի անբաժանելի որակ,

դ) մարդու արժանապատվությունը հանդես է գալիս որպես մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգի արժեքային հիմքը, ընդ որում, մարդու արժանապատվության իրավունքի նկատմամբ մարդու կյանքի իրավունքը հանդիսանում է անհրաժեշտ պայման, մարդու արժանապատվության իրավունքի իրացման հնարավորության երաշխիք,

ե) մարդու արժանապատվության հասկացության արժեքային ներուժը հանդիսանում է հետևանքն այն բանի, որ սահմանադրությունը՝ մարդուն, նրա իրավունքները և ազատությունները օժտում է բարձրագույն արժեքի նշանակությամբ, և այդ իմաստով այն առանցքային նշանակություն է ձեռք բերում սահմանադրական իրավակարգավորումների արժեքանության և մեթոդաբանության տեսանկյունից,

զ) մարդու արժանապատվության ճանաչումը՝ որպես համապարփակ և բացարձակ, պետության կողմից պաշտպանվող սահմանադրական արժեք, հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում անձի իրավական կարգավիճակի կարևորագույն բնութագրիչը, որով պայմանավորվում է օրենքների և այլ իրավական ակտերի, ինչպես նաև իրավակիրառման բովանդակության կանխորոշիչ լինելու դրա հատկությունը:

է) անհատի արժանապատվությունը հանդես է գալիս որպես մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների և դրանց պահպանության և պաշտպանության սահմանադրական համակարգաստեղծ տարր, այն միաժամանակ առաջնային և անհրաժեշտ է մարդու այլ հիմնական իրավունքների պահպանման և պաշտպանության համար:

